

ՎԵՆԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԼՆԴԿԱՍՏԱՆ

ԺԱՄԱՆՈՒՄ ԴԵԼԷԻ

Նոյեմբերի 15-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 9.30-ին, 8 ժամվա խաղաղ և հանգիստ թուրքից հետո, էյր Ինդիա ընկերության ինքնաթիռով, Կահիրեից Դելիի Փալամ օդանավակայանն է ժամանում Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ զավազանակիր հոգեշնորհ Տ. Արսեն Վարդապետ Բերբերյանի:

Վեհափառ Հայրապետի սիրալիր հրավերով, նոյեմբերի 13-ին, շորեքշաբթի, արդեն իսկ Դելիի է ժամանել Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը:

Նոյեմբերի 11-ին Դելիի էին ժամանել Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և «էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիտյանը, որպես Նորին Ս. Օծուխյան շքախմբի անդամներ, Հնդկաստան ուղևորության ժամանակ:

Հայոց Հայրապետը Հնդկաստան է այցելում եղբարական հրավերովը Հնդկաստանի և Արևելքի Մալաբար բուլբ Եկեղեցու պետ Նորին Արթուրյուն Տ. Բասիլիոս Բ Գևարգես Կաթողիկոսի:

Վեհափառ Հայրապետը իր ուղևորության ժամանակ կայցելի նաև Կալկաթայի, Բոմբեյի և Մադրասի հայ եկեղեցիներն ու համայնքները, որպես մեծարելի և թանկագին Հյուրը Հնդկաստանի հայության:

Պատմության մեջ առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ոտք է դնում Հնդկաց աշխարհի հյուրընկալ հողի վրա:

Նորին Ս. Օծուխյան շնորհաբեր այս այցելության կապակցությամբ, կազմվել է Հընդկաստանի հայությունը ներկայացնող ընդունելության կենտրոնական հանձնախումբ հետևյալ կազմով. հոգեշնորհ Տ. Դավիթ վարդապետ Սահակյան (նախագահ), պր. պր. Պետրոս Ալեքսյան, Նևտոն Բարսեղյան, Արամայիս Ադամյան, Հովհաննես Միքայելյան, Հայկ Նաճարյան, Մարգար Մարգարյան, Մկրտում Հարությունյան, Կարո Մարտին, Ասատուր Կյուզելյան, տիկին Մարթա Կարապետյան, տիկին Աննա Խաչատուրյան, պր. Սամվել Ավետյան և պր. Ալեքսան Դուկասյան:

Նոյեմբերի 10-ին, երկուշաբթի օրը, արդեն Դելիի են ժամանել ընդունելության կենտրոնական հանձնաժողովի անդամները՝ հոգեշնորհ Տ. Դավիթ վարդապետ Սահակյան, պր. Պետրոս Ալեքսյան, պր. Կարապետ Մարտիրոսյան (Կարո Մարտին), պր. Ասատուր Կյուզելյան, տիկին Մարթա Գրիգորյան, տիկին Մարթա Կարապետյան, արժանապատիվ Տ. Մաշտոց քահանա թյուֆենբեյան, տիկին Նվարդ Բարսեղյան:

Ժամը 9.30-ին ինքնաթիռը վայրէջք է կատարում:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան են եկել, սրբազան

պատրիարք հոր գլխավորութեամբ, շքախմբի անդամները, ընդունելութեան կենտրոնական հանձնախմբի, կազմակերպութեաններին, համայնքների ներկայացուցիչներ, բույր կենդանիների հոգևոր պետեր, թղթակիցներ, մայրաքաղաքում բնակվող Մալաբար Եկեղեցու բազմահազար հավատացյալներ:

Հայոց Հայրապետին պաշտոնապես դիմավորում և բարի գալուստ է մաղթում Հնդկաստանի կենտրոնական կառավարութեան մինիստր պր. Ա. Մ. Թոմասը:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում է նաև սովետական դեսպանի տեղակալ Կլիմենկոն:

Վեհափառ Հայրապետը ողջագործվում է սրբազան պատրիարք հոր, Տ. Կոմիտաս եպիսկոպոսի և բոլոր ներկաների հետ:

Ընդունելութեան հանձնաժողովի նախագահ հոգեշնորհ Տ. Դավիթ վարդապետը արծաթյա ափսեի մեջ մատուցում է Հնդկաստանի աղնու հացը Հայոց Հայրապետին՝ օրհնելու համար:

Կառավարական մինիստր Ա. Մ. Թոմասը, հնդկական սովորութեան համաձայն, գեղեցիկ ծաղիկ մանյակ է անցկացնում Վեհափառ Հայրապետի և հոգևորականների պարանոցներին, սրտազին ծափահարութեաններին և ուրախութեան բացականչություններին:

Նորին Ս. Օծութեանը հանդիսավորութեամբ առաջնորդվում է օգանակակալանի ընդունելութեան դահլիճը, որտեղ հավաքված բազմությունը ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետին:

Մալաբար Եկեղեցու հավատացյալները աջահամբույրով բարի գալուստ են մաղթում Հայոց Հայրապետին:

Նորին Ս. Օծութեանը օրհնում է բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնում անկեղծ և ջերմ ընդունելութեան համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Աշոկա հյուրանոցը, ուր իրեն և սրբազան պատրիարք հոր հատկացվում են առանձին հարկաբաժիններ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԾԱՂԿԵՊՍԱԿ Է ՋԵՏԵՂՈՒՄ ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻԻ ՀՈՒՇԱՎԱՅՐՈՒՄ

Նոյեմբերի 15-ին, ուրբաթ, ժամը 11.30-ին, Հայոց Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և իր շքախմբի անդամների և Հնդկաստանի կառավարութեան ներկայացուցիչների ուղեկցութեամբ, այցելում է Նոր Դելիում հնդիկ մեծ մտածող և Հնդկաստանի ազգային ազատագրական շարժման ղեկավար Մահաթմա Գանդիի հուշավայրը:

Նոր Դելիի հարավ-արևելքում, հին մայրաքաղաքի սահմանի մոտ, ընդարձակ կանաչապատ դաշտի գրկում, փարթամ ծառերի ստվերների ներքո, տարածվում է Մահաթմա Գանդիի Հնդկական ճարտարապետական ուժով կառուցված, պարսպապատ, բերդանման, բացօդյա հուշարձանը:

Հայ Եկեղեցու պատգամավորությունը, ըստ տեղական սովորութեան ոտաբոբիկ, առաջնորդվում է դեպի հուշավայր դաշտի կենտրոնը, ուր կանգնած է սև գրանիտյա մի մեծածավալ քար, որի վրա Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ է զետեղում:

Հուշավայրի վեհությունը և խաղաղությունը տպավորիչ են, թելադրական:

«Ո՛հ, Աստված իմ...» հուշաքարի վրա, հնդկերեն լեզվով, արձանագրված են Մահաթմա Գանդիի սպանության բոպեին արտասանած այս վերջին խոսքերը:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ

Նոյեմբերի 15-ին, ուրբաթ, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ իր շքախմբի, այցելում է Դելիում սովետական դեսպանատունը, ուր ընդունվում է դեսպանի տեղակալ Կլիմենկոյի և պաշտոնյաների կողմից, հարգալիր մեծարանքով:

Ամենայն Հայոց Հայրապետի պատվին տրվում է թելապետ, որն անցնում է ջերմ մթնոլորտում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՅԵԼՈՒՄ Է ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ԴՈՎՏ. ՈՒՂԿԱԿՐԻՇՆԱՅԻՆ

Նոյեմբերի 15-ին, ուրբաթ, հետմիջօրի ժամը 5.15-ին, Հայոց Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքի, Տ. Կոմիտաս եպիսկոպոսի, Տ. Դավիթ և Տ. Արսեն վարդապետների, Ա. Հատիտյանի, Կարո Մարտինի և Ա. Կյուզելյանի, Նոր Դելիի կառավարական պալատում, այցելում է Հնդկաստանի Հանրապետության նախագահ նորին Վսեմութեանը զուգ. Ռադհակրիշնային:

Պալատի շքամուտքի առաջ, Հայոց Հայրապետը ընդունվում է գինվորական պատիվներով և առաջնորդվում ընդունելութեան դահլիճը, ուր սիրալիր տեսակցություն է ունենում պր. Նախագահի հետ:

Նոյեմբերի 15-ը Հնդկաստանում լույսի տուն է (դիվալի—հայերեն՝ տիվ, լույս, ցերեկ): Փակ են բոլոր կրթական հաստատություններն ու պաշտոնատները:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով պր. Նախագահին, ասում է, որ ինքը գալիս է «Ս.



Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը Մախաթա Գանդիի հուշավայրում, Դեկտեմբեր:

էջմիածնից, որը Դ դարից եղել է հայ ժողովրդի քրիստոնեական հավատի կենտրոնը» և «ջերմ ողջույն ու օրհնություն» է բերում նորին Վսեմություն շնորհապատանի պր. Նախագահին, շնորհապատանի բարեկամ կառավարության և հնդիկ խաղաղասեր, լուսաբարդ ժողովրդին: «Մեր ժամանակը շնորհապատան, — շարունակում է Վեհափառ Հայրապետը, — գուգաղիպում է հեղկական լույսի տոնի հանդիսություններին: Այս առթիվ խնդրում ենք, ընդունեցե՛ք Մեր ջերմ շնորհավորությունները: Մեր մաղթանքն ու աղոթքն է, որ լույսի Աստվածը Ձեզ արևշատությամբ պարզե՛ր և Ձեր մեծ երկրին ու ազնիվ ժողովրդին պահի լույսերի մեջ, պայծառ ու միշտ խաղաղ, բարգավաճ»:

Պր. Նախագահը, որ հնդիկ արդի մեծագույն մտածողներից մեկն է և հեղինակ փիլիսոփայական մի շարք աշխատությունների, իր պատասխան խոսքում շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ շնորհապատանի և հնդիկ ժողովրդի հասցեին ասած նրա ջերմ խոսքերի համար, և ապա շեշտում է մեր օրերին անհրաժեշտությունը հոգեկան լույսի և մարդու հոգեկան արժեքների զարգացման: «Առանց հոգեկան լույսի, — ասում է Նախա-

գահը, — մարդկության ապագան չի կարող պայծառ և ապահով լինել: Ես հավատում եմ, որ հոգեկան այդ լույսը կվերածալթքի: Ինձ համար մեծ ուրախություն է տեսնել այսքան շատ հոգևորականներ, որոնք քարոզում են լույսը, քարոզում են խաղաղությունը և դաստիարակում են ժողովուրդներին տիեզերական եղբայրության ոգով»:

Տեսակցության ընթացքում դուկտ. Ռադհակրիշնան հայտնում է, որ ինքը բավական ծանոթություն ունի հայ մշակույթի, հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու պատմության մասին և հիշում է, թե թե՛ հարանում ներկա է եղել հայոց եկեղեցում զատկական տոնի հանդիսություններին:

Վեհափառ Հայրապետը, ի հիշատակ իր այցելության պր. Նախագահին նվիրում է արծաթյա քանդակազարդ մի ափսե Ս. էջմիածնի նկարով:

Բաժանման պահին, Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունն է հայտնում շնորհապատանի Հանրապետության պր. Նախագահին ասյն բարյացակամ, ազնիվ և սիրալիր հոգածության համար, որը շնորհապատանի կառավարությունն ու ժողովուրդը ցուցաբերում են շնորհապատանի հայ գաղութի նկատմամբ:

**ԹԵՅԱՍԵՂԱՆ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ**

Նոյեմբերի 16-ին, շաբաթ, վաղ առավոտ-
յան ժամը 5-ին, պատրիարք սրբազան հոր
գլխավորությամբ, հայրապետական շքա-
խմբի և ընդունելության հանձնաժողովի ան-
դամները ավտոմեքենաներով մեկնում են
Հնդկաստանի հին մայրաքաղաքը Ակրա,
Դելհիի հարավ-արևելքում, մոտավորապես
220 կիլոմետր հեռավորության վրա, այցելե-
լու ժէ դարի կեսերին (1632—1650) կառուց-
ված հռչակավոր մարմարակերտ Թաջ-Մա-
հալ հուշարձան-դամբարանը, որը Միջին
Ասիայի պարսկա-հնդկական ճարտարապե-
տության գլուխ-գործոցն է համարվում: Այն
կառուցվել է Շահ Զանանի օրով, 20 000 ար-
հեստավորների աշխատանքով, գլխավորու-
թյամբ Ուստա Իսա Նշանավոր ճարտարապե-
տի և Պարսկաստանից ու Թուրքիայից բեր-
ված ավելի քան 100 ճարտարապետների
օգնությամբ: Խումբը Դելհի է վերադառնում
հետմիջօրեի ժամը 3-ին:

Առավոտյան ժամը 11-ին, հյուրանոցի Իր
հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ըն-
դունում է այցելությունը Դելհիում Հորդանա-
նի դեսպան պր. Իբրահիմ Սալահի:

Հետմիջօրեի ժամը 3-ին, Վեհափառ Հայ-
րապետը ընդունում է նաև մի խումբ թղթա-
կիցների:

Ժամը 5-ին, Հնդկաստանի կենտրոնական
կառավարության մինիստր պր. Ա. Մ. Թոմա-
սը, որը Մալաբար եկեղեցու անդամ է, իր
տանձ գեղեցիկ այգում, Ամենայն Հայոց Հայ-
րապետի պատվին կազմակերպում է թեյա-
սեղան:

Ընդունելության ներկա են լինում նաև
Դելհիում քրիստոնեական եկեղեցիների ներ-
կայացուցիչներ, պիտական պաշտոնական
անձնավորություններ, հյուրեր և թղթակից-
ներ:

Պր. Ա. Մ. Թոմասը ջերմորեն ողջունում է
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Ե-
դիշե պատրիարքի օրհնաբեր այցելությունը
իր ընտանեկան օջախում և սրտագին շնոր-
հակալություն և երախտագիտություն է
հայտնում այդ բացառիկ և անմոռանալի
շնորհի համար:

Հրաժեշտ առնելուց առաջ, Վեհափառ Հայ-
րապետը, պր. մինիստրի խնդրանքով, օրհ-
նում է նրա ընտանեկան քրիստոնեական օ-
ջախը, նրա սեղանի աղն ու հացը և անում
ջերմ բարեմաղթություններ:

Ապա նորին Ս. Օծուկունը խաչիկներ է
բաժանում բոլոր ներկաներին և հրաժեշտ է
առնում տիպար հնդիկ քրիստոնյա այդ ըն-
տանիքից:

**ԴԵԼՀԻԻ ՀՈՐԴԱՆԱՆՑԱՆ ԴԵՍՊԱՆԸ
ՊԱՏՎՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀԱՅՈՑ
ՊԱՏՐԻԱՐԷԻՆ**

Նոյեմբերի 16-ին, շաբաթ, երեկոյան ժա-
մը 7-ին, Դելհիում Հորդանանի դեսպան պր-
իբրահիմ Սալահը, ի պատիվ Ամենայն Հայոց
Հայրապետի և Երուսաղեմի հայոց պատ-
րիարքի, դեսպանատան մեջ կազմակերպում
է կոկտեյլ-պարտի:

Ընդունելության ներկա են լինում Սովե-
տական Միության, Լիբանանի, Սիրիայի,
Իրաքի, Սեուդյան Արաբիայի, Սուդանի, Գա-
նայի, Իրանի, Հունաստանի, Արգենտինայի,
Հաբեշտանի և Ավստրալիայի դեսպաններն
ու դեսպանատների պաշտոնատարներ, ի-
րենց կանանց հետ, ինչպես նաև Դելհիում
քրիստոնեական եկեղեցիների բարձրաստի-
ճան պետեր և առաջնորդներ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին,
սրբազան պատրիարք հոր և շքախմբի ան-
դամներին ջերմորեն դիմավորում և ողջու-
նում են դեսպան պր. Իբրահիմ Սալահը և
նրա ազնիվ տիկինը:

Այնուհետև պր. Ի. Սալահը նորին Սրբու-
թյան է ներկայացնում հրավիրված դեսպան-
ներին և նրանց շքախմբի անդամներին:

Ջերմ մթնոլորտում ընդունելությունը շա-
րունակվում է մինչև ժամը 9.30:

Հրաժեշտ առնելուց առաջ, Վեհափառ Հայ-
րապետը իր և իր շքախմբի շնորհակալու-
թյունն է հայտնում Հորդանանի վսեմաշուք
դեսպանին և նրա ազնիվ տիկնոջը՝ կազմա-
կերպված սույն ընդունելության համար:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՅԵԼՈՒՄ Է
ԵՎԵՂԵՑԻՆԵՐԸ**

Նոյեմբերի 17-ին, կիրակի, առավոտյան
ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, սրբա-
զան պատրիարք հոր և շքախմբի անդամների
ընկերակցությամբ, այցելում է նոր Դելհի-
ում անգլիկան Ս. Փրկիչ եկեղեցին, ուր
պաշտվում էր առավոտյան ժամերգություն:

Եկեղեցուց մուտքի առաջ, Հայոց Վեհափառ
Հայրապետն ու շքախումբը ընդունվում են ե-
կեղեցական թափորով և առաջնորդվում դե-
պի եկեղեցի:

Հայոց Հայրապետի և պատրիարքի ներկա-
լությունը անգլիկան եկեղեցում ողջունում է
անգլիկան եպիսկոպոսի հնդիկ փոխանորդը
և ջերմագին շնորհակալություն է հայտնում
իր համարների անունից այս պատմական այ-
ցելության համար:

Այնուհետև կատարվում է մասնավոր բարի
գալստյան արարողություն և աղոթք սաղմո-
սերգությամբ:

Արարողութեան վերջում նորին Ս. Օծու-
տունը ողջունում է բոլոր ներկաներին, հա-
պրդում է Ս. էջմիածնի օրհնութիւնները և
շնորհում, որ Հայ Եկեղեցին սիրալիր հարա-
պրութեան մեջ է միշտ Անգլիկան Եկեղեցու
նկատ և թե ինքը հոկտեմբեր ամսի 10-ին Լոն-
տոնում այցելել է Լամբեթի պալատում Քեն-
ցըրբերիի Արքեպիսկոպոս նորին Սրբութիւն
նկատ. Մայքլ Իեմզիին:

Այնուհետև Հայոց Վեհափառ Հայրապետը
նստում է քրիստոնեական եկեղեցիների հա-
պատգործակցութեան մասին հանուն խաղա-
ստութեան և ժողովուրդների եղբայրութեան:

Բոլոր ներկաներին օրհնելուց հետո, նույն
ժամանակներում հրաժեշտ է առնում Վեհա-
փառ Հայրապետը:

Ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը
այցելում է նաև, սրբազան պատրիարք հոր
նկերակցութեամբ, Հին Դելհիում մալաբար
Մ. Հակոբ եկեղեցին, ուր նույնպես ընդուն-
վում է եկեղեցական արարողութիւններով:

Բոլոր հավատացյալները, սպիտակ զգես-
տավորված, ձեռներին վառ մոմ, տղամար-
դիկ առանձին և կանայք առանձին կանգնած,
նրկյուղածորեն ընդունում են Հայոց Հայրա-
պետին:

Առաջին շարքերում տեղ են գրավել Մալա-
բար Եկեղեցու անդամ հնդիկ բարձրաստիճան
պատական անձնավորութիւններ, կառավա-
րական մինիստր պր. Ա. Մ. Թոմասի գլխա-
վորութեամբ:

Տեղի քահանան բարի գալստյան ուղերձ է
վարդում հանուն Դելհիի Մալաբար եկեղեցու
համայնքի:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հավա-
տացյալներին, ասում է, որ ինքը Հնդկաստան
է այցելում Արևելքի և Հնդկաստանի Մալա-
բար Եկեղեցու Պետ նորին Սրբութիւն Բասի-
լիոս Բ Գևարգեսե Կաթողիկոսի հրավերով
և իր շքախմբով մի քանի օրից հետո գնալու
է Քոտայամ, Հարավային Հնդկաստան,
այցելելու Մալաբար Եկեղեցու պատմական
Աթոռին և նրա ծերունազարդ Գահակալին:

Այնուհետև նորին Ս. Օծութիւնը, օրհնելով
բոլոր հավատացյալներին, հրաժեշտ է առ-
նում:

**ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ
ԳՈՐԾՈՑ ՄԻՆԻՍՏՐ ՊՐ. ՆԱՆՏԱՅԻՆ**

Նոյեմբերի 17-ին, կիրակի, ժամը 12-ին,
Վեհափառ Հայրապետը և սրբազան պատ-
րիարք հայրը, շքախմբով, այցելում են
Հնդկաստանի ներքին գործոց մինիստր պր.
Նանտային, նոր Դելհիում, նրա պաշտոնա-
վայրում:

Պր. Մինիստրը ջերմորեն է ընդունում Հայ
Եկեղեցու բարձրագույն պատվիրակութեանը:

Ջրույցի ժամանակ Վեհափառ Հայրապետը
պր. մինիստրի ուշադրութեանն է հանձնում
Հնդկաստանի հայոց եկեղեցական կյանքի
վերաբերյալ մի քանի հարցեր:

Հայոց Հայրապետը մասնավորաբար
խնդրում է, որ հայ հոգևորականների Հընդ-
կաստան մուտքի համար, որպես հոգևոր հո-
վիւմների, դյուրութիւններ ընծայվեն: Վեհա-
փառ Հայրապետը շեշտում է, որ Հնդկաստա-
նի հայ գաղութը ունի մոտավորապես 400
տարվա պատմութիւն և Հայ Եկեղեցին ու
հայ ժողովուրդը միշտ երախտապարտ են
եղել Հնդկաստանում իրենց վայելած բոլոր
բարիքների ու շնորհքների համար:

Պր. Նանտան խոստանում է հանգամանո-
րեն դբաղվել այդ հարցով, Վեհափառ Հայ-
րապետի բարձր միջնորդութեան հիման վրա,
և խնդրում է, որ Հնդկաստանի հայոց եկեղե-
ցական վարչութիւնները գրավոր կերպով ի-
րեն դիմեն՝ հիշեցնելու համար այդ խնդիրը:

Նորին Ս. Օծութիւնը և սրբազան պատրի-
արք հայրը ներքին գործոց մինիստրից հրա-
ժեշտ են առնում լավագույն տպավորու-
թիւններով:

**ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՎԵՄՈՒԹՅՈՒՆ
ՋԱՎԱՀԱՌԱԼ ՆԵՐՈՒՆ**

Նոյեմբերի 17-ին, կիրակի, հետմիջօրեի
ժամը 3.30-ին, Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետը և Երուսաղեմի հայոց սրբազան
պատրիարք հայրը, շքախմբով, պաշտոնա-
կան այցելութիւն են տալիս Հնդկաստանի
վարչապետ նորին Վեմուրջուն Ջավահարլալ
Ներալին, նոր Դելհիում, վարչապետարանի
շենքում:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և
մեծարգո վարչապետի միջև տեղի է ունենում
ջերմ զրույց, սիրալիր միջնորդում:

Ջրույցի ընթացքում Վեհափառ Հայրապե-
տը շնորհավորում է պր. Ներուի ծննդյան
74-ամյակը և երախտագիտութեամբ է խո-
սում Հնդկաստանի վարչապետի հանուն խա-
ղաղութեան ամրապնդման կատարած մար-
դասիրական մեծ աշխատանքների մասին,
շեշտելով, որ ներուն միայն հնդիկ ժողովրդ-
դին չի պատկանում, այլ ամբողջ խաղաղա-
սեր մարդկութեան:

Վարչապետ պր. Ներուն պատասխան
խոսքով ջերմ շնորհակալութիւն է հայտնում
Հայոց Հայրապետին նրա բարեմաղթութիւննե-
րի համար և շեշտում, որ միայն խաղա-
ղութեան պայմաններում կարող է տեղի ունե-
նալ մարդկութեան հոգեկան, իմացական և
տնտեսական ճշմարիտ առաջադիմութիւնը,
և շնորհակալութիւն է հայտնում Հայոց Հայ-
րապետի այս այցելութեան համար:

Հյուրասիրութեան ընթացքում, նորին Ս. Օծովթյունը որպէս հուշանվեր պր. ներուին է հանձնում «Հայ մանրանկարչութեան ակումբ»-ը:

Հրաժեշտի ժամին, Հնդկաստանի պր. վարչապետը ճանապարհում է Հայոց Հայրապետին և սրբազան պատրիարքին, ուղեկցելով նրանց մինչև վարչապետարանի զխավոր մուտքը, ուր հրաժեշտ է առնում սիրալիք կերպով:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՆԴԱՍՏԱՆԻ ՓՈՒՆՆԱԽԱԳԱՀԻՆ

Նոյեմբերի 17-ին, կիրակի, հետմիջօրեի ժամը 5-ին, նույն ձևով պաշտոնական այցելութիւն է տրվում Հնդկաստանի Հանրապետութեան փոխ-նախագահ, նորին Վսեմութիւն զեկտ. Զաֆիր Հուսեյնին, նոր Դելիի նրա պաշտոնատեղիում:

Փոխ-նախագահը սիրալիք հյուրասիրութեամբ պատվում է Հայոց Հայրապետին և պատրիարքին:

Զերմ գրույց է տեղի ունենում հայ և հնդիկ ժողովուրդների բարեկամութեան, կրօնների և կրօնապետների կատարելիք վճռական դերի մասին, կրօնական տարբեր համոզմունքներ ունեցող ժողովուրդների մերձեցման և համագործակցութեան հարցերի շուրջ:

Դեկտ. Զաֆիր Հուսեյնը դնահատանքով է արտահայտվում հայ ժողովրդի, նրա ստեղծած հոգևոր արժեքների մասին:

Այցելութեան ավարտին, փոխ-նախագահը հյուրերին ծանոթացնում է իր տան թանգարանը և խորին հարգանքով ու երախտագիտութեամբ ճանապարհ է դնում Հայոց Հայրապետին, պատրիարքին և շքախմբի անդամներին:

ՄԵԿՆՈՒՄ ԴԵՊԻ ՄԱԴՐԱՍ

Նոյեմբերի 18-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 6.30-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և իր շքախմբի ուղեկցութեամբ մեկնում է Մադրաս:

Դելիի Պալամ օդանավակայանում Հայոց Վեհափառ Հայրապետին ճանապարհում են կառավարութեան, բույր եկեղեցիների և դիվանագիտական մարմնի ներկայացուցիչներ, թղթակիցներ:

Նրկու և կես ժամվա խաղաղ ու հանգիստ թոնդից հետո, ինքնաթիռը իջնում է Մադրասի օդանավակայանում, ուր Հայոց Հայրապետին դիմավորում են Մալաբար Եկեղեցու ներկայացուցիչներ, սովետական հյուպատոսը, հայ համայնքի մի քանի ներկայացուցիչներ և թղթակիցներ:

Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, առաջնորդվում է Կոնիմարա պանդոկը:

Ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Մադրասում սովետական հյուպատոսին և ընդունվում է ջերմորեն:

Նրեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և շքախմբի անդամները այցելում են Մադրասի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին, Հայկական փողոցում:

Մադրասը Հնդկաստանի վաճառաշահ, բազմամարդ քաղաքներից մեկն է, տիպիկ հնդկական իր ուրույն դիմագծով և գույնով, տարազով և կենցաղով, լեզվով և կրօնով, համալսարանով և ուսումնական հաստատություններով, թանգարանով և աշխարհահռչակ իր ձկնարանով:

Մադրասի հնագույն թաղամասը Ս. Թովմասի անվան թաղն է, Ս. Թովմաս լեռան ստորոտը, որի կատարին կա 1574 թվականը կրող հայկական արձանագրություն, եկեղեցու պատին:

Մադրասում սկիզբ է առնում և զարգանում Հնդկաստանի առաջին հայ գաղութը, որն իր մշակույթի, հոգևոր, ազգային և տնտեսական բարգավաճ շրջանն է ապրում Ժէ և ԺԸ դարերին: 1707 թվականին, Ս. Թովմասի սարի վրա, կառուցվում է հայկական առաջին եկեղեցին:

Մադրասի հայ համայնքի մեջ, իրենց հայրենասիրական և հասարակական գործունեութեամբ, հռչակվում են Աղա Շամիր Սուլթանը, Պետրոս Ոսկանը, Աղա Սամվել Մուրադը, Տ. Հարություն բահանա Շամվոնյանը, որոնք Մադրասում կատարում են հիշատակութեան արժանի գործեր: Իբրև օրինակ կարելի է հիշել, որ Պետրոս Ոսկանը կառուցել է տվել Մադրասի Ասարիար գետի վրա զգված բազմակամար կամուրջը, 1725 թվականին:

Մադրասում, Շամիր Սուլթանում Շահամիրյանը ծավալում է ազգասիրական-հայրենասիրական բեղուն գործունեություն: Նրա ջանքերով, 1772 թվականին, Մադրասում հիմնվում է հայկական տպարան, ուր հանրածանոթ մտավորական և մեծ հայրենասեր Մովսես Բարադամյանը 1772 թվականին հրատարակում է իր նշանավոր հեղինակությունը՝ «Նոր տետրակ, որ կոչի Յորդանակ» և «Ուրազայք փառաց» երկրորդ արժեքավոր աշխատությունը, «որուն մեջ կպարզե նա ապագա ազատագրված Հայաստանի պետական, վարչական և օրենսդրական կազմակերպությունը, ծալր աստիճան հետաքրքրական մանրամասնություններով, որոնց մեջ բարեքական միամտությունը ստեպ կզերազանցի ուրիշ ամեն զգացում» («Հնդկահայք», Թորգոմ արքեպիսկոպոս, Նրոսսադեմ, 1941, էջ 49):



Վեհափառ Հայրապետը Հնդկաստանի Նախագահ պր. Ռադհակրիշնայի հետ, Դելիում:

Մադրասի հայկական տպարանի բացման տարրում, 1772 թվականին, կառուցվում է Ս. Աստվածածին եկեղեցին, Հայկական թաղամասում, 1719 թվականին կառուցված հին եկեղեցու վայրում:

1789 թվականին, Շիրազեցի Հարություն քահանա Շամվոնյանը, Մադրասում հիմնում է իր սեփական տպարանը, եկեղեցու շրջափակում, և հաջորդաբար հրատարակում է «Վկայաբանութիւն Մարիանէ կոյսիւն», «Ողբ Հայաստանեայց», Շնորհալու «Յիսուս Որդի» և «Պորփիրի ներածութիւն Դաւիթ Անյաղթի թարգմանութեան» գործերը:

Սակայն հայրենասեր և գրագետ քահանայի անունը, որպես հիմնադիր և հայր հայ լրագրության, անմահացնում է 1794 հոկտեմբերին Մադրասում հրատարակած նրա անդրանիկ հայ լրագիրը՝ «Ազդարար»-ը, «բավական մաքուր տպագրությամբ, ութածալ դիրքով և 48 էջերով, որոնց վերջինը կգրվի հաջորդ ամսվա տոնացույցը» (Թորգոմ արքեպիսկոպոս, նույն տեղում, էջ 54):

Առաջին հայ լրագրի հրատարակությունը տևում է միայն 18 ամիս:

Մադրասի հայոց եկեղեցու բակում է գրտնրվում մեծանուն քահանայի դամբարանը, որի տակ «հողացեալ» հանգչում է աճյունը «ի սուրբ կրօնի արթուն, վարուք ուշիմ և զգօն՝ յամենուտ յարգեալ, ճարտար, խոհամիտ և սուրբ հանճարիւք բարեկրօն աւագերէց»-ի՝ Հարություն քահանա Շամվոնյանի:

1836 թվականին Մադրասից Սամվել Մուրադ և էդվարդ Ռաֆայել եղբայրների բարերարությամբ, Փարիզում բացվում է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը:

Մադրասի հայ գաղութի տնտեսական, ազգային-մշակութային բարգաւաճ շրջանը փակվում է ԺԹ դարի կեսերին: Երբեմնի բարգաւաճ և հարուստ գաղութի շուրջ 600 հոգի հաշվվող 118 ընտանիքից այսօր մնացել են միայն 5 հայեր: Փակվել է հայկական դպրոցը, հայությունը գաղթել է և մնացել է միայն Ս. Աստվածածին եկեղեցին, որպես լուռ վկան այդ ամերի վրա մի ժամանակ ապրած և ստեղծագործած հայ ժողովրդի:

Ս. Աստվածածին եկեղեցու գավթում, ցուրտ շիրմաքարերի տակ հանգչող, ազգին և Եկեղեցուն մեծ ծառայություններ մատու-

ցած հայ մարդկանց հոգինները, լուռ թափոր կազմած, Հայոց Հայրապետին առաջնորդում են Եկեղեցի:

Ս. Աստվածածին եկեղեցին ամրակուռ, հույակապ մի շենք է: Բակի կենտրոնում բարձրանում է քարաշեն եռահարկ զանգակատունը, երեք զույգ զանգերով, երկուստեք արտաքին երկար սյունասրահներ, գավիթներով, որոնք ամբողջովին ծածկված են հողահավասար տապանաքարերով:

Դատարկ եկեղեցում հնչում է «Ուրախ լեր Ս. Եկեղեցի»-ն, մինչ իրապես տխուր է ամեն ինչ նրա շուրջ, թաղված լուսթյան և խաղաղության մեջ:

Խորանի վերևում, դրսից, բարձրանում է հայկական կաթողիկեն, փակ տանիքի վրա կանգուն:

Վեհափառ Հայրապետը, խորունկ մտածումների մեջ թաղված, դուրս է գալիս եկեղեցուց և «Հոգուց» արտասանում եկեղեցու հովանու տակ թաղված բարի ու հավատավոր հոգիների համար:

Հուլի է այստեղ արձանագրել, որ Մադրասից 200 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Բանկալոր քաղաքից միակ հայ ընտանիքը՝ Հայկ Մարգարյանը և նրա տիկինը, իրենց 18-ամյա աղջիկն էին բերել Ս. Աստվածածին եկեղեցի, Հայոց Հայրապետի օրհնութունը ստանալու: Հայկ Մարգարյանը Հարություն քահանա Ծավոնյանի ժառանգներից է:

Մադրասի Ս. Աստվածածին եկեղեցու երիցատան մեջ Հայոց Հայրապետը և սրբազան պատրիարքը, շքախմբի անդամների հետ, հյուրասիրվում են թեյասեղանի շուրջ:

Մադրասի հայոց վերջին ծխատեր արժանապատիվ Տ. Բագրատ քահանա Դավթյանի երիցուհին արագ-արագ խոսում է անցյալի հոշերից և արտասվախառն պատմում, որ ինքը չի կարող շարունակել այսքան սիրելի մեռելների պահակություն անելու գործը և ուզում է փախչել այս «մեռելատնից»:

Հաջորդ առավոտ, նոյեմբերի 19-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և շքախմբի ուղեկցությամբ, մեկնում է Քերալա, Հարավային Հնդկաստան, Քոտայամ քաղաքում հանդիպում ունենալու Մալարար Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Տ. Բասիլիոս Բ Գևարգես Կաթողիկոսի հետ:

ՄԵԿՆՈՒՄ ԴԵՊԻ ԶԵՐԱԼԱ (ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ)

Նոյեմբերի 19-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 6.30-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և շքախմբի ուղեկցությամբ, Մադրասից մեկնում է Քերալա,

Հարավային Հնդկաստան, Քոտայամ քաղաքում այցելելու Նորին Սրբություն Բասիլիոս Բ Գևարգես Կաթողիկոսին:

Մադրասի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում են սովետական հյուպատոսը, Մալարար Եկեղեցու ներկայացուցիչներ և տեղի հայերը:

Ժամը 7.40-ին ինքնաթիռը իջնում է Բանկալոր, ուր նախաձառ է տրվում Հայ Եկեղեցու պատվիրակության պատվին:

Այնուհետև ինքնաթիռը ուղղություն է վերցնում դեպի Կոիմպատուր: Խոշիքի ընթացքում ռադիոհաղորդումով հայտնվում է Վեհափառ Հայրապետին, որ Կոիմպատուրի օդանավակայանում, Մալարար Եկեղեցու համայնքը, Նորին Ս. Օծության և շքախմբի անդամների պատվին, կազմակերպել է ընդունելություն:

Ինքնաթիռը իջնում է հուլի և 20 րոպե կանգ է առնում:

Կոիմպատուրում կա կազմակերպված Մալարար Եկեղեցու համայնք: Օդանավակայանում հավաքվել է ողջ համայնքը, տոնական օրերի տրամադրությամբ և խանդավառությամբ:

Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարքը և շքախմբի բոլոր անդամները ընդունվում են ծափահարություններով, ծաղկեմանյալներով և առաջնորդվում ընդունելության սրահ: Համայնքի քահանան և եկեղեցական խորհրդի անդամները բարի գալստյան ճանորդվ են ողջունում Հայ Եկեղեցու բարձրագույն պատվիրակության:

Հյուրասիրությունից հետո, Վեհափառ Հայրապետը օրհնում է Մալարար Եկեղեցու հավատացյալներին և նրանց հուղումնախառն, խանդավառ ծափերի և ժպիտների մեջ առաջնորդվում դեպի ինքնաթիռ:

ԺԱՄԱՆՈՒՄ ԳՈՉԻՆ

Կոիմպատուրից Գոչին ինքնաթիռով 40 րոպե է:

Արաբական ծովի ափին, Քերալա նահանգի պատմական կարևոր նավահանգիստներից մեկն է Գոչինը, իսկական դրախտավայր, հրաշալի կապույտ երկնքով, գեղածիծաղ ծովով, համատարած փարթամ կանաչությամբ: Գոչինի օդանավակայանում կազմակերպվել է մեծաշուք, համաժողովրդական առաջին հանդիպումը Հայոց Վեհափառ Հայրապետի հետ:

Ժամը 10-ին ինքնաթիռը վայրէջք է կատարում:

Այստեղ են ժամանել Քերալայի Մալարար Եկեղեցու բոլոր միտրոպոլիտներն իրենց ինքնատիպ տարադներով, հոգևորական դասը, պաշտոնական անձնավորություններ, ըն-



ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԲԱՍԻԼԻՈՍ Բ

անհետնության հանձնաժողովի անդամներ, պարոնյանների, կոլեջների երկսեռ ուսանողու- ղությունը և հավատացյալների հոծ բազմու- ղություն:

Հայոց Հայրապետին և սրբազան պատրի- ճարքին ողջունում են նահանգի կառավարու- ղության անունից երկու մինիստրներ:

Հայոց Եկեղեցու պատվիրակներին նվիր- ւում են ոսկեթել բանված և գուլնզգուլն ծա- փկներից կազմված մանյակներ, ի նշան ձեռքարների, ըստ հնդկական ընդունված սո- ռոտություն:

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատ- ճարքը հայրը ողջագուրվում են Մալաբար Ե- կեղեցու բարձրաստիճան հոգևորականների ձեռք:

Սաստիկ շոգ է, ծովի ափին, համատարած և կայտառ այս կանաչության գրկում:

Հյուրերի գլխավերևում բռնում են արքա- ական ծոպավոր, մետաքսաթել հովանոց- ակեր: Բայց ոչինչ չի օգնում, շոգ է և խոնավ:

Օդանավակայանի երիտասարդ, քրիստոնե- ական հրամանատարը, Հայոց Հայրապետի և սրբազան շքախմբի պատվին, թեյասեղան է տա- լիս: Թեյը փոքր ինչ մեղմում է շոգի ազդե- ղությունը:

Փոքր հանգստից հետո, ավելի քան 200 անքնաշարժերի շարասյունը, դարդարված ժողովներով և դրոշակներով, ուղղվում է դե- պի Երևակալված քաղաքը, Գոչինից 8 կիլո- մետր հեռավորության վրա:

Քաղաքի գլխավոր պողոտաների վրա դա- ղարել է սովորական երթևեկությունը: Բազ- մահազար ժողովուրդը՝ հինգու, քրիստոնյա, անհավատ, հրեա և օտարական, ուրախ և տոնական տրամադրության մեջ, ողջ ճա- նապարհի երկայնքով, ծափահարությունե- րով է ողջունում Հայոց Հայրապետին և սպատրիարքին, որոնք նստել են գեղեցիկ, ծաղկազարդ բաց ինքնաշարժի մեջ:

Ինքնաշարժերի շարասյան առջևից ընթա- նում է եկեղեցական հսկա թափորը, խաչե- րով, խաչվառներով, գուլնզգուլն, գեղեցիկ հովանոցներով: Թափորն ուղեկցվում է թմբկահարություն:

Հետմիջօրեի ժամը 2.30-ին, թափորը հաս- նում է էրևակալվածի մալաբար Ս. Աստվա- ծածին եկեղեցին, ուր հավաքվել է ծովածա- վալ բազմություն:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Եկեղեցի, որի կամարների տակ, հաղթական ու վահ, հնչում է «Ուրախ լեր»-ը:

Ժողովրդին օրհնելուց հետո, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է եկեղեցու ըն- դարձակ բակում կանգնած հսկա տաղավա- րը, իր շքախմբով: Բազմահազար ժողովուր- ղը, լուռ, երկյուղած, կարգապահ, նստել է

ծալապատիկ եկեղեցու բակում և սպասում է անհամբեր Հայոց Հայրապետի պատգամին և օրհնության:

Հանուն էրևակալված քաղաքի ժողովրդի և քաղաքապետության, Հայ Եկեղեցու պատ- գամավորության ողջունում են պաշտոնական անձինք:

Հանդիսության վերջում խոսք է առնում նաև Հայոց Հայրապետը, որի ելույթը տե- դում թարգմանվում է անգլերենի և մալայա- լամերենի:

Նորին Ս. Օծովությունը բոլոր ներկաներին հաղորդում է Ս. Էջմիածնի օրհնությունները և հայ հավատացյալ ժողովրդի եղբայրական ողջունները, շնորհակալություն հայտնելով նաև արտակարգ, սրտատուչ այս դիմավորու- թյան համար:

Ապա Հայոց Վեհափառ Հայրապետը, հան- դիսավոր իրադրության մեջ, եկեղեցու բա- կում, կատարում է դպրոցական նոր շենքի հիմնարկները:

Ժամը 3.30-ին, Հայ Եկեղեցու պատգամ- վորությունը առաջնորդվում է էրևակալվածի տուրիստական միջազգային հյուրանոցը, ուր քաղաքապետությունը, Վեհափառ Հայրապե- տի և շքախմբի պատվին, կազմակերպել էր մեծ ընդունելություն, որին հրավիրվել էին նաև Մալաբար Եկեղեցու բոլոր բարձրաստի- ճան հոգևորականները, քաղաքի երևելի անձնավորություններ, բուլք եկեղեցիների ներկայացուցիչներ, ավելի քան 250 հրա- վիրյալներ:

Ընդունելության ժամանակ, բարի գա- լըստյան և ողջունի խոսքեր են փոխանակ- վում, մտերմիկ մթնոլորտում:

Հանուն Վեհափառ Հայրապետի, շնորհա- կալության և փոխադարձ ողջունի խոսքերով հանդես է գալիս Ս. Նիդիե սրբազան պատ- րիարխ հայրը:

ՔԵՐԱԼԱՅԻ ՆԱՀԱՆԳԸ

Քերական նորակազմ Հնդկական պետու- թյան կազմի մեջ մտնող 16 նահանգներից ամենափոքրն է և գրավում է թերակղզու հա- րավ-արևմտյան մասը:

Քերական ունի 14 992 քառակուսի մղոն տարածություն և 15 230 000 բնակիչ:

Քերական թաղվել է փարթավ հնդկականու- ղներին, արմավենիների, փափայանների մշտադալար և փարթավ կանաչի ծոցում, շրջապատված լուսե լճերով, գետակներով: Ամբողջ նահանգը պատել է բնական և ար- հեստական ջրանցքների ցանցը: Երկիրը հա- բուստ է կենդանական և բուսական աշխար- հով: Ունի կլիմայական տարբեր պայման- ներ. լեռնային մասերը ցուրտ են, մինչ դաշտային մասը սաստիկ շոգ է և խոնավ:

Քերալայի նահանգը կազմվել է 1956 թվականին: Նորակազմ նահանգի հիմնական կորիզը կազմում են Տրավանկորե, Գոչին և Մալաբար նախկին նահանգները, որոնք նախապես մտնում էին Մադրասի նահանգային կազմի մեջ:

Նահանգն ունի իր սեփական լեզուն՝ մալալալանդերենը:

Քերալա նահանգում գոյություն ունեն բազմաթիվ կրոններ՝ հինդուիզմը (մոտ 8 500 000)՝ իր ավելի քան 80 աղանդներով, քրիստոնեությունը՝ 3 000 000 (Մալաբար, Կաթոլիկ, Անգլիկան եկեղեցիներ, նեստորականություն, բողոքականություն), մահմեդականությունը (իսլամ)՝ 2 000 000, զրադաշտականությունը՝ 73 000, մովսիսականությունը և այլ փոքր աղանդներ, 1 000 000:

Այս պատճառով Քերալան պատմական տաճարների, մատուռների, սինագոգաների, հին մշակութի և ֆոլկլորի հարսնիքն է:

Ժողովուրդը պարզ, հյուրասեր է և կրթված:

Կրթության, դաստիարակության և ընդհանուր զարգացման բնագավառում Քերալան առաջին տեղն է զբաղում: Կրթության արդի սիստեմը մտցրել են քրիստոնյա միսիոներները:

Գրագիտությունը Քերալայում կազմում է բնակչության 70,88 տոկոսը, մինչև Հնդկաստանի այլ մասերում՝ 16,61 տոկոսը:

1957 թվականին բացվել է Քերալայի համալսարանը:

Քերալայում հրատարակվում են 32 օրաթերթեր և 56 շաբաթաթերթեր:

Տեղատարափ անձրևները և երկրի բնական հարստությունը Քերալան դարձրել են գերազանցապես գյուղատնտեսական երկիր:

Աշխարհագրական տարբեր պայմանների բերուցով, Քերալայում աճում են տարբեր բնութի բույսեր՝ թեյ, նարինջ, սուրճ, սև պղպեղ, գարգումոն, բրինձ, հնդկընկույզ և այլն:

Տաբեոկան և բրինձը բնակչության հիմնական սնունդն են:

Քերալան հարուստ է նաև գեղեցիկ անտառներով:

Հնուց ի վեր ձկնորսությունը եղել է Քերալայի ժողովրդի հիմնական զբաղմունքներից մեկը:

Քերալայի քրիստոնեական եկեղեցիների մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում Մալաբար Ուղղափառ եկեղեցին, որ ամենահին և պատմական եկեղեցին է Հնդկաստանում և Մալբարում Արևելքում:

Քսան երկար դարեր ապրել է այդ մարտիրոս եկեղեցին Հնդկաստանի հեռավոր ափերին, տարբեր կրոնների և մշակույթների

մրցադաշտում, և անհուն զոհողությունների, նահատակությունների գնով պահել է իր գոյությունը, իր դավանությունը, իր ազգային ավանդությունները: Դա հրաշքի համազոր իրողությունն է:

Հստ ավանդության, փրկչական 52 թվականին, Հայաստանից և Միջագետքից գալով, Քովմաս առաքյալը հասնում է Հնդկաց աշխարհի ափերը՝ Մալանգարա Սաբհա, և քարոզում: 20 տարվա առաքելության ընթացքում 7 եկեղեցիներ հիմնում, ապա անցնում է Մադրաս, ուր և նահատակվում Մալբարի գյուղում:

Առաքյալի նահատակությունից հետո, քրիստոնեությունը կազմակերպվում է և հիմնվում է Մալաբարցիների Առաքելական Ուղղափառ եկեղեցին:

Հնդկաց աշխարհի նորակազմ եկեղեցին սերտ կապեր է պահպանում Եգիպտոսի, Եթովպիայի, Միջագետքի և Պարսկաստանի քրիստոնեական համայնքների հետ:


Մալաբար եկեղեցին հատկապես բարեկամական կապեր է պահպանում Միջագետքի Ասորի Ուղղափառ կամ Քաղղեական եկեղեցու հետ: Մալաբար եկեղեցու ծխական լեզուն երկար տարիներ եղել է ասորերենը: Այդ պատճառով էլ այդ եկեղեցին օտարների կողմից կոչվել է Մալաբար Ասորի կամ Ուղղափառ Հակոբիկյան եկեղեցի: Այժմ մալաբարցիք սիրում են իրենց պատմական, հին եկեղեցին անվանել Մալաբար Ուղղափառ եկեղեցի:

Ե և Զ դարերում Մալաբար եկեղեցին ապրում է իր զարգացման շրջանը:

Մահմեդականության Հնդկաստան մուտքով, խզվում է Մալաբար եկեղեցու կապը քրիստոնեական եկեղեցիների հետ: Այնուհետև, այդ եկեղեցին ապրում է կղզիացած ինքն իր մեջ, կտրված աշխարհից, բուդդայականության, բրահմանականության և իսլամի ծովի մեջ, մարտիրոսագրության, արյան գնով պահելով իր հավատն ու ժողովուրդին:

Միջին դարերում և հատկապես 1599—1633 թվականներին, Մալաբար եկեղեցին և ժողովուրդը անլուր տառապանքներ, զրկանքներ և նահատակություններ են կրում Հնդկաստան նոր ոտք դրած պորտուգալյան կաթոլիկ հավատաքննիչների կողմից, որոնք զենքով պարտադրում են Կաթոլիկ եկեղեցու դավանությունը այս քրիստոնյա, բարի և հավատացյալ ժողովուրդին:

Տխուր պառակտումներ են ստեղծվում նաև նույնինքն հավատավոր մալաբարցիների միջև, եկեղեցական բաժանումներ են գոյանում, Մալաբար եկեղեցին նոր վերքեր է ստանում:



Վեհափառ Հայրապետը և պատրիարք սրբապետը Հովհաննուսյանի վարչապետ ար. Ջավահիրյան Ներոյի մոտ, Ռեյմիում:

Սակայն, հակառակ այս բոլոր հալածանքներին, մարտիրոսագրության և ներքին պառակտումներին, Մալաբար Եկեղեցին վերջին հիսնամյակում սպրտում է իր պատմության մեծագույն հոգևոր, իմացական և տնտեսական չարթոնքը:

Այսօր միայն Քերալայում Մալաբար Եկեղեցու հավատացյալների թիվը հասնում է մոտ 1 500 000-ի: Մալաբար Եկեղեցին ունի 10 կաղմակերպված թեմեր, մոտ 800 հոգեվորական, որոնցից շատերը համալսարանական են, ավելի քան 1 000 եկեղեցի:

Մալաբար Եկեղեցու կաթողիկոսանիստն է Քոտայամը, ուր գտնվում է նաև Սինոդը:

Կաթողիկոսարանն ունի և պահում է իր միջոցներով 10 բարձրագույն դպրոց, 15 միջնակարգ, 40 նախակրթական, հոգևոր ճեմարան, վանքեր և կուսանոցներ, առաքելական դարի հատուկ հավատով, նվիրումով, անպայման աղքատության պայմաններում, միսիոներություն, բազմաթիվ կիրականորյա դպրոցներ, կրոնական մամուլ, քրիստոնեական, երիտասարդաց, կանանց և աղջկանց կաղմակերպություններ և բարեգործական հաստատություններ: Ամեն գյուղ ունի դպրոց:

Քերալայից դուրս, բարձրագույն համայնքներ ունեն Մադրասում, Բոմբեյում, Կալկաթայում, Դելիում, Քոնխայում, Հայդարաբադում և Սինգապուրում:

Մալաբար Եկեղեցու անդամներից ոմանք կարևոր և պատասխանատու պաշտոններ են զբաղվում և՛ տեղական և՛ կենտրոնական կառավարության մեջ կրթական, տնտեսական, գիտական և բժշկական բնագավառներում:

Մալաբար Եկեղեցին բարեկամական լավ հարաբերություններ է պահում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետ:

Մալաբար այցելող առաջին հայ վաճառականը եղել է Դ դարում Թովմա Կանուն: Այնուհետև հաջորդ դարերում ևս պատմության մեջ հիշվում են Մալաբար այցելող հայ վաճառականներ և մանավանդ հոգևորականներ, 1507 թվականից մինչև մեր օրերը:

Վերջին տարիներին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրամանով, Քոտայամ են այցելել Ս. Դերենիկ (1960 թ.) և Ս. Ասողիկ (1961 թ.) եպիսկոպոսները:

1951 թվականին, Կալկաթայի հայոց նազարեթի եկեղեցում, Ս. Բասիլիոս Կաթողիկոսը ձեռնադրել է 8 սարկավագ:

ՎԵՆԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԸ ՔՈՏԱՅԱՍՏՈՒՄ

1963 թվականի նոյեմբերի 19-ին, երկուշաբթի, հետմիջօրեի ժամը 5-ն է:

Հորդառատ և տեղատարափ անձրևը նոր թարմություն և կենսախիղճ տրամադրություն է ստեղծել բոլորի մոտ:

Վեհափառ Հայրապետը հանդիսությունը մեկնում է էրնակուլամից Քոտայամ:

Հրաշալի է ճանապարհը, դրախտանման, կանաչազարդ դաշտերի, անտառների, լճերի և գետերի երկայնքին:

Ճանապարհի ամբողջ երկայնքին, 15 կիլոմետր հեռավորության վրա, բազմահազար ժողովուրդ, դպրոցականներ, ժամերով անհամբեր սպասում են Հայոց Հայրապետի և շքախմբի հանդիսավոր անցքին:

Քոտայամից 3 կիլոմետր հեռավորություն վրա, կազմվել է հսկայական թափոռ Գլխավոր պողոտաների, փողոցների վրա, խանութների և մայթերի երկայնքին, տանիքների և պատշգամբների վրա, հավաքվել է ծովածավալ բազմություն, որը ծփում է, խաղաղ աեկոծվում, բայց կարգապահ և բարեկիրթ, սպասողական դիրքի մեջ:

Թափորը մուտք է գործում Քոտայամ: Պայթում է ուրախ բացականչությունների, փոթորկահանյզ ծափերի, կեցցենների որոտը:

Հաղարավոր դպրոցականներ, տոնական զգեստների մեջ, ծաղիկներ են շաղ տալիս Վեհափառ Հայրապետի ճանապարհի վրա:

Ձայնասփյուռը անդադար մալալայամերեն լեզվով, կրկնում է «Ջեյ, ջեյ Կաթոլիկոս», («Կեցցե՛, կեցցե՛ Կաթողիկոս») և ժողովուրդը կրկնում է նույնը:

Այստեղ ևս Հայոց Վեհափառ Հայրապետը և պատրիարք սրբազանը, նստած գեղեցիկ, ծաղկազարդ սպիտակ ավտոմեքենայի մեջ, հաղթական մուտք են գործում Քոտայամ:

Ամբողջ քաղաքը գրոշազարդվել և լուսավորվել է: Գուճգզույն, գեղեցիկ հրթիռներ, ըստ տեղական սովորության, ահեղ պայթյուններով պատում են օդը:

Ճանապարհի ամբողջ երկայնքին, Վեհափառ Հայրապետն ու սրբազան պատրիարքը օրհնում են ժողովուրդին, որը երկյուղածորեն գլուխ է խոնարհում և խաչակնքում:

Արդարև, բացառիկ էր Ամենայն Հայոց Հայրապետին և Նրա շքախմբին ցույց տրված ընդունելությունը, ջերմ, անմիջական, աննախընթաց:

Արդեն խաղաղ երեկոն իջել էր Քոտայամի վրա, երբ Հայրապետական մեծահանգես և համաժողովրդական թափորը մուտք է գործում նորակերտ Կաթողիկոսարանի ընդարձակ բակը, ուր նույնպես հավաքվել է մոտ տաս հազար ժողովուրդ: Այստեղ ևս օրինակելի էր բազմության կարգապահությունը:

Եկեղեցական թափորը խաղաղորեն ձեղքում էր մարդկային այդ ծովը, ուղղվելով դեպի Մայր Տաճար:

Կաթողիկոսարանի զխավոր դարբասի առաջ, բարձրացել էր կանաչազարդ և ծաղկազարդ կամար:

Կաթողիկոսարանի բոլոր շենուղիների ծառերը լուսազարգվել էին նրփներանգ էկեկտրական լամպերով:

Ուրախ և ցնծազին զողանում են եկեղեցու զանգերը, ավետելով Ամենայն Հայոց Հայրապետի ժամանումը Մալաթար եկեղեցու կաթողիկոսարան:

Քափորը կանգ է առնում քակում: Հայոց Հայրապետը, պատրիարք սրբազանը, շքախմբի անդամները և Մալաթար եկեղեցու միտրոպոլիտներ միայն մուտք են գործում եկեղեցի՝ աղոթելու և իրենց ուխտը կատարելու:

Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը, Կոմիտաս եպիսկոպոսը, Գավթի և Արսեն վարդապետները բարձրանում են ավագ սեղան. մյուսները տեղ են զբաղում դասում և առյանում:

Հայոց Հայրապետը խնկարկում է, մինչև Արևելքի հնազույն և պատմական եկեղեցու կամարների տակ Կոմիտաս սրբազանը երգում է «Ուրախ լեր»-ը:

Լուսավառ սեղանի առաջ աղոթում է Հայոց Հայրապետը վասն խաղաղության ամենայն աշխարհի և վասն հաստատության և միության Ընդհանրական, Առափնյական և Սուրբ եկեղեցվո:

Այս անգամ Մալաթար եկեղեցու աթոռանիստ Մայր Տաճարի կամարների տակ թընդում է խմբովին երգված «էջ Միածինն ի Շորէ» Հայ եկեղեցու հաղթերգը: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ս. էջմիածնի օրհնությունն ու հայրական իր ողբույններն է հաղորդում Մալաթար եկեղեցու «Պետին» Բասիլիոս Բ Կաթողիկոսին, բարձրաստիճան հոգևորականության, հավատացյալ ժողովրդին և օրհնում Քերալայի բարի և արդար հողը, ջուրն ու երկինքը:

Մալաթար եկեղեցու 98-ամյա ծերունագարդ Հայրապետը, վերջերս նոր կաթված ստացած բայց մի քիչ լավացած, թեև հիվանդ, բայց մեծ անձկությամբ սպասում է ողջագուրվելու: Հայոց Աշխարհի Հայրապետի հետ, որը գալիս է աստվածաշնչական Արարարատի ստորոտից և ծրուսաղեմի հայոց պատրիարքի հետ, որը գալիս է քրիստոսակոխ սուրբ տեղերից:

Նոր Վեհաքանի առաջին հարկում, համեստորեն կահավորված սենյակում տեղի է ունենում պատմական և անմոռանալի հանդիպումն ու ողջագուրումը երկու Հայրապետների:

Արցունքը աչքերին, զոգզոցող շրթներով բայց հոգեպես ուրախ, ծերունագարդ Տ. Բասիլիոս Կաթողիկոսը լքմապես ողբունում է գալուստը Հայոց Կաթողիկոսի, պատրիարքի և շքախմբի անդամների և անձամբ իր, ժո-

ղովրդի և իր եկեղեցու ուրախությունն և հայտնում այս աննախընթաց այցելության համար:

Հայոց Հայրապետը պատասխանում է նույնպես խորապես հուզված և ներկայացնում է իր շքախմբի անդամներին:

Այնուհետև սիրալիք զրույց է տեղի ունենում երկու բույր եկեղեցիների Պետերի և բարձրաստիճան հոգևորականների միջև սրտագին, եղբայրական մթնոլորտում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵԾ ՄԻՏԻՆԳ

Երեկոյան ժամը 8-ն անց է արդեն: Վեհափառ Հայրապետը բաժանվում է Բասիլիոս Կաթողիկոսից և իր շքախմբով առաջնորդվում քակում հատկապես պատրաստված բեմի վրա, ժողովրդի խելահեղ ծափահարությունների ներքո և տեղ է գրավում բեմի առաջին շարքի վրա, շրջապատված Մալաթար եկեղեցու միտրոպոլիտներով:

Բակում, եկեղեցու շրջակայքում, մոտակա այգիներում և անտառում հավաքվել է ավելի քան 30 000 մալաթար հավատացյալների բազմություն:

Կաթողիկոսարանի շրջապատը տոնական օրերի երևույթ է ստացել:

Ամեն կողմ դրոշակներ, Հայոց Հայրապետի և Մալաթար եկեղեցու կաթողիկոսական էմբլեմաներով զարդարված, ամեն կողմ լուսավառություն ու խանդավառություն:

Սկսվում է հրապարակային մեծ հանդիսությունը:

Լանուն Նորին Սրբաջյուն Տ. Բասիլիոս Բ-ի, կաթողիկոսական փոխանորդ գերաշնորհ Տ. Գրեկիսիոս միտրոպոլիտը, բարձրախոսի առաջ, ընդարձակ և սրտառույճառով ողբունում է Հայ եկեղեցու պատվիրակությանը, ծանրանալով Հայ եկեղեցու պատմության, նրա կատարած մեծ դերի, Հայ և Մալաթար բույր եկեղեցիների դավանության նույնության և սիրալիք հարաբերության վրա:

Գրեկիսիոս միտրոպոլիտը լքմա ցանկություն է հայտնում, որ արևելյան այս երկու հին և պատմական եկեղեցիների համագործակցությունը է՛լ ավելի ամրապնդվի և միասնական դառնա քրիստոնեությունը հուզող կարևոր և արդիական հարցերի մե:

Իր պատասխան խոսքի մեջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը գոհունակություն և շնորհակալություն է հայտնում այս խանդավառ, սրտառույճ հրապարակային հանդիպման, բացառել և չեմ ընդունելության համար և Մայր Աթոռ Ս. էջմիածնի օրհնություններն է բաշխում հավատացյալներին: Նորին Ս. Օծությունը շեշտում է, որ ինքը Փոտայամ այցելության է եկել եղբայ-

րական և սիրալիր հրավերովը նորին Ս. Օծուխուն Բասիլիոս Բ Կաթողիկոսի, ամրապնդելու համար Հայ և Մալաբար քույր եկեղեցիների համագործակցությունը, հայ և հնդիկ ժողովուրդների պատմական բարեկամությունը:

Հրապարակային այս հանդիպման ավարտին, երկյուղած մթնոլորտի մեջ, հնչում է Կոմիտասյան «Տէր ողորմեա»-ն Կոմիտաս սրբազանի շնորհալի կատարմամբ, որն աստվածային օրհնության նման իջնում է բոլոր ներկաների սրտերի և հոգիների ծալքերի մեջ:

Բազմությունը, երկյուղած և քար լուծյան մեջ, ունկնդրում է հոգեկան գերագույն հըրճվանքով:

Բացառիկ այս միտինգը վերջանում է Հայ եկեղեցու պատգամավորության խմբովին երգած «Հայր Մեր»-ով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Այնուհետև նորին Ս. Օծուխունն առաջնորդում է նորակերտ Վեհարանի դահլիճը, ուր կատարվում է Բասիլիոս Բ Կաթողիկոսի հայրապետական նկարի բացման հանդիսությունը, ժողովրդական խանդավառ բացականչությունների ներքո:

Քոտայամ այցելության առաջին օրվա հայտագիրը փակվում է գիշերային սքանչելի հրավառություններ, որը կազմակերպվել էր ի պատիվ օրվա հյուրերին:

Հայ եկեղեցու պատգամավորությունը առաջնորդվում է Վեհարանի տանիքը՝ մոտիկից դիտելու լույսերի այդ ցայգատոնը: Երփներանգ հրթիռները իրենց Ֆշշոցով խանգարում էին խաղաղ երկնքի անսահմանությունը և երկնակամարի վրա հորինում ծաղկաձևեր և մարում ասուպների և երազների նման:

Հրավառությունը շարունակվում է մինչև գիշերվա ժամը 10-ը:

Ժամը 10.30-ին, ի պատիվ Հայ եկեղեցու պատվիրակության, տրվում է ճաշկերույթ, Վեհարանի սեղանատանը, որին մասնակցում են նաև Մալաբար եկեղեցու բոլոր ներկա միտրոպոլիտները:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՆ ՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ

Նախապես պատրաստված և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի համաձայնությունն ենթարկված ծրագրի համաձայն, Հայ եկեղեցու պատվիրակությունը Քոտայամ էր մնալու մինչև նոյեմբերի 26-ը:

Մրագրում կարևոր տեղ էր հատկացվել Քերալայի նահանգում գտնվող մալաբար եկեղեցիների, վանքերի, ուսումնական հաստատությունների այցելությունը:

Մալաբար եկեղեցին այսօր ունի Քերալայում 10 եպիսկոպոսական թեմեր և թեմական կազմակերպություններ:

Նոյեմբերի 20-ից մինչև 26-ը Հայ եկեղեցու պատվիրակությունը այցելելու էր վերոհիշյալ 10 թեմերի կենտրոնները, ուր թեմի միտրոպոլիտի գլխավորությամբ կազմվել էին ընդունելության տեղական հանձնախմբեր:

Հանուն Վեհափառ Հայրապետի, Երուսաղեմի հայոց ամենապատիվ Ս. Եղիշե սրբազան պատրիարքը, ընկերակցությամբ Վրաստանի հայոց առաջնորդ Ս. Կոմիտաս եպիսկոպոսի, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանի և Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի դասախոս Ա. Կյուզելյանի, որը թարգմանի դեր էր կատարում, 6 օրվա ընթացքում այցելում է Պարաթոզի, Փաթանափիրամի, Կուրափիմփադի, Կոթմանկալամի, Տիրովելլայի, Նիրանամի, Կոլանչերիի, Վավելիկարայի, Մավելիկարայի, Փաթանամթիրդայի թեմական կենտրոններն ու եկեղեցիները, դպրոցները, վանքերն ու կուսանոցները:

Հայ եկեղեցու պատվիրակությունն ամեն օր, առավոտյան ժամը 9-ին, մեկնում էր այցելության և Քոտայամ էր վերադառնում գիշերվա ժամը 11-ին:

Հայ եկեղեցու պատվիրակությունն ամեն տեղ դիմավորվում էր խաչերով, խաչվառներով, եկեղեցական մեծահամդես թափորներով, հրավառությամբ:

Հանդիսությունը հաճախ մասնակցում էին նաև փղեր, ըստ տեղական սովորություն:

Մրբազան պատրիարք հայրը, իր շքախմբով, նստում էր վայելչորեն զարդարված, կարապանման մի ավտոմեքենայի վրա, ամպհոնովանու տակ, և երգերով, կեցցեներով ու խանդավառ ցույցերով առաջնորդվում շրջանի եկեղեցին:

Ճանապարհներին, մալալայամերեն և անգլերեն լեզուներով, անընդմեջ հնչում էր «Ջեյ, ջեյ Կաթողիկոս, ջեյ, ջեյ պատրիարքիս»:

Տների և խանութների առաջ, մոմերով և սպիտակ կտավներով, կարմիր խաչերով զարդարված և խնկավառ փոքր խորաններ էին պատրաստվել:

Նախքան եկեղեցի մտնելը, Հայ եկեղեցու պատգամավորությունը դիմավորվում էր ժողովրդական հուզումնախառն ուրախությամբ, ոսկեթել, ծաղկյա մանյակներով և առաջնորդվում եկեղեցի:

Մրբազան պատրիարք հայրը ողջունում և օրհնում էր ժողովրդին հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, շնորհակալություն հայտնելով աննախընթաց, արքայավայել այս ընդունելությանը համար: Կոմի-



Ընդունելություն մինիստր Ա. Մ. Թումասի այգում, Դելիում:

տաս սրբազանը երգում էր «Տէր ողորմեա»-ն կամ «Ուրախ լիք»-ը, իր ձայնի հմայքով և հայ շարականի քաղցր մեղեդիներով հմայելով բոլորին:

Ամբողջ մի շաբաթ Հարավային Հնդկաստանում, Քերալայում, Մալաբար Եկեղեցու թեմերը, ժողովուրդն ու բնիկները տոնական ցնծության և տրամադրության մեջ էին: Բոլորի շրթների վրա էին Հայոց Կաթողիկոս, Ս. Էջմիածին, հայոց պատրիարք, Ս. Նուսադեմ, Հայաստան, հայ ժողովուրդ, եղբայրություն, խաղաղություն բառերը:

Ամենուրեք, եկեղեցական արարողություններից հետո, եկեղեցու բակում տեղի էին ունենում ժողովրդական հավաքույթիներ, հանդիպումներ, ընդունելություններ ջերմ, սրտագին մթնոլորտում, որոնց մասնակցում էին նաև տեղական իշխանությանց, կառավարության ներկայացուցիչներ, բարձրաստիճան անձնավորություններ, գիտություն, արվեստի ներկայացուցիչներ:

ՄԻԱՅՅԱԼ ԹԵՄԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նոյեմբերի 20-ին, շոբեֆշաբթի, Քերալայի Մալաբար եկեղեցիների թեմական խորհուրդները, ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, կազմակերպում են թեյասեղան ֆոտոայամ քաղաքի Ս. Հովհաննես սրահում, հետմիջօրեի ժամը 5-ին, որին

հրավիրվել էին նաև նույն շրջանի քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական բարձրաստիճան պաշտոնակատարներ, թղթակիցներ և Մալաբար Եկեղեցու ականավոր դեմքեր:

Թեյասեղանից առաջ, ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբի հետ, հանդիպում է ունենում Քերալայի մալաբար օրթոդոքս երիտասարդության հետ, նրանց Ս. Գևորգ եկեղեցու սրահում:

Հանդիպման ներկա են լինում ավելի քան հազար երկսեռ համալսարանական ուսանողներ, կոլեջականներ, դասախոսներ, գիտություն, արվեստի երիտասարդ ներկայացուցիչներ և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետի և շքախմբի մուտքը դահլիճ ողջունվում է խանդավառ ծափերով, ծաղիկներով, ժպիտներով:

Ամեն կողմ երիտասարդություն, ուժ և գեղեցկություն:

Վեհափառ Հայրապետը, ծափերի տարափի տակ, առաջնորդվում է պատվո բեմ, ուր, հանուն Քերալայի քրիստոնյա երիտասարդության, կազմակերպության երիտասարդ և պատասխանատու ղեկավարները Հայ Եկեղեցու պատվիրակությանը ողջունում են ջերմ, սրտառուլ ճառերով:

Վերջում խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետը և հանդես է գալիս երիտասար-

դուրսից ուղղված բովանդակալից խրատու- սիչ ճառով: Նորին Ս. Օծուխյունը հատկապես շեշտում է որևէ ժողովուրդի կյանքի զարգաց- ման և առաջադիմության բնագավառում կրճեի և գիտության նվիրված երիտասարդ մարդկանց համագործակցության անհրա- ժեշտությունը: Հայոց Հայրապետը խոսում է նաև խաղաղության ամրապնդման և ժողո- վուրդների բարեկամության մասին, կոչ է անում երիտասարդության այդ ոգով աշխա- տել միասնաբար: Նորին Ս. Օծուխյունը խո- սում է նաև հայ ժողովուրդի և բոլոր խորհրդա- յին ժողովուրդների համակրանքի և բարե- կամության մասին դեպի հնդկիկ խաղաղասեր և աշխատասեր ժողովուրդը:

Երիտասարդների հետ հանդիպման ավար- տին, Վեհափառ Հայրապետը, իր օրհնության հետ միասին, խաշիկներ է բաժանում բոլոր ներկաներին, որոնք երկյուղած, աջահամ- բույրով, Հայոց Հայրապետի ձեռքից ընդու- նում են հիշատակի նվերները:

Ժամը 5-ին, Հայոց Հայրապետը, իր շքա- խմբի ընկերակցությամբ, հանդիսավոր մուտք է գործում Ս. Հովհաննես սրահը, ուր իր պատվին կազմակերպվել էր թեյասեղան: Հայ Եկեղեցու պատվիրակության մուտքը դահլիճ ընդունվում է որոտընդոտ ծափա- հարություններով:

Սեղանների շուրջ արդեն իրենց տեղերն են գրավել ավելի քան 400 եկեղեցական, պե- տական, պաշտոնական և թեմական կազմա- կերպությանց, այլ ներկայացուցիչներ, մտա- վորականներ:

Հայոց Հայրապետը տեղ է գրավում պատ- վո սեղանի կենտրոնում, իր շուրջն ունենա- լով սրբազան պատրիարք հորը, Կոմիտաս նպիսկոպոսին, մալբար միտրոպոլիտներին և բուլը եկեղեցիների պետերին:

Ընդունելության ժամանակ, Ամենայն Հա- յոց Հայրապետին և Հայ Եկեղեցու պատվի- րակության ներկայությունը ողջունում են կաթողիկոսական փոխանորդ Դրոնիսիոս միտրոպոլիտը, Մաթ Թովմա եկեղեցու միտ- րոպոլիտը, Քերալայում Անգղիկան Եկեղեցու տեղագի եպիսկոպոսը, Բաղաբապետը, թե- մերի ներկայացուցիչներ և մտավորական- ներ:

Ընդունելության ժամանակ խոսք է անում նաև Հայոց Վեհափառ Հայրապետը և շեշ- տում, որ ինքը անցնող մեկ-երկու օրերի ըն- թացքում շփման մեջ լինելու առիթն է ունեցել Հնդկաց հյուրընկալ աշխարհի պետական և կրոնական պատասխանատու մի շարք մարդ- կանց հետ, ժողովուրդի լայն զանգվածների, մտավորականության, ուսանողության հետ և իր սեփական փորձով հաստատում է, որ հնդկիկ ժողովուրդը բարի, պարզ, աշխատա-

սեր ժողովուրդ է, հոգեկան արժեքներ դա- վանող ժողովուրդ, որը միաժամանակ խա- ղաղասեր ժողովուրդ է, որ երբեք պատերազմ չի ուղում ոչ իր և ոչ էլ ուրիշ երկրների սահ- մանների վրա:

Հայոց Հայրապետի ելույթն ընդհատվում էր փոթորիկահունչ ծափահարություններով:

Իր խոսքի վերջում, Նորին Ս. Օծուխյունը հույս է հայտնում, որ իր և սրբազան պա- տրիարք հոր այցելությունը Մալբար Եկեղե- ցու պետ Նորին Սրբություն Բասիլիոս Բ Կաթողիկոսին և Քերալայի բովանդակ քրիս- տոնյա հավատացյալներին մասնավորաբար և Հնդկաստան ընդհանրապես, կամրապնդի հնդկիկ և հայ ժողովուրդների, Հնդկիկ Մալա- բար և Հայ եկեղեցիների բարեկամությունը և համագոյակցությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՅԵԼՈՒՄ Է ԲՈՏԱՅԱՄԻ ՀՈԳԵՎՈՐ ԸՆՄԱՐԱՆԸ

Նոյեմբերի 20-ին, չորեքշաբթի, հանդիսա- վոր կերպով նշվում է Քոտայամում Մալա- բար Եկեղեցու հոգևոր ձեմարանի 150-ամյա- կը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեբաստիկ այցելության առթիվ:

Սրբազան պատրիարք հայրը, որը Տ. Կո- միտաս սրբազանի, Ա. Հատիտյանի և Ա. Կյուզելյանի հետ բնակվում էր հոգևոր ձե- մարանում, շաբաթ առավոտ, ժամը 8.30-ին, ձեմարանի գեղեցիկ այգում, աղոթքով և հանդիսությամբ, բարձրացնում է ձեմարանի 150-ամյակի հանդիսության նվիրված հա- վատի և բարեկամության դրոշը:

Հանդիսության ներկա են հոգևոր ձեմա- րանի վերատեսչությունը, դասախոսական կազմը, ուսանողությունը:

Սրբազան պատրիարքը գեղեցիկ ճառով դիմում է ուսանողության, շնորհավորելով ձեմարանի բացման 150-ամյակը:

Ժամը 9.30-ին, ձեմարան է ժամանում Հա- յոց Վեհափառ Հայրապետը, հոգեշնորհ Տ. Դավիթ և Տ. Արսեն վարդապետների, միտ- րոպոլիտների և այլ պաշտոնական անձանց ուղեկցությամբ:

Ձեմարանի Ս. Հովսեփ մատան մեջ, հան- դիսավոր պատարագ է մատուցում ձեմարա- նի երիտասարդ և գիտնական վերատեսուչ, միտրոպոլիտ Ֆիլոքսիոսը Ճաշու Ավետա- րանն ընթերցում է Տ. Արսեն վարդապետը:

Վեհափառ Հայրապետը, սրբազան պատ- րիարքը և շքախմբի անդամները հետևում են սուրբ պատարագի արարողության, մալա- բար պատարագամատուցի անգլերեն թարգ- մանությամբ:

Հայ և Մալբար եկեղեցիների պատարագ- ները համարյա նույնն են:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Ս. Եղիշե պատրիարք հայրը՝ «Զհաւատս պահեցի» բնաբանով: Քարոզը տեղում թարգմանվում է անգլերեն և մալայալամերեն լեզուներին:

Հավարտ սուրբ պատարագի, Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ, հոգեհանգիստ է կատարվում եկեղեցում թաղված Մար Հովսեփ Դիոնիսիոսի գերեզմանի վրա, որը 150 տարի առաջ հիմնադրել է հոգևոր ճեմարանը:

Այնուհետև, Նորին Ս. Օծուխյունը, եկեղեցական թափոռով, առաջնորդվում է ճեմարանի այգին, եկեղեցու հյուսիսակողմը, և հանդիսավոր իրադրութեան մեջ կատարում է նոր ճեմարանի շենքի հիմնարկները:

Վեհափառ Հայրապետը ապա հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դերին նվիրված բովանդակալից ճառով, դասախոսական կազմին, ուսանողությանն ուղղված պատգամներով:

Ճեմարանի սեղանատանը, Հայոց Հայրապետի և շքախմբի պատվին, տրվում է թեյասեղան:

Այնուհետև, Նորին Ս. Օծուխյունը մասնավոր հանդիպում է ունենում ճեմարանի ուսանողության հետ, հետաքրքրվում նրանց կյանքով, ուսումնական աշխատանքներով, տեղեկություններ է հաղորդում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի մասին, և բնդհանուր խանդավառությամբ, ծափերի մեջ, Ս. Էջմիածին է հրավիրում ճեմարանի ուսանողական պատվիրակությանը, Հ. Փիլիպոս վարդապետի գլխավորությամբ, որն արդեն եղել է Մայր Աթոռում և Շգիտե ճանապարհը»:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը, օրհնությամբ և աջահամբույրով, խաչիկներ է բաժանում դասախոսական կազմին և ուսանողության:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը վերադառնում է Վեհարան, ուր մասնավոր տեսակցություն է ունենում Նորին Սրբություն Ս. Բասիլիոս Բ Կաթողիկոսի և միտրոպոլիտների հետ, Հայ և Մալաբար եկեղեցիները հետաքրքրող միջեկեղեցական հարցերի, փոխադարձ այցելությունների և երկու եկեղեցիների ապագա համագործակցությունը ամրապնդելու մասին, որպես դավանակից բուլբու եկեղեցիներ:

Իսկ սրբազան պատրիարք հայրը, շքախմբի մյուս անդամներով, շարունակում է իր այցելությունները:

Հայ եկեղեցու պատվիրակությունը, Եռյնբերի 23-ին, շաբաթ, այցելում է ավելի քան 8 եկեղեցական կեդրոններ, դպրոցներ, վանքեր:

Ժամը 5-ին, Հայ եկեղեցու պատվիրակությունը հասնում է Նիւրաւամ, ուր Ս. Թովմաս առաքյալը հիմնել է քրիստոնեական առաջին եկեղեցին Հնդկաստանում:

Ավելի քան 120 000 ծով բազմություն հավաքվել էր ճանապարհների, գյուղերի, այգիների և եկեղեցու ընդարձակ բակում, ողջունելու Հայ եկեղեցու բարձր պատվիրակության:

Վեհափառ Հայրապետը, ավելի կանուխ հասած, առաջնորդարանի պատշգամբից դիտում էր, խորապես հուզված, այս աննախընթաց հանդիսությունը, երբ Նիւրաւամ է հասնում սրբազան պատրիարք հորը բերող մյուս եկեղեցական թափոռը, հսկա փղերի առաջնորդությամբ:

Մարդկային ծով, որը սակայն խաղաղ ծփում է, փակում ավազների վրա և հանգչում:

Աննկարագրելի է ժողովրդի խանդավառությունը, հոգեկան բերկրանքը:

Հավատի այս նոր պոռթկումը, քրիստոնեական եղբայրության, միություն այս վառ արտահայտությունը խորապես հուզում է Հայ եկեղեցու պատվիրակությանը:

Ուրախության արցունք կա Վեհափառ Հայրապետի, սրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամների աչքերում, որոնք, մոռացած օրվա հանդիսության խոնջները, ճանապարհների արևն ու փոշին, հոգևին ուրախ են և բարձր տրամադրության մեջ:

Եկեղեցու բակում, ավազների վրա, ծալապատիկ նստել է հավատացյալների բազմությունը, ոչ մի աղմուկ, ոչ մի անկարգություն: Հայ եկեղեցու պատվիրակությունը տեղ է գրավել եկեղեցու հարավային կողմում կանգնեցված բարձր բեմի վրա:

Բարձրախոսների առաջ ողջունյի խոսքեր, օրհնության խոսքեր, եղբայրության և բարեկամության սրտառուչ, անմոռանալի խոսքեր են արտասանվում:

Հայրապետական Ս. Աջը, գիշերվա ժամը 9-ին, բարձրանում է օրհնելու հուզումից, ուրախությունից արբշիռ այս բարի, ճշմարտապես քրիստոնյա, ազնիվ ժողովրդին:

Նոյեմբերի 23-ը վերածվում է հայ և հընդիկ ժողովուրդների բարեկամության վառ տոնի:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ ԶՈՍԱՅԱՄՈՒՄ

Նոյեմբերի 24-ին, կիրակի, ժամը 10-ին, Հայոց Վեհափառ Հայրապետը, Քոտայամ քաղաքի դպրեվանքի մատան ընդարձակ այգում, շարժական Ս. Սեղանի վրա, մատուցում է հայկական հանդիսավոր սուրբ պատարագ:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա են Քերթլա նահանգի մալաբար եկեղեցիների բոլոր թեմակալ միտրոպոլիտները, կրթական, ծխական կազմակերպություններ, հոգևորականներ, երիտասարդական կազմակերպություններ, կոլեջների, դպրոցների երկսեռ աշակերտությունը և ժողովրդի հսկաբազմություն, շուրջ 12 000 հոգի:

Ընդարձակ դաշտի վրա, կանաչազարդ տաղավարների ներքո հավաքված ուխտավոր բազմությունը, ամենայն շեմեռանդությունով և խորին լուսնության մեջ, ունկնդրում է հայկական սուրբ և անմահ պատարագը:

Մալաբար բարձրատիճան հոգևորականությունը հետևում է սուրբ պատարագի հայերեն արարողության, հայոց պատարագամատուցի անդերեն թարգմանություն, մինչև Չ. Փիլիպոս վարդապետը, բարձրախոսի առաջ, մալալամերեն լեզվով կատարում է սուրբ պատարագի արարողության թարգմանությունը: Ժողովուրդը հասկանում է սուրբ պատարագի արարողությունը, որովհետև դա շատ նամանություն ունի իրենց Մալաբար եկեղեցու պատարագի ձևի և բովանդակության հետ:

Հայրապետական հանդիսավոր պատարագի ժամանակ Ս. Սեղանին սպասարկում են Տ. Կոմիտաս սրբազանը, Տ. Դավիթ, Տ. Արսեն վարդապետները, երգելով միաժամանակ սարկավազի բաժինը: Իսկ ներքևից դպիրների մասը երգում են Ա. Հատխայանը և Ա. Կյուզեյանը:

Սուրբ պատարագին ներկա է նաև պատրիարք սրբազանը, որն ընթերցում է Ճաշու գիրքը:

Ճաշու Ավետարանը ընթերցվում է մալալամերեն լեզվով:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը: Քարոզը, թարգմանված նախապես մալալամերենի և անդերենի, բարձրախոսների միջոցով լսելի էր դառնում հավատավոր բազմության.

«Ամենակարգն Աստված, արարիչը երկրների և երկրի, սանդղիչը ազգի մարդկան, զմեզ բարս կպանե իր խնամքի տակ, կանաչեռոզե մեր կյանքը, կլուսավորե մեր կյանքի համբան, կընդհան մեզի ուժ և ներշնչում, կօգնե մեզի, որ մեր ձեռաց գործերը ըլլան արդար և բարի արդյունքներով:

Միշտ փառք և պատիվ Աստուծո, մեր երկնավոր Հորը, որ մեզ կխնամե:

Փառք և պատիվ Որդվայն Աստուծո՝ Հիսուս Քրիստոսի, որ եկավ աշխարհ իրեն Փրկիչ ազգի մարդկան և բերավ մեզի իր Ավետարանը, իրեն մեծագույն պարգև երկրների: Ինձավատանք Հոր Աստուծո, կնավատանք Որդվայն Աստուծո և մեր Փրկչին՝ Հի-

սուս Քրիստոսին և կնավատանք հակ Ս. Հոգվայն, որ շունչն է Աստուծո, որուն պարգև են Ս. Եկեղեցին և անոր սուրբ առաքելությունը:

Սիրելի՛ ժողովուրդ ի Քրիստոս, Մենք կնավատանք, թե բոլոր Քրիստոսյա եկեղեցիներու Գլուխը ինքը մեր Փրկիչն է, Հիսուս Քրիստոս, որ կնակե մեր վրա և կօգնե մեզի, որպեսզի մեր եկեղեցիները պահվին անշարժ և անսասան, բարգավաճ վիճակի մեջ:

Հայոց Առաքելական Եկեղեցին արևելյան հին եկեղեցիներեն մեկն է, որ տարածեց Ս. Ավետարանի լույսը Արևելքի մեջ, առաքելական ժամանակներեն, մասնավորապես Ռ. դարեն սկսյալ, և հաճախ օգնեց իր ֆույր եկեղեցիներուն ամեն կերպով:

Օրթոդոքս Սուրիական Եկեղեցին և բոլոր արևելյան եկեղեցիները Մենք շատ մտ կնկատենք Մեր արտին և հոգիին: Անոնք նման են հավատաբով և վարդապետությամբ, և, իրարու հետ գործակցելով, կկազմեն Քրիստոնեական եղբայրակցություն մը:

Մասնավորապես հիմա է, որ մենք ավելի պետք է մտնենք իրարու և աշխատինք միասին իբրև եկեղեցիներ:

Թող Տերը օրհնե մեր եկեղեցիներուն մերձեցումը և համագործակցությունը:

Մենք, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, Քերթլա եկած եք բերելու Մեր օրհնությունը ձեռք հին եկեղեցիին, որ լի է աստվածային շնորհներով, ծերունագարդ Բասիլիոս Բ Կաթողիկոսին, ձեր Եկեղեցվո համայն կրոնական դասուն և բոլոր ի Քրիստոս հավատացյալներուն:

Մեր այս այցելության առթիվ, տեսնեք ձեր եկեղեցիները, հանչեցանք ձեր հոգևորականներն ու ժողովուրդը և սիրեցինք բոլորը: Դուք կապրիք կազմակերպված Քրիստոնեական կյանք մը, հավատքը կենդանի է Ձեր մեջ և ձեր Եկեղեցին կանի ու կմեծնա: Այս բոլորը Մեզի ուրախություն կպատճառեն, այս բոլորը Մեզի համար պիտի մեան անմոռանալի:

Կեցցե՛ք Քերթլայի Օրթոդոքս Եկեղեցին, կեցցե՛ք նորին Սրբություն Բասիլիոս Կաթողիկոսը, բոլոր եպիսկոպոսները և ֆահաճաները, կեցցե՛ն բոլոր հավատացյալները:

Մենք կաղոթենք ձեր բոլորին համար, հոգևորականներուն և ժողովուրդին համար, որպեսզի, փոխադարձ հարգանքով ու սիրով ձեռք-ձեռքի տված, առավել զորացնեք ձեր եկեղեցին, ձեր հոգևոր կյանքը, նոր հաջողությամբ համբա բանաք, ձեր համայնքները անեցնելով և ավելի ու ավելի բարգավաճ դարձնելով գանձեք: Բոլորիդ կմաղթենք Եռանդ ձեր գործերուն մեջ, զոհողության և հաճախության ոգի:



Հնդիկ մաշքար ժողովուրդը ուղեկցում է Վեռափառ Հայրապետին Գոշինց դեպի Ջոտայամ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միշտ ձեզի հետ պիտի ըլլա և ձեզի հետ պիտի աղոթե և ձեզի հետ միասին աշխատի:

Մեր Քոտայամ այցելությամբ ետ էջ մը կրացվի պատմության մեջ՝ մեր երկու եկեղեցիներուն համար: Բացված էջը պետք չէ որ պարապ մնա, այլ դուր և մենք պետք է այնտեղ գրենք մեր ապագա գործակցությանց ապացույցները՝ ի փառս Աստուծո և ի մխիթարություն մեզ: Մենք պետք է իրար ճանչնանք ավելի մտան և առավել սիրենք զիրար: Մենք փոխադարձաբար ավելի գիտակից պետք է ըլլանք, թե ի՛նչ բան իրարու կմիացնեն մեզ և ամբողջ ֆրիստոնեական աշխարհը:

Արևելքի հին առաքելական եկեղեցիները, որոնք դարերով պանեցին ֆրիստոնեական ամենեն հարագատ ավանդությունները, պետք է ֆովեֆով կանգնին և արդարացնեն իրենց նշմարտություններն ու տեսակետները եկեղեցիներու միության խնդրին մեջ, ամուր պահելու համար պատմական հնագույն ինֆնուրույնությունը, մեր ներկա դրության մեջ:

Ինչպես անցյալին, այնպես ալ ներկայիս, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին պատրաստ պիտի ըլլա միշտ՝ աշխատելու մույն ոգիին համաձայն և պիտի օգնե արևելյան ֆույր եկեղեցիներուն, որպեսզի բոլորս միասին կարենանք հասնիլ գործակցաբար մեր միության: Հայաստանյայց Եկեղեցին,

իր շուրջ 5 000 000 ժողովուրդով և հոգևորական կեդրոններով, այսօր կազմակերպված կենդանի Եկեղեցի մըն է:

Մեր կեդրոններն են Ս. Էջմիածինը, ուր կգտնվի Աթոռը Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի Դ դարեն սկսյալ, Անթիլիաս, ուր կգտնվի Կիլիկիո հայոց Կաթողիկոսի Աթոռը, Երուսաղեմ, ուր Առաքելական Ս. Աթոռն է հայոց Պատրիարքության, և Կոստանդնուպոլիս, ուր կգտնվի Թուրքիո հայոց Պատրիարքության պատմական Աթոռը, և զանազան եպիսկոպոսական Աթոռներ ի Հայաստան, Միջին Արևելք, Եվրոպա և երկու Ամերիկաները:

Այսօր այստեղ ներկա է Հայոց Առաքելական Եկեղեցին, որուն Մայրագույն Պատրիարքը կգտնվի ձեր մեջ, Իրեն հետ ունենալով Երուսաղեմի պատրիարք ամենապատիվ Ս. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը:

Հոգեկան անսահման ուրախություն է Մեզի համար այս սուրբ պատարագին ձեզի հետ միասին ըլլալ: Աղոթենք միասին, մեր երկու ֆույր եկեղեցիներու հաստատության, հառաչդիմության և ծաղկման համար: Թող Աստված պայծառ և հաստատուն պահե ձեր Եկեղեցին և օրհնե ձեր հավատարիմ ժողովուրդը: Թող Աստված պահե ձեր սիրելի երկիրը խաղաղության և բարգավաճման մեջ, երկիր մը, որ ունի մեծ հոգի:

Թող Աստված հաստատ պահե խաղաղու-
թյունը ամբողջ աշխարհի և անեցնե սերը և
բարեկամությունը ազգերու և ժողովուրդնե-
րու միջև: Թող պատերազմը հեռու ըլլա մար-
դու կյանքի սահմաններեն: Խաղաղություն
հեռավորաց և մեծավորաց, խաղաղություն
ամենեցուն:

«Ողորմութիւն Աստուծոյ և սէր և խաղա-
ղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
եղիցին ընդ ձեզ այժմ և յաիտեան»:
Ամեն»:

ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 24-ին, կիրակի, երեկոյան ժա-
մը 7-ին, Վեհարանի այգում, Վեհափառ
Հայրապետի և շքախմբի պատվին տրվում է
հրաժեշտի ընդունելութիւն:

Ճաշկերութիւն ներկա են զուլգ Հայրա-
պետները՝ Նորին Ս. Օծովթյուն Ս. Ս. Վազգեն
Ա և Նորին Սրբութիւն Ս. Ս. Բասիլիոս Բ,
Երոտադեմի հայոց ամենապատիւ Ս. Նղիշե
սրբազան պատրիարքը, Վրաստանի հայոց
առաջնորդ Ս. Կոմիտաս եպիսկոպոսը, Ս.
Դավիթ և Ս. Արսեն վարդապետները, Ա. Հա-
տիտյանը և Ա. Կյուզելյանը:

Հրաժեշտի ընդունելութեան մասնակցում
են նաև Մալաբար Եկեղեցու բարձրաստի-
ճան հոգեւորականութեան ներկայացուցիչնե-
րը, Քոտայամի քաղաքապետը և իշխանու-
թեանց այլ ներկայացուցիչներ, հասարակա-
կան գործիչներ, գիտութեան, արվեստի ներ-
կայացուցիչներ, թղթակիցներ:

Թեև հիվանդ, Ս. Բասիլիոս ժերոմազարդ
Հայրապետը ցանկացել է ներկա լինել Հայոց
Հայրապետի պատվին տրվող հրաժեշտի ըն-
դունելութեան:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապե-
տը:

Այնուհետև, ճաշկերութի ժամանակ ճա-
ռեր են փոխանակվում երկու Կաթողիկոսների
կողմից, շեշտելով երկու բուլղ եկեղեցիներին
համազործակցութեան դերն ու կարևորութեան-
ընդ, փոխադարձ նման պարբերական այցե-
լութիւններով:

Ընդունելութեան ժամանակ Հայ Եկեղեցու
պատվիրակութեանը ողջունում են ներկանե-
րից ոմանք, շեշտելով Ամենայն Հայոց Վե-
հափառ Հայրապետի այցելութեան պատմա-
կան նշանակութիւնը Քերալայում:

Երկու Կաթողիկոսները իրենց հանդիպումն
ու ողջագոյությունը կնքում են փոխադարձ
նվերներով մատուցումով:

Ընդունելութեանը վերջանում է սրտագին
մթնոլորտում, մի նոր և գեղեցիկ էջ ավելաց-
նելով Հայ և Մալաբար եկեղեցիների պատ-
մութեան վրա:

**ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ՀՐԱԺԵՇՏ Է ԱՌՆՈՒՄ**

Նոյեմբերի 25-ին, երկուշաբթի, առավոտ-
յան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը
հրաժեշտ է առնում Նորին Սրբութիւն Ս.
Բասիլիոս Կաթողիկոսից:

Հուշիչ էր հրաժեշտի պահը:

Վեհարանում, Բասիլիոս Կաթողիկոսի ա-
ռանձնասենյակում, մտերիմ սեղանի շուրջ
հավաքված, Ամենայն Հայոց Հայրապետը,
սրբազան պատրիարք հայրը, Կոմիտաս ե-
պիսկոպոսը և շքախմբի մյուս անդամները
ջերմ զրույց են ունենում Ս. Բասիլիոս Կաթո-
ղիկոսի և Մալաբար Եկեղեցու բարձրաստի-
ճան միտրոպոլիտների հետ:

Հայոց Հայրապետը իր, պատրիարք սրբա-
զան հոր և շքախմբի անդամների անունից
ջերմ շնորհակալութիւն է հայտնում խան-
դավառ դիմավորման և սրտագին հյուրասի-
րութեան համար, և Մալաբար Ս. Էջմիածին
է հրաւիրում Մալաբար բուլղ Եկեղեցու
պատգամավորութեանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի
եղբայրական այս հրավերը ընդունվում է
ժափահալութիւններով:

Տեսակցութեան վերջավորութեան, հուշա-
նվերներ են տրվում Հայ Եկեղեցու պատգա-
մավորութեան անդամներին:

Անմոռանալի էր հրաժեշտի վերջին րոպեն,
երբ երկու Հայրապետները ողջադարձամբ
հրաժեշտ էին տալիս միմյանց:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը մեկ-
նում է Էրնակուլամ, Ս. Դավիթ, Ս. Արսեն
վարդապետներին ընկերակցութեամբ:

Իսկ պատրիարքը սրբազան հայրը, Ս. Կոմի-
տաս եպիսկոպոսը, Ա. Հատիտյանը և Ա.
Կյուզելյանը մեկնում են հովվական վերջին
այցելութեան, դեպի Կոլենշերի գավառը:

Հայ Եկեղեցու պատվիրակութեանը, հանուն
Հայոց Հայրապետի, նույն օրը այցելում է
ավելի քան 7 եկեղեցի, արժանանալով սրբո-
տագին ընդունելութեան և հյուրասիրութեան:

Պատվիրակութեանը գիշերվա ժամը 11-ին
վերադառնում է Քոտայամ և հաջորդ օրը,
նոյեմբերի 26-ին, երեքշաբթի, առավոտ կա-
նուխ մեկնում է Էյնուկուլամ, միանալու Վե-
հափառ Հայրապետին:

Էրնակուլամի տուրիստական միջազգային
հյուրանոցում հանգստանալուց հետո, ժամը
11-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմ-
բով, մեկնում է Գոչին, ինքնաթիռով Բոմբեյ
գնալու համար:

Հայ Եկեղեցու պատվիրակութեանը ճանա-
պարհում են մեծահանդես շքով և թափոքով:

Էրնակուլամից մինչև Գոչինի օդանավա-
կայանը երկարաձգվում էր ողջերթի կեպծ

վերջնական և պետական անձանց ավտոմե-
 նաների շարասյունը: Քերական օղալին
 Օղանավակալանում, Քերական օղալին
 պատարկության վարչությունը և հրամանա-
 տարությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի
 պատրիարքի, կազմակերպել էին մրգասե-
 րան:

Քերական իր վերջին հարգանքն էր մատու-
 ցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապե-
 տին և նրա շքախմբին:

Հայոց Հայրապետը, վերջին անգամ օրհ-
 նելով Հայրավայրին Հնդկաստանի այս հյուր-
 անկալ, դրախտանման հողը և նրա բարի,
 առաջատար և խաղաղասեր ժողովրդին,
 հրաժեշտ էր անում և առաջնորդվում ինք-
 անաթիո, կեցցենների և ծափերի սրտագին
 նմիջոցով:

Ժամը 12-ին ինքնաթիռը բարձրանում է
 և կրկին ք և մեկնում դեպի Բոմբեյ:

ԺԱՄԱՆՈՒՄ ԲՈՄԲԵՅ

Նոյեմբերի 26-ին, երեջարքի, երեք ժամ
 տևող խաղաղ և հանգիստ թռիչքից հետո,
 Վեհափառ Հայրապետը ժամանում է Բոմբեյ
 իր շքախմբի հետ և ընդունվում է փոքրաթիվ
 հայ գաղութի կողմից արժանավայել մեծա-
 քանքով, գլխավորությամբ արժանապատիվ
 Տ. Մաշտոց բահանա Թյուֆենքճյանի, որը
 վերջերս է ժամանել Բոմբեյ՝ որպես ծխատեր
 բահանա:

Բոմբեյում Հայոց Հայրապետին դիմավոր-
 րում են նաև սովետական ընդհանուր հյու-
 պատուսը, Մալաբար Եկեղեցու ներկայացու-
 ցիչները, տեղական իշխանությունց ներկա-
 յացուցիչներ և թղթակիցներ:

Նորին Ա. Օծուխյանն առաջնորդվում է
 Բոմբեյի հայոց Ա. Պետրոս եկեղեցին, ուր
 մուտք է գործում «Հրաշափառ»-ով, ողջու-
 նում է բոլոր ներկաներին և օրհնում նրանց:

Ներկայումս Բոմբեյում ապրում են միայն
 26 հայեր, տարբեր դարձմունքի տեր մարդիկ:
 Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով,
 առաջնորդվում է ծովեզերյա Թաշ Մահալ
 հյուրանոցը, ուր առանձին հարկաբաժիններ
 են հաստիացվում նորին Ա. Օծուխյան և պատ-
 րիարք հորը:

Նոյեմբերի 27-ին և 28-ին, շորեքշարքի և
 հինգշարքի, Վեհափառ Հայրապետը, հյուրա-
 նոցի իր հարկաբաժնում, բարեհաճում է ըն-
 դունել Բոմբեյի հայոց եկեղեցական վար-
 շության և առանձին անհատների այցելու-
 թյունները:

Բոմբեյում, Վեհափառ Հայրապետի շքա-
 փառքն միանում են Կալկաթայից պր. Պետրոս
 Ալեքսյանը և պր. Կարո Մարտինը, որպես
 հրավիրակներ նորին Ա. Օծուխյան Կալկաթա
 առաջնորդելու համար:

Նոյեմբերի 28-ին, հինգշարքի, Վեհափառ
 Հայրապետը, Մեծի Տանն Կիլիկիո երրեն Ա
 Կաթողիկոսին, Երուսաղեմի լուսարարապետ
 Հայրիկ արքեպիսկոպոսին և Կոստանդնու-
 պոլսի Շնորհք պատրիարքին հղում է հետե-
 յալ հեռագիրը, Քոտայամ կատարած իր այ-
 ցելության մասին:

«Տիրոջ ողորմությամբ, պատասխանելով
 Նորին Սրբություն Տ. Իսաիլիոս Բ Կաթողի-
 կոսի հրավերին, այցելեցիս Քոտայամ, Ե-
 րուսաղեմի ամենապատիվ պատրիարք Եղիշե
 սրբազանի հետ միասին, նոյեմբեր 19—26:

Այս երջանիկ առիթով, հանուն Հայ Եկե-
 ղեցվո, ողջուացին Նորին Սրբությունը և հո-
 գևոր դասը և ավելի ամրապնդեցին սիրո
 կապերը արևելյան մեր երկու փայլ եկեղե-
 ցիներու միջև:

Ուր օրերու ընթացքին, վայելեցինք ար-
 տակարգ, ջերմ հյուրասիրությունը ծերունա-
 զարդ Բասիլիոս Ի Հայրապետին և տեղական
 իշխանությանց:

Հատուկ ծրագրով այցելեցինք թմեր,
 վանքեր, վարժարաններ, հիմնարկներ, տաս-
 նյակ հազարավոր հավատացյալներու ցնձա-
 գին մասնակցությամբ»:

Նույն օրը, սայր Աթոռի դիվանը, Վեհա-
 փառ Հայրապետի Քոտայամ այցելելու առ-
 թիվ, թեմերին ուղղում է հետևյալ հեռագիրը.

«Տիրոջ ողորմությամբ, Ամենայն Հայոց
 Կաթողիկոս Վազգեն Ա և Երուսաղեմի ամե-
 նապատիվ Տ. Եղիշե պատրիարք այցելեցին
 Քոտայամ (Հեղկաստան), հրավերով Նորին
 Սրբություն Բասիլիոս Բ Կաթողիկոսի, նոյեմ-
 բեր 19—26:

Վեհափառ Հայրապետը և ամենապատիվ
 պատրիարքը, հանուն Հայ Եկեղեցվո, ողջու-
 նեցին Հեղիկ Մալաբար Եկեղեցվո ծե-
 րունազարդ Կաթողիկոսը և հոգևոր դասը և
 առավել ամրապնդեցին սիրո կապերը արե-
 վելյան մեր երկու փայլ եկեղեցիներուն մի-
 ջև, վայելելով արտակարգ ջերմ հյուրասի-
 րությունը Բասիլիոս Հայրապետին և տեղա-
 կան իշխանությանց:

Ամենայն Հայոց Վազգեն Կաթողիկոսը և
 Եղիշե սրբազան պատրիարքը, հատուկ
 ծրագրով, այցելեցին Քերական նահանգի
 թմերը, վանքերը, վարժարանները, հիմ-
 նարկները, տասնյակ հազարավոր հավա-
 տացյալներու ցնձագին մասնակցությամբ:

Վեհափառ Հայրապետը բացօդյա սուրբ
 պատարագ մատուց Քոտայամ, կիրակի, 24
 նոյեմբերին, բազմահազար ժողովուրդի առ-
 ջև:

Վեհափառ Հայրապետը նոյեմբեր 26-են
 դեկտեմբեր 3 կգտնվի Բոմբեյ և դեկտեմբեր
 3—15՝ Կալկաթա. դեկտեմբերի 17-ին Դելի-
 են կմեկնի դեպի Ս. Էջմիածին»:

Նոյեմբերի 29-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամների ուղեկցությամբ, այցելում է Բոմբեյի նահանգապետ պր. Զայնանիին:

Հայոց Վեհափառ Հայրապետի և պր. նահանգապետի միջև տեղի է ունենում ջերմ շրույց:

Ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Տ. Արսեն վարդապետը և Ա. Հատիտյանը այցելում են Բոմբեյի սովետական ընդհանուր հյուպատոսին:

Հայոց Վեհափառ Հայրապետի և պր. հյուպատոսի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, մտերիմ մթնոլորտում:

Տեսակցողական ներկա է լինում նաև Երեւանի պոլիտեխնիկ ինստիտուտի 1954—1955 թվականի շրջանավարտ ինժեներ Անդրանիկ Խաթաբյանը Երևանից, որը 3 տարուց ի վեր Բոմբեյում ղեկավարում է Մովեսական Միության կողմից Հնդկաստանին տրվող էլեկտրական մեքենաների հաստատությունը:

ԲՈՄԲԵՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԵՑԱՍԵՂԱՆԸ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նոյեմբերի 29-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 5-ին, Բոմբեյի հայ համայնքը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի և շքախմբի, եկեղեցու սրահում, կազմակերպում է թեյասեղան, որին մասնակցում են գաղութի բոլոր հայերը:

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետի, սրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամների ներկայությունը ողջունում է եկեղեցական վարդապետ անդամ ղեկ. Ա. Եղիազարյանը:

Գաղութի հնաբոյն անդամներից պր. Ս. Արզարյանը կարծում է իր ինքնագիր քերթվածը, նվիրված Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությանը Բոմբեյ:

Ընդունելության վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և ողջունելով բոլոր ներկաներին, ավելի քան կես ժամ խոսում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերադարձումների և Մայր Հայրենիքի՝ Մովեսական Հայաստանի 43 տարիների ընթացքում կատարած կարեւոր նվաճումների մասին մշակույթի, գրականության, արվեստների, գիտության, արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում:

Վերջում, իր օրհնության հետ, Նորին Ս. Օծությունը բոլոր ներկաներին բաժանում է մեկական խաչ:

Նոյեմբերի 30-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը և շքախմբի անդամները ծանոթանում են Բոմբեյի տեսարժան վայրերին:

Հետմիջօրեի ժամը 6-ին, Ճհու ժովպինյա Արև և Ավագ հյուրանոցում, Բոմբեյի հայոց եկեղեցական վարդապետներ՝ տիկին Վարդուհի Բարսեղյան, տիկին Երանուհի Լորդ, պր. Ռ. Շամլյան և ղեկ. Արամ Եղիազարյան, Վեհափառ Հայրապետի և շքախմբի անդամների պատվին, կազմակերպում են թեյասեղան, որն անցնում է հաճելի և ջերմ մթնոլորտում:

Նոյեմբերի 30-ին, շաբաթ երեկոյան, Բոմբեյում, Վեհափառ Հայրապետը, Հալեպի առաջնորդ քերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Չեպեյանից ստանում է հետևյալ հեռագիրը, Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանի վաղաժամ եղբրական մահվան մասին.

«Նորունկ վշտով կտեղեկացնենք Ձեզ Դերենիկ եպիսկոպոսի սպանությունը, իր տան մեջ, անպատասխանատու մեկի կողմից: Թաղումը նոյեմբերի 27-ին: Խորապես կողքանք Հայ Եկեղեցվո կրթատը: Կաղոթենք Աստուծո անոր հոգիի հանգստություն և մեր Մայր Եկեղեցիի պայծառության համար»:

Վեհափառ Հայրապետը, նույն երեկո, գերաշնորհ Տ. Ղևոնդ արքեպիսկոպոս Չեպեյանին հեռագրում էր հետևյալը.

«Նոր վշտով ստացել եմ Ձեր հեռագիրը Տ. Դերենիկ եպիսկոպոսի ողբեգական մահվան մասին: Ողբում եմ կարուստ Հայ Եկեղեցուն և հայ գրականության նվիրված արժանատի հոգևորականի: Աղոթում եմ հանգուցյալի հոգու խաղաղության համար: Մեր վշտակցությունը հանգուցյալի սգավոր ընտանիքին»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ

Դեկտեմբերի 1-ին, կիրակի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, Բոմբեյի հայոց Ս. Պետրոս եկեղեցում, մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզում է:

Բոմբեյի հայոց եկեղեցին կառուցվել է 1796 թվականին, էջմիածնի նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ:

Եկեղեցին, որը գտնվում է հայկական թաղի Մեղր փողոցում, մի քանի անգամ նորոգվել է: Վերջին նորոգությունը կատարվել է 1963 թվականին:

Բոմբեյի հայոց Ս. Պետրոս եկեղեցին միջակ մեծությամբ, քարակիր, գեղեցիկ և կուկիկ շինություն է:

Եկեղեցու առաջ, փողոցի կողմից, կառուցվել են եկեղեցուն պատկանող հինգհարկանի շենքեր՝ «Արարատ» ընդհանուր անվան ներքո, որոնք վարձու են տրվում:

«Արարատ» շենքի շրջորդ հարկում է գտնվում նաև ծխատեղ քահանայի գրասենյակը:

Եկեղեցին հարավային կողմից ունի շատ նեղ մի շրջապատ կամ բակ, որը ծառայել է անցյալում որպես գերեզմանատուն և ամբողջովին ծածկվել մարմարյա գետնահատված սար տապանաքարերով, հայերեն և անգլերեն տապանագրություններով:

Բոմբեյի սակավաթիվ հայությունը թեև ցրվել է քաղաքի ամենատարբեր և հեռավոր մասերում, սակայն բոլորը ներկա են հայրապետական սուրբ պատարագին:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա են նաև պաշտոնական այլ անձնավորություններ:

Ս. Սեղանին սպասարկում են Տ. Կոմիտաս և Կախիկոպուր, Տ. Դավիթ և Տ. Արսեն վարդապետները:

Սուրբ պատարագի Եկեղեցու հրգեցողությունը կատարում է Բոմբեյի հայոց փոքրաթիվ կազմ ունեցող կանանց հրգեցիկ խումբը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ Վենավառ Հայրապետը՝ «Ուղիղ եղիցին աղոթքիմ, որպէս խունկ առաջի քո» բնաբանով:

Հավարտ սուրբ պատարագի, տեղի է ունենում հոգեհանգստյան հատուկ պաշտոն Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ջոն Քենեդիի, Բոմբեյի ավագ մինիստր Կարամվարիի, Տ. Դերենիկ Կախիկոպուս Փլատյանի և Հնդկաստանի օդուծի նույն շաբաթվա մեջ զոհված հինգ հրամանատարների հոգեհանգի խաղաղության համար:

Այս առթիվ հանդես է գալիս սրբազան պատրիարք հայրը, որը հակիրճ կերպով խոսում է հանգուցյալ մեծ մարդկանց կյանքի և գործունեության մասին:

Երկուշաբթի ժամը 6-ին, Տ. Կոմիտաս Կախիկոպուր, հանուն Վեհափառ Հայրապետի, այցելում է Բոմբեյի մալբար եկեղեցին և ողջունում ներկա հավատացյալներին:

Դեկտեմբերի 2-ին, Երկուշաբթի, մի խումբ բարեպաշտ կանանց խնդրանքով, Տ. Կոմիտաս Կախիկոպուսի զխավորությամբ, Բոմբեյի հայոց գերեզմանատան մեջ կատարվում է հանգստյան կարգ ձևան համօրէն նմշեցիկոց ազգիս Հայոց, նորոց և հնոց, յայտից և անյայտից»:

Բոմբեյում, բացի եկեղեցուց, հայերը ունեցել են երկու գերեզմանատուն, մին քաղաքում, մյուսը քաղաքից դուրս, Սեյդի Մըսըր կոչվող հեռավոր թաղամասում:

Քաղաքի գերեզմանատունը վաղուց դարձել է անգործածելի: Նոր գերեզմանատունը շատ հեռու է, թեև «գալարագեղ բլրակի մը լանջին, մոտակա ծովին դրացնությանը մեջ, հինավուրց մեծ ծառերու ստվերներուն ներքև և գեղեցիկ բուրաստաններուն ծոցը» (Թոր-

զոմ արքեպիսկոպոս, «Հնդկահայք», Երուսաղեմ, 1941, էջ 25):

Բոմբեյի հայոց նոր գերեզմանատանը կան գեղեցիկ, սպիտակ մարմարով մահարձաններ, տապանաքարերով:

ՂԱՍԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԺԱՊԱՎԵՆԻ ՅՈՒՅԱԴՐՈՒՄ

Դեկտեմբերի 2-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Բոմբեյում, սովետական հուպատոսարանի ծովեզերյա գեղեցիկ այգում, ցուցադրվում է «Էջմիածին» կինոժապավենը հայ համայնքի և մասնավոր հրավիրյալներին համար:

Ժապավենի ցուցադրումից առաջ, Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկեղեցական կյանքին և Հայաստանի մշակութային նվաճումներին նվիրված դասախոսությամբ, որը տեղում թարգմանվում է անգլերենի և լավում հետաքրքրությամբ:

Դեկտեմբերի 3-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և Իր շքախմբի անդամների ընկերակցությամբ, հրաժեշտ է առնում Բոմբեյից և մեկնում Կալկաթա:

ԺԱՄԱՆՈՒՄ ԿԱԼԿԱԹԱ

Դեկտեմբերի 3-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամների ուղեկցությամբ, ժամանում է Կալկաթայի Դամ-Դամ օդանավակայանը:

Բոմբեյից Վեհափառ Հայրապետին ուղեկցում են նաև Տ. Մաշտոց քահանա Թյուֆենքճյանը, եկեղեցական վարչության և ընդունելության հանձնախմբի անդամներ տիկին Ռ. Բարսեղյանը, Գոկոտ. Ա. Սիլվադարյանը, Ռ. Շամլյանը և Ն. Գալստյանը:

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը հայրը օդանավակայանում դիմավորվում են խանդավառ ցուցցերով, ծաղիկներով և ծափահարություններով: Կալկաթայի հայոց եկեղեցական վարչության և ընդունելության հանձնախմբի անդամների, Մարդասիրական ճեմարանի հոգաբարձության դասախոսական կազմի, աշակերտության և Կալկաթայի հայկական մշակութային, բարեգործական, մարզական կազմակերպությունների ներկայացուցիչների, Կալկաթայի ողջ հայ համայնքի կողմից, զխավորությամբ հոգևոր հովիվ Տ. Պողոս քահանա Պետրոսյանի:

Կալկաթայի հայոց Դավթյան աղջկանց վարժարանի աշակերտությունը ծաղիկների անձրև է շաղ տալիս Վեհափառ Հայրապետի ճանապարհի վրա, մինչ կարգապահության



Ժողովուրդը դիմավորում է Վեհափառ Հայրապետին Բոտայամուլ

հսկում են Մարդասիրական ճեմարանի արի-
ներն ու արեւնուշները:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին
դիմավորում են նաև Կալկաթայում սովետա-
կան ընդհանուր հյուպատոս Վոյնովը իր
անձնակազմով, քույր եկեղեցիների և պե-
տության ներկայացուցիչներ, թղթակիցներ:

Նորին Ս. Օծուխյունն առաջնորդվում է
Կալկաթայի հայոց Նազարեթի սուրբ եկեղե-
ցին, ուր մուտք է գործում զանգերի զվարթ
ղողանջի տակ, օրհնելով ներկա հայ և հըն-
դիկ հավատացյալներին: Եկեղեցին զարդար-
ված է թարմ, բուրումնավետ ծաղիկներով և
շողում է պայծառ լույսերի մեջ:

Եկեղեցում, արարողության ավարտին,
Հնդկաստանի հայերի հայրապետական ըն-
դունելության հանձնաժողովի նախագահ
նոգեշնորհ Տ. Դավիթ վարդապետը ողջունում
է Վեհափառ Հայրապետի և սրբազան պատ-
րիարք հոր պատմական այս այցելությունը
հոգեբույս ուղերձով:

«Վեհափառ Տեր,
Այս պահուն, այս սուրբ տաճարի մեջ, հա-
նուն Կալկաթայի հայ գաղութին, սրտագին
բարի գալուստ կմաղթենք Ձեզ, Սրբությանդ
շնորհաբեր գալստյան բարեբաստիկ առի-
թով:

Ուրախ ենք և ազգովին հպարտ, որ Գան-
գեսի այս նվիրական ափերուն վրա, ավելի

քան 400 տարիներ առաջ կայք հաստատած
հայության բեկորները բախտավորությունը
և մխիթարությունը կունենան ծնրադիր և
խոնարհաբար խնդրելու Ձերդ Ս. Օծուխյան
օրհնությունները:

Կրկնակի է մեր ուրախությունը, քանզի
հայ հավատքի կեդրոն, մեր Սրբություն Սրբ-
բոց Ս. Էջմիածնեն անձամբ հայրական իր
օրհնությունը կբերե աստվածարյալ մեր Հայ-
րապետը: Այս օրը Հնդկաստանի հայ գաղու-
թի պատմության մեջ պիտի արձանագրվի
ոսկե տառերով:

Այս գաղութը թեև թվով փոքր, բայց սրտով
մեծ, միշտ կապված է եղած Մայր Աթոռ Ս.
Էջմիածնի հետ և որդիական իր սերն ու հա-
վատարմությունը հայտնած բոլոր առիթնե-
րով:

Այսօր էջմիածինը մեր մեջ է հանձին շնոր-
հաբեր և օրհնաբեր ներկայության Ամենայն
Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ինչպես բոլոր այլ գաղութներու, այնպես
և Հնդկաստանի հայ գաղութի համար ևս,
էջմիածինը տակավին երեկ տեսիլք էր, խոր-
հուրդ էր անխմանալի, անտեսանելի, թեև
ներկա և զգալի: Բայց այսօր այդ խորհուրդը
և տեսիլքը շողափայլի դարձան Վեհափառ
Հայրապետի սիրելի և պաշտելի, հմայիչ
անձնավորության մեջ և պատկառելի ներկա-
յությունը:

«Ուրախ լիք, Ս. Եկեղեցի», վասնզի Փնսան այցելութիւնն եկած է Իր հոգևոր զավակներուն:

Ես սրտագին պարտականութիւնը ունիմ հանուն այս համայնքին վատահեցնելու Ձերդ Ս. Օծութեան, որ Ս. Էջմիածնի հանդեպ որդիական նվիրվածութիւնը և հավատարմութիւնը, որ այս գաղութի հատկանշական առաքինութիւնը եղած է անցնող սերունդներուն համար, նույն ձևով կշարունակվի ասիկե հտքալ:

Մեր ուրախութիւնը կրկնակի է նաև այն պատճառով, որ մեր մեջ է նաև Երուսաղեմի ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը:

Ս. Էջմիածին և Ս. Երուսաղեմ իրար ամբողջացնող, իրար գեղեցկացնող երկու սրբութիւններ են, որոնք հայ ժողովուրդի հոգիին և զգացումներուն մեջ խոր արմատներ ձգած են, որպես անկրկնելի սրբութիւններ և սրբավայրեր, որոնց կապված եղած է, է և պիտի ըլլա հայ ժողովուրդի հոգին:

Բարի գալուստ նաև մեր սիրելի պատրիարք սրբազան հոր, որ բերած է մեզի ողջունը Երուսաղեմի Ս. Հակոբեանց վանքին և անոր զինվորչալ միաբանութեան: Ձերմորեն կողջունենք նաև ներկայութեանը Վեհափառ Հայրապետի շքախմբի բոլոր անդամներուն:

«Ո՞ տայր ինձ զծուխն ծխանի և զառուտն նաւասարդի»: Այսպես կարոտով կերգեին մեր գուսանները: Այսօր նույն ուրախութիւնը համակած է մեզ, որովհետև նորին Ս. Օծութիւնը մեզ բերած է Ս. Էջմիածնի վերադարձնիքի պայծառ ավետիսը և շենշող, արևավառ Հայաստանի պայծառ առավոտը:

Այս օրհնարեր այցելութեան առթիվ, ծրնրադիր կաղոթենք մեր պապերու խորաններուն առջև, որ Աստված հաստատուն և պայծառ պահէ Լուսավորչի Գահը, երկար տարիներ շնորհե անոր քառավորչալ և անձնդիր Հայրապետին և բարոնութիւնն և խաղաղութիւն՝ մեր հայրենիքին և ժողովուրդին:

Բարո՛վ եկաք, Լուսավորչի կանթեղի Մեծ Լուսարար և նորարողոջ Մայր Հայրենիքի սիրուն ծիծեռնակ:

Թող Ձեր օրհնութիւնը միշտ անպակաս ըլլա մեր բոլորի վրային:

Այս զգացումներով և մտածումներով, հանուն այս բարեպաշտ և հայրենասեր գաղութին, թույլ տվեք մատչիլ Ձեր Ս. Աջուրն»:

Ողջունի տւոյն ջերմ խոսքերին պատասխանում է Վեհափառ Հայրապետը, օրհնութիւն և գոհունակութիւն հայտնելով սրտառուջ ընդունելութեան համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և շքախմբի անդամները առաջնորդվում են Գրանդ հոթել հյուրանոցը, ուր մասնավոր հարկաբաժիններ

են հատկացվում նորին Ս. Օծութեան և պատրիարք սրբազան հոր:

Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, բարեհաճում է ընդունել մի շարք պաշտոնական այցելութիւններ:

Հին է Կալկաթայի հայ գաղութի պատմութիւնը: ԺՁ դարից սկսած, հայկական գաղութներ կային Ակրայում, Գելհիում, Սուրաթում, Բոմբեյում, Դակկայում, Սինսուրահում, Սահարաբադում, Մադրասում:

Իսկ Բենգալի նահանգում հայերը, որպես վաճառականներ, աշխատեցին քիչ քիչ գրավել Կալկաթայի հիմնարկութեանից (1690 թ.) շուրջ մեկ դար առաջ:

Կալկաթայի Բենգալյան հնախոսական թանգարանում գտնվում է Բենարից բերված հայկական մի տապանաքար 1646 թվականի արձանագրութեամբ (տե՛ս Թորգոմ արքեպիսկոպոս Կուշակյան, «Հնդկահայք», էջ 87):

Այնուհետև, Բենգալի նահանգում, Սինսուրահում, 1695 թվականին հիմնվել է Հնդկաստանի հայոց առաջին եկեղեցին Ս. Հովհաննես Մկրտիչ անունով, որը երկրորդ բրիտանական եկեղեցին է մամրող երկրում:

Հայերը գործուն մասնակցութիւն են ունեցել արդի Կալկաթան վերջնական կերպով վերաշինելու և զարգացնելու գործում, 1757 թվականից սկսած:

Գորկի խանը, նույնիքն Գրիգոր Հարութունյանը, Միր Քասիմի բանակի զխաւոր հրամանատար, 1763 թվականին, օգոստոսի 2-ին, մի խումբ հայ զինվորներով, կովում է հերոսաբար բրիտանական բանակի դեմ, Պլասի ճակատամարտում:

Կալկաթայի հայ գաղութը կազմակերպվում է ժէ դարից:

1724 թվականին, Խոջա Նազարեթի նվիրատվութեամբ, կառուցվում է Կալկաթայի հայոց առաջին քարաշին եկեղեցին:

1763 թվականին կառուցվում են եկեղեցու երկու կողմերի պահարանները, որոնց վրա հաստատվել են մեկական սեղան:

1790 թվականին, եկեղեցու բակը պարբայապատվում է և կառուցվում է բահանայից շենքը:

Շուրջ մի ամբողջ դար Կալկաթայի հիմնադրումից՝ 1690—1790, Կալկաթայի հայ գաղութը աճում է և զարգանում: Կալկաթան գտնում է Հնդկաստանի հայ գաղութի մշակութային, ազգային-եկեղեցական և տնտեսական կենտրոնը:

1798 թվականին Կալկաթայում հայերն ունեցել են Հարութուն Գալստյան դպրատունը, իսկ 1821 թվականի ապրիլի 2-ին հիմնվում է Կալկաթայի հայոց Մարդասիրա-

կան ճեմարանը, որ ներկայումս շարունակում է իր գոյությունը: Ճեմարանն իր հիմնադրության առաջին խսկ օրից ունեցել է նաև աղջկանց բաժին:

1796 թվականին, եկեղեցու բակում, բացվում է առաջին հայ տպարանը, ուր հրատարակվում է Աբրահամ Կրետացի կաթողիկոսի «Պատմություն Նազր Շահին» գործը:

Մինչև 1817 թվականը, Ջնթում Ավետյանը Կալկաթայում ծավալում է տպագրական բեղուն գործունեություն:

1822 թվականին, Մարդասիրական ճեմարանը ունենում է իր սեփական տպարանը, դասագրքերի հրատարակության համար: Ճեմարանի տպարանը, փոքր ընդմիջումներով, գործում է մինչև 1874 թվականը:

«Կես դարու այս շրջանը (1822—1874) հնդկահայոց և մասնավորաբար Կալկաթայի հայության մտավորական գործունեության ամենին բեղուն շրջանն է» («Հնդկահայք», էջ 97):

1845 թվականին, Կալկաթայում, հայրենասեր Մեսրոպ Թաղիադյանցը, ուսուցիչ և մատենագիր, հիմնում է Արարատյան ընկերությունը, նպատակ ունենալով հայ գրքի տպագրությունը:

Ընկերությունն ունենում է իր տպարանը, ուր 1845 թվականին հրատարակվում է «Ազգասեր» լրագիրը, Թաղիադյանցի խմբագրության: «Ազգասեր»-ը շարունակվում է մինչև 1852 թվականը, կարճ ընդմիջումներով: Այս տպարանից լույս են տեսնում մոտ 15 անուն աշխատություններ:

1846 թվականին, Կալկաթայի մեջ հիմնվում է «Արծիվ» տպարանը, որը բարվաստի նրբության, տառերու ճոխության տեսակետով, շատ ավելի կատարյալ էր քան բոլոր իր նախորդները:

1869 թվականին Կալկաթայում հիմնվում է վերջին հայ տպարանը Ս. Գրիգոր Լուսավորչի անունով:

Կալկաթայում հրատարակված առաջին պարբերականն է լինում «Հայելի Կալկաթյան», 1820 թվականին, ապա «Շտեմարան»՝ 1821 թվականին, «Ազգասեր»՝ 1845 թվականին: «Ազգասեր»-ը, Թաղիադյանցի խմբագրությունը, «կամս հավատարիմ ցուլացուցիչը հնդկահայոց գեթ իր ժամանակի սերունդին կյանքի ձգտումներուն և ապահովարար ամենին ճոխ գանձարանը հնդկահայության հիշատակներու և պատմության» («Հնդկահայք», էջ 104):

Կալկաթան, իր մեծությամբ, գեղեցկությամբ և շուրջ 6 000 000 բնակչությամբ, Հնդկաստանի առաջին քաղաքն է, թե՛ որպես առևտրական խոշոր կենտրոն և թե՛ որպես տիպիկ հնդկական քաղաք:

Երբեմնի բազմամարդ հայկական գաղութից այժմ Կալկաթայում ապրում է 500 հոգի: Արդի հայերը ևս Կալկաթայում մեծ մասամբ զբաղվում են առևտրով և արհեստներով, ունեն մշակութային, մարզական ընկերություններ, Հայոց ակումբ, Հայկական ընկերակցություն, Հայ տիկնանց բարեգործական միության մասնաճյուղ և այլն:

Երբեմնի 20 000 շունչ հաշվող Հնդկաստանի հայ գաղութից այժմ մնացել է մոտ 570 հոգի, որից 500-ը՝ Կալկաթայում, 26-ը՝ Բոմբեյում, 30-ը՝ Ասանսոլում և Դենբերդում, 3-ը՝ Մադրասում, 4-ը՝ Բենգալորում, 5-ը՝ Դելհիում, 6-ը՝ Ջալդայում:

Դեկտեմբերի 4-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունում է այցելությունը Արևմտյան Բենգալի ծերակույտի նախագահ դոկտ. պրոֆ. Սունդի Դումար Չաղերչիին և շքմ գրույց ունենում հարգելի գիտնականի հետ:

Հայասեր հարգելի հնդիկ պրոֆեսորը, որը քաջածանոթ է հայ ժողովրդի և հայ մշակույթի պատմության, հեղինակն է «Հայկական առասպելները և Սասունցի Դավիթ դուցազնավեպը» անգլերեն աշխատության:

Ավելի ուշ, Հայոց Հայրապետին է այցելում Կալկաթայի անգլիկան եպիսկոպոսը:

Հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետը և շքախմբի անդամները ծանոթանում են Կալկաթայի տեսարժան վայրերին:

Դեկտեմբերի 5-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և շքախմբի անդամները այցելում են կենդանաբանական այգին:

Ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսի, Տ. Արսեն վարդապետի և Ա. Հատիտյանի ընկերակցությամբ, այցելում է Կալկաթայի սովետական ընդհանուր հյուպատոս Վոյնովին և ընդունվում շերմորեն հյուպատոսարանի անձնակազմի կողմից:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ԱՆՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻ

Դեկտեմբերի 6-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 9-ին, Կալկաթայի հայոց եկեղեցական վարչությունը և ընդունելության հանձնախումբը, Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարքի բարձր պատվին, կազմակերպում են ընդունելություն, Գրանդ հոթել հյուրանոցի դահլիճում:

Ընդունելության ներկա են լինում ավելի քան 100 հրավիրյալներ, որոնց թվում սովետական, շխտալովայան, ռուսական, ավստրալիական ընդհանուր հյուպատոսներ:



Վեհափառ Հայրապետը Քոտայայի աստվածամորական ճեմարանում

րը, Կալկաթայի քաղաքագրութիւնը, խորհրդարանի նախագահը, պետական պաշտոնական այլ անձինք և թղթակիցներ:

Ճաշկերույթի ժամանակ, ընդունելութեան հանձնաժողովի և Կալկաթայի հայութեան անունից, պր. Հայկ Նաճարյանը կարդում է բարի գալստյան գեղեցիկ մի ուղերձ:

Վեհափառ Հայրապետը բաժակ է առաջարկում Հնդկաստանի բարեխնամ կառավարութեան, հնդիկ ազնիվ ժողովրդի պայծառ կենացը:

Նորին Ս. Օծությունն իր բաժակաճառի մեջ շեշտում է մասնավորապես Հնդկաստանի կառավարութեան և հնդիկ ժողովրդի կատարած դերը՝ ամբողջ աշխարհում խաղաղութեան պահպանութեան նվիրական աշխատանքներում:

Ի պատասխան Հայոց Հայրապետի խոսքերին, պրոֆ. Սուրբի Գումար Չադերչին անկեղծ, դրվատալից խոսքերով բաժակ է բարձրացնում հայ ժողովրդի և նրա մշակույթի ապագա ծաղկման կենացը:

Ընդունելութունը վերջանում է Տ. Կոմիտաս եպիսկոպոսի «Տէր կեցո» մաղթերգով, որն ունկնդրվում է հոտնկայս:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՅԵԼՈՒՄ Է ԴԱՎԹՅԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԵՄԱՐԱՆԸ

Դեկտեմբերի 7-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և շքախմբի անդամները այցելում են Կալկաթայի հայերի կրթական զույգ օջախները՝ Դավթյան օրիորդաց վարժարանը՝

հիմնված 1924 թվականին Դավիթ Դավթյանի կտակով և Մարդասիրական ճեմարանը:

Մանկապարտեզի սրահում ուսուցչական կազմը, աշակերտուհիները, հոգաբարձու-թյան անդամները ջերմորեն ողջունում են Վեհափառ Հայրապետի ժամանումը:

Հոգաբարձության ատենապետ պր. Հայկ Խանդավազը բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին, սրբազան պատրիարքին և շքախմբի անդամներին, ապա համառոտ տեղեկություններ է տալիս Դավթյան օրիորդաց վարժարանի ուսումնական ծրագրի, դասարանների, աշակերտության թվի և ուսուցչական կազմի մասին:

Դաստիարակչուհի օրիորդ Ռոզ Ամիրխանյանը, հանուն ուսուցչական կազմի, հուզիչ ճառով ողջունում է Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ներկայությունը:

Նորին Ս. Օծուխյանը խոսք անելով, օրհնում է կրթության այս օրինակելի և տիպար հաստատությունը, օրհնում է հիշատակը բարերար Դավիթ Դավթյանի, շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար և գեղեցիկ խրատական է խոսում աշակերտության ուղղված:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը աջահամբույրով խաչիկներ է բաժանում վարժարանի պաշտոնեուհիների և աշակերտության:

Հանդիսության պաշտոնական մասի ավարտին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ժանոթանալ Դավթյան վարժարանի բոլոր հարկաբաժիններին, այցելում է ննջարանները, դասարանները, գրադարանը, և վերջում «Պահպանիչ»-ով իր օրհնությունն է տալիս անդամալույծ վաստակավոր ուսուցչուհի օրիորդ Հրաչուհի Ամիրխանյանին:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, այցելում է Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը:

1797 թվականին, Աստվածատուր Մուրադյանը մեծ գումար էր կտակում, Կալկաթայում հայկական դպրոց հիմնելու համար, «հարուստ թե աղքատ հայ երիտասարդու-թյան կրթության համար»:

1821 թվականի ապրիլի 2-ին, Մնացական Վարդանյանը իրականացնում էր բարերարի գաղափարը, հիմնելով ճեմարանը, նյութական օգնությամբ Հնդկաստանի ողջ հայ համայնքի, նազարեթի Ս. Հովհաննես եկեղեցուն մոտ, հայկական թաղամասում:

Ճեմարանը, իր հիմնադրության օրից, ունեցել է նաև աղջկանց բաժին:

1884 թվականին, Կալկաթայի Ֆրի սկուլ փողոցում, ճեմարանն ունենում էր իր սեփական երեքհարկանի շենքը, ուր ծնվել է անգլիացի բանաստեղծ Վիլյամ Մեկբիս Գեկկերեյը, 1811 թվականին:

Ճեմարանը ղեկավարվում է Կալկաթայի հայ համայնքի կողմից ընտրված հոգաբարձությամբ:

Ճեմարանը, որ միջնակարգ վարժարան է, այժմ ունի 120 աշակերտ 9 դասարաններում, որոնցից 75-ը տղա և 28-ը աղջիկ, գիրչեր-օթիկ:

Ճեմարանի աշակերտության հիմնական կորիզը բաղկանում է Իրանից, Իրաքից և Կիպրոսից եկած ուսանողներից: Ուսանողներ կան նաև Կալկաթայից և Հնդկաստանի այլ քաղաքներից:

Մարդասիրական ճեմարանի տղաները և Դավթյան օրիորդաց վարժարանի ուսանողուհիները սովորում են միասին:

Վեհափառ Հայրապետի ժամանումը Մարդասիրական ճեմարան ողջունվում է ուսանողության, դասախոսական կազմի և հոգաբարձության հուզումնախառն արտահայտություններով, ծափերով:

Ուսանողությունը 1962—1963 ուսումնական տարվա ամավերջի քննություններն էր հանձնում:

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը այցելում են դասարանները, ննջարանները, ճաշարանը, լողավազանը և ընդունելության սրահը:

Ճեմարանի տեսչարանում, ի պատիվ հյուրերի, տրվում է թեյասեղան:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ճեմարանի հանդիսասրահը, ուր հավաքված ամբողջ ուսանողությունը, ոմանք իրենց ծնողներով և հարազատներով, սպասում են Նորին Ս. Օծուխյան:

Հանուն ճեմարանի, Հայոց Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր օրհնաբեր և պատմական այցելությունը ողջունում է ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Ա. Կյուզբյանը:

Վեհափառ Հայրապետի հրավերով, Մարդասիրական ճեմարանի ուսանողությանը ողջունում է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիտյանը, հուզիչ և հարեհնաշունչ մի ճառով, հաղորդելով Էջմիածնի Հոգևոր ճեմարանի ուսանողության, դասախոսական կազմի ողջունները, ինչպես նաև ողջունը վերածնված Մայր Հայրենիքի:

Հավաքույթի վերջավորության, Վեհափառ Հայրապետը տալիս է իր պատգամը ուսանողության և հայրական Իր գոհունակությունն է հայտնում ճեմարանի մեջ տիրող կարգ ու կանոնի, դասախոսական կազմի բարեխիղճ և կրթանվիր աշխատանքների համար:

Բոլոր ուսանողները, ծնրադիր, Վեհափառ Հայրապետից աջահամբույրով ստանում են խաչիկներ որպես հուշանվեր:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ ԿԱԼԿԱԹԱՑՈՒՄ

Ինկտեմբերի 8-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Կալկաթայի հայոց նազարեթի եկեղեցում, հանդիսավոր պատարագ է մատուցում և քարոզում:

Եկեղեցու աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել պետական, եկեղեցական և զիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ:

Եկեղեցին լիքն է հավատացյալներով: Սուրբ պատարագի եկամալյան երգեցողությունը, վերնատնից, փայլուն հաջողությամբ կատարում է Մարդասիրական ճեմարանի երկսեռ երգչախումբը, շնորհալի ղեկավարությամբ Ա. Կյուղելյանի:

Սուրբ պատարագի ժամանակ, Ս. Սեղանին սպասարկում են Ս. Կոմիտաս եպիսկոպոսը, Ս. Դավիթ և Ս. Արսեն իտրդպետները, Ս. Պողոս և Ս. Մաշտոց քահանաները:

Ներկա է նաև սրբազան պատրիարք հայրը, որն ընթերցում է Ճաշու գիրքը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «էջ Միածինն ի Հօրէ ահեղ զօրութեամբ» բնաբանով:

Նորին Ս. Օծութունն իր քարոզում վեր է հանում Ս. էջմիածնի խորհուրդը և նրա կատարած դերը Հայ եկեղեցու կազմակերպության, նվիրակության ստեղծման, հայ մշակույթի զարգացման և մեր ժողովրդի ազգապահպանման աշխատանքներում:

Իր քարոզում Վեհափառ Հայրապետն անդրադառնում է նաև վերջին տարիներին Ս. էջմիածնի հոգևոր վերադարձներին և Մայր Հայրենիքում վերածնված մեր ժողովրդի կատարած հայրենաշին աշխատանքներին, կոչ անելով, որ Հնդկաց աշխարհի այդ հեռավոր ամիսներին վրա ապրող հայությունը հավատարիմ մնա մեր ազգային-եկեղեցական ավանդությունների և հայոց պատմության ոգուն և վերածնված Մայր Հայրենիքին:

Հավարտ սուրբ պատարագի, ներկա խուռներամ հավատացյալները, բոլորն անխտիր, ճաշիկ են ստանում Ամենայն Հայոց Հայրապետի Ս. Աջից:

«Որ զխորհուրդ բո գալստեան» շարականի երգակցությամբ և ամպհովանու տակ, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է ընդունելության սրահը, ուր ընդունում է շնորհավորություններ և այցելություններ:

ԹԵՑԱՍԵՂԱՆ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԱՏՐԻԱՐԸ ՀՈՐ

Ինկտեմբերի 8-ին, կիրակի, երեկոյան ժամը 4-ին, Մարդասիրական ճեմարանի ըն-

դարձակ և կանաչազարդ դաշտում, դալար վրանների տակ, ճեմարանի հոգաբարձությունը և դասախոսական կազմը, թեյասեղանով պատվում են Հայոց Վեհափառ Հայրապետին, սրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամներին:

Ճեմարանի մուտքի առաջ, Վեհափառ Հայրապետն ու սրբազան պատրիարք հայրը դիմավորվում են եկեղեցական վարչության, ընդունելության հանձնաժողովի, հոգաբարձության, դասախոսական կազմի և ուսանողության կողմից ու ծափերով, խանդավառ և սրտագին ցույցերով առաջնորդվում պատվո սեղանը:

Ընդունելության ներկա էր Կալկաթայի ողջ հայ գաղութը:

Հանդիսության բացումը կատարում է Ս. Պողոս Բաբանա Պետրոսյանը:

Այնուհետև ընդարձակ ճառով հանդես է գալիս «էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, որն իր մոտ մեկ ժամ տևող ողբշունչ բանախոսությամբ խոսում է Վեհափառ Հայրապետի գահակալության 8 տարիների ընթացքում կատարված հոգևոր, մշակութային և շինարարական գործունեության մասին:

Հարգելի բանախոսը, նույն խանդավառությամբ, թվերով և փաստերով ներկայացնում է անցնող 43 տարիների ընթացքում Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի և վերածնված հայ ժողովրդի նվաճումները դիտության, արվեստի, գրականության, արդյունաբերության և քաղաքաշինության բնագավառներում:

Ընդունելության վերջին մասում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և իր գոհունակությունն է հայտնում համաժողովրդական այս սրտառուլ հանդիպման կազմակերպիչներին և օրհնում բոլոր ներկաներին:

Այս հանդիսավոր առիթով, նորին Ս. Օծությունը վարդապետական լանջախաչով վարձատրում է ընդունելության հանձնաժողովի նախագահ Ս. Դավիթ վարդապետ Սահակյանի արդյունավոր գործունեությունը, իսկ Բաբանայական լանջախաչ է շնորհում Ս. Պողոս և Ս. Մաշտոց քահանաներին՝ ի նշան հայրապետական բարձր ուշադրության:

Վեհափառ Հայրապետը, իր Կալկաթայցիությունների ուրախ առիթով, որպես հիշատակ, հայոց եկեղեցուն էլ նվիրում է արծաթյա գեղեցիկ մեղանաթափ աղավնի:

Ընդունելության ավարտին, ամբողջ ժողովուրդը աջահամբույրով Վեհափառ Հայրապետից ստանում է խաչիկներ:

Հանդիսությունը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԸ
ԿԱԼԿԱԹԱՅԻ ԱՆԳԼԻԿԱՆ ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

Դեկտեմբերի 8-ին, կիրակի, երեկոյան ժամը 6.30-ին, Վեհափառ Հայրապետը, սըրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամների ընկերակցութեամբ, անգլիկան համայնքի հրավերով, այցելում է նրանց Ս. Պողոս Մայր Եկեղեցին:

Կալկաթայում Հայ և Անգլիկան եկեղեցիները եղբայրական, սրտագին հարաբերության մեջ են գտնվում:

1961 թվականին, երբ Քենտրբերիի նախկին արքեպիսկոպոս դոկտ. Ֆիշերը այցելել էր Կալկաթա, եղել էր Կալկաթայի հայոց եկեղեցում և օրհնել մեր ժողովրդին:

1813 թվականին է կազմվել Կալկաթայի անգլիկան միտրոպոլիտութիւնը:

Անգլիկանների Մայր Եկեղեցին, զոթական ճարտարապետական ոճով կառուցված, Կալկաթայի գեղեցիկագույն կառույցներից մեկն է հանդիսանում:

Ս. Պողոս Մայր Եկեղեցու մուտքի առջև, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, զգեստավորված, եկեղեցական թոփոռով և սաղմոսերգութեամբ, առաջնորդվում է ավագ խորան, սրբազան պատրիարք հոր հետ, նախագահելու երեկոյան ժամերգութեան և աղոթքին:

Մայր Տաճարը լիքն է անգլիկան և հայ հավատացյալներով:

Արարողութեան ընթացքում, հատուկ աղոթք է մատուցվում Հայ Եկեղեցու համար:

Ժամերգութիւնը վերջանում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ և «Պահպանիչ»-ով:

Այս պատմական այցելութիւնը մի նոր էջ է ավելացնում Հայ և Անգլիկան եկեղեցիների բարեկամութեան պատմութեան մեջ:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ԾԵՆՔԻ ՀԻՄՆԱԶԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 9-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր, շքախմբի և ընդունելութեան հանձնախմբի անդամներ պարոնայք Նևտոն Բարսեղյանի և Արամայիս Աղամյանի ընկերակցութեամբ, այցելում է Բենգալյան նահանգի գլխավոր մինիստրին:

Հայոց Հայրապետի և պթ. մինիստրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Տեսակցութեան ընթացքում, նորին Ս. Օծուրջունը շնորհակալութիւն է հայտնում գլխավոր մինիստրին՝ Կալկաթայի հայոց եկեղեցու և հայ համայնքի հանդեպ ցույց

տրված բարյացակամութեան և ուշադրութեան համար:

Հայոց Հայրապետը հրաժեշտի պահին օրհնում է Հնդկաստանի բարեխնամ կառավարութիւնը և հնդիկ ազնիվ ժողովրդին:

Ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և շքախմբի անդամները այցելում են ջայնայականների մեհյանը, զգույնզգույն բյուրեղյա պալատ մը, մարմարյա արձանակներու, մոզաիկե զարդերու և հախճապակիե պատկերներու անհատնում խճողումով բեռնավոր... ոսկին և արծաթը անխնայորեն գործածված էին անոր մեջ... (Շնդկահայք, էջ 82):

Հետմիջօրեի ժամը 4-ին, հանդիսավոր իրադրութեան մեջ, Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի բակում, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, կատարվում է ճեմարանի նոր շէնքի հիմնարկերի օրհնութեան հանդիսութիւնը:

Բացի հայ համայնքի և ժողովրդի ներկայացուցիչներից, հանդիսութեան ներկա են նաև Կալկաթայի քաղաքապետը, լուսավորութեան մինիստրութեան ներկայացուցիչը, օտար դպրոցների տեսուչներ և թղթակիցներ:

Հանդիսութեան բացումը կատարում է պր. Հայկ Նաճարյանը, ներկայացնելով նաև Մարդասիրական ճեմարանի համառոտ պատմութիւնը:


Հիմնօրհնեքի արարողութիւնից հետո, խոսք է առնում Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Նղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և գեղեցիկ ճառի մեջ ժանրանում է այն սրտառուլ ազգային ոգու վրա, ըստ որի «հայ ժողովուրդը ուր ալ նետված ըլլա բախտի քմահաճուլքներն, իր նվիրական պարտքը կհամարե իր գոյատևման համար նախ սուրբ խորան մը բարձրացնել և հաճախ հավատքի այդ նույն խորանը դարձնել դպրոցական բնմ, լույս և գիտութիւն ջամբելու հայ նոր սերունդներուն»:

Իր խոսքի վերջավորութեան, սրբազան պատրիարք հայրը սրտագին կոչ է անում Կալկաթայի հայ նոր սերնդին՝ սիրելու հայոց ճեմասօքանչ լեզու-ն, որովհետև, եզրափակում է սրբազան հայրը, «մայրենի լեզուն է, որ մեր առջև կբանա մեր հավատքի քաղցրութիւնները և մեր մշակութի գեղեցկութիւնները»:

Սրբազան պատրիարք հոր հայաշունչ ճառը ըսվում է խորունկ հուզումով:

Հանդիսութիւնը վերջանում է խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Մարդասիրական ճեմարանի նոր շէնքի նախագիծը պատրաստ է և շուտով կսկսվեն շինարարական աշխատանքները: Ծենքը լի-



Բասիլիոս Բ Կաթողիկոսի հուշանվերը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին

նելու է քառահարկ, 200 գիշերօթիկ աշակերտության համար, իր ուսումնական, մարզական և կենցաղային հարմարություններով:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅՑ

Դեկտեմբերի 9-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 6-ին, Մարդասիրական ճեմարանի հանդիսասրահում, կազմակերպվել էր գրական-գեղարվեստական հայրենաշունչ երեկույթ, ի պատիվ Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարքի:

Գեղարվեստական երեկույթը բաղկանում է խմբերգերից, մեներգերից, արտասանություններից, նվագներից և երաժշտական համարներից:

Ճեմարանի նվագախումբը հաջող կերպով կատարում է Մոցարտի 16-րդ սոնատայից կտորներ՝ դաշնակի մենակատարությամբ 10-րդ դասարանի ուսանող Ա. Վարդանյանի, Թաթուլ Ալթունյանի «Լուսնյակ գիշեր»-ը և «Երազ»-ը՝ ջութակի մենակատարությամբ Ա. Աղամյանի:

Շատ հաջող և ապրումով կատարվում են խմբային արտասանությունները՝ Նաիրի Զարյանից «Հայոց լեզուն» (Յ դասարան), Հովհաննես Շիրազից «Թուները մեծ Վարդանի» (Զ դասարան), Խնչպես նաև Խաչատուր Աբովյանի «Մեր լեզուն» (Տ. Ալեքսանդրյան):

Պայծառ և հայրենաբույր է հնչում Ա. Կյուզելյանի ղեկավարությամբ կատարված «Երգ բամբակի», «Հոյ իմ նազանի յարբ», «Ապարան» (Թ. Ալթունյան), «Գովք Հայաստանի» (Ա. Սաթյան) խմբերգերի շարքը, հայրենասիրական խորոնկ ոգևորություն և ապրումներ ստեղծելով բոլոր ներկաների սրտերում:

8-րդ դասարանի աշակերտուհի Թ. Բարխուդարյանի կատարմամբ «Երազ» (Թ. Ալթունյան) և «Գանձեր ունեմ» (Գ. Ալեմշահ) մեներգերը արժանանում են ջերմ ծափահարությունների:

Իր փակման խոսքում, Վեհափառ Հայրապետը բարձր է գնահատում երեկույթի պատճառած հոգեկան և հայրենասիրական բերկրանքը, իր օրհնությունները բաշխելով թե՛ հանդեսի կազմակերպիչներին և թե՛ ուսանողության, մանավանդ ընդհանուր ղեկավար պր. Ասատուր Կյուզելյանին, որն «այնքան շնորհալի կերպով հարգատուրքյամբ հեշեցուց Հայաստանյան երգերու գլաբք և կենսալի ոգին Գանգեսի այս ափերուն վրա, որ պան մը մեզ փոխադրեց դեպի հայրենի մեր աշխարհը»:

Հանդեսը փակվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Ամեն հալի սրտից բխած» հայրապետական մաղթերգով:

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԵՎ «ՊՈՆՄ ԼԱՅԱՍԱՆԻ ՄԱՍԻՆ» ԿԻՆՈՒՄՊՈՎԵՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 10-ին, երեքշաբթի, առաջին ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը շքախմբով այցելում են Կալկաթայում մալաբար համայնքի նորակառույց Ս. Քովմաս եկեղեցին, ուր ողջույնի և օրհնության խոսք է ասում նորին Ս. Օծուխունը:

Ժամը 7-ին, Կալկաթայի սովետական դեպարտամենտ, տեղի է ունենում «Էջմիածին» և «Պոնմ Հայաստանի մասին» ժապավենների ցուցադրումը, որին ներկա են լինում Կալկաթայի ողջ հայկական համայնքը և հյուրեր, շուրջ 400 հոգի:

Հարգելի պր. հյուպատոս Վոյնովը ողջույնի և բարի գալստյան ջերմ խոսք է ասում Վեհափառ Հայրապետին, սրբազան պատրիարքին և բոլոր ներկաներին, շեշտելով Հայոց Վեհափառ Հայրապետի կատարած շնորհակալ աշխատանքները աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և հանգամանորեն անդրադառնում է Հայաստանում, Սովետական Միության մեջ և Սփյուռքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ կատարված եկեղեցական գործերի վրա և բացատրություններ է տալիս «Էջմիածին» ժապավենի բովանդակության մասին:

Հյուպատոսարանից տիկին Ժենյա Միրզոյան-Քուլչանը, Երևանի մանկավարժական ինստիտուտից շրջանավարտ, գեղեցիկ ճառ է կարդում, նվիրված Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին:

Ապա պր. հյուպատոսը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանին է նվիրում ավելի քան 200 հայերեն գեղարվեստական գրքեր՝ ուղարկված Երևանից, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության կողմից:

Վերջում, խանդավառ մթնոլորտում, ցուցադրվում են «Պոնմ Հայաստանի մասին» և «Էջմիածին» կինոժապավենները, որոնք բոլոր ներկաների մեջ արթնացնում են կրոնաբույր և հայրենաշունչ ապրումներ՝ Ս. Էջմիածնի խորհրդով և Մայր Հայրենիքի պայծառ հեռանկարներով:

ԼՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Դեկտեմբերի 12-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 9-ին, Կալկաթայի հայոց եկեղեցական վարչության և ընդունելության հանձնախումբը, Գրանդ հոթել հյուրանոցում, Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր բարձր պատվին, կազմակերպում են հրաժեշտի ընդունելություն, ավելի քան 200 հրավիրյալների մասնակցությամբ:

Ժամը 9-ին դահլիճ են ժամանում նորին Ս. Օծուխունն ու պատրիարք սրբազան հայրը և ողջունվում որտեղիցս ժափահարություններով:

Հրաժեշտի սեղանը ղեկավարում է սրբազան պատրիարք հայրը: Ընդունելության ժամանակ առաջինը ճառով հանդես է գալիս ընդունելության հանձնաժողովի նախագահ հոգեշնորհ Տ. Դավիթ վարդապետ Սահակյանը:

«Վեհափառ Տեր. Այսօր հավաքված են այստեղ, Ձերդ Սրբության և նորին Ամենապատվության շուրջ, Կալկաթայի և Բոմբեյի եկեղեցական վարչությունները և Հնդկաստանի հայ գաղութը ներկայացնող ընդունելության հանձնախումբը՝ ողջերթ մաղթելու Ձեզ: Որպես նախագահ ընդունելության հանձնախմբի, ինձ վիճակվեցավ ողջերթի քանի մը խոսք րեսել:

Գանդեսի այս փերուն, թվով փոքրիկ գաղութ մըն ենք և կյանքի ու գոյության պայքար մղելու հարկադրանքին տակ կգտնվինք, կարենալ պահելու համար մեր ուրույն նկարագիրը: Քաջ գիտենք, թե մեր այդ պայքարը յաջողությամբ կպսակվի այն ժամանակ միայն, երբ մեր հայացքը կդարձնենք դեպի մեր հոգևոր հայրենիքը՝ Ս. Էջմիածին, որովհետև այդ նվիրական կեղծուն 17 դարերի վերելած է ամբողջ հայության միության և ապահովության ամրակուռ բերդը, հույսի, հավատքի և զորության ներշնչարանը, մեր հոգևոր մշակույթին վառարանը, մեր տառապանքին վկայարանը:

Դարերու ընթացքին, Հնդկաստանի հայ գաղութի և Ս. Էջմիածնի միջև կապ պահողները եղան բարձրաստիճան այն եկեղեցականները, որոնք հայրապետական ողջույն և օրհնություն բերին: Այդ օրհնությունը վառ և կենդանի պահեց մեր նախնայց հավատքը: Երջանիկ էին անոնք: Հապա մենք, որքան առավել երջանիկ ենք, երբ այդ օրհնությունը և ողջույնը բաշխողը անձամբ կկավ և օրհնեց մեզ:

Առավել զորացած ենք այժմ, Վեհափառ Տեր, Ձերդ Ս. Օծուխուն շնորհաբեր այցելությամբ, որ մեր սրտերում վրա արձանագրվեցավ անջնվելի տառերով: Տեսանք էջմիածնի փառքը և զորությունը Ձերդ Ս. Օծուխուն սիրելի և պարտելի անձին մեզ:

Դուք մեր սրտերում մտտ էիք և եք, ու վաղը երբ հեռանաք, Ձեր բաժանումը մեզ չի տըխ-



Վեհափառ Հայրապետը Բոմբեյի հայկական համայնքի հետ

րեցներ, որովհետև սերը Ձերդ Սրբության անձին հանդես, պաշտամունքը Ս. Էջմիածնի հանդես, իսանդավառությունը վերածնած մեր հայրենիքի հանդես, վեր են ժամանակի և միջոցի կաշկանդումներեն ու սահմանափակումներեն:

Ի ուր մեր մեջն եք հավիտյան՝ Ձեր օրհնությամբ և աղոթքներով:

Բարի ճանապարհ Ձեզ, Վեհափա՛ն Տեր, դեպի Մայր Աթոռ Ձեր վերադարձը թող ըլլա Աստուծո հովանիին և պաշտպանության տակ:

Բարի ճանապարհ և Ձեզ, սիրելի՛ սրբազան պատրիարք հայր, դեպի Ս. Երուսաղեմ: Բարի ճանապարհ և շքախմբի ազնիվ անդամներուն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ողջունում է Կալկաթայի հայ համայնքի սիրված և հարգված ազգայիններից պր. Պետրոս Ալեխանյանը հետևյալ ինքնատիպ և սրտաբուխ ճառով.

Վեհափա՛ն Տեր.

Մի անգամ ևս Կալկաթայի հայ համայնքի կողմից բարի գալուստ եմ մաղթում Ձերդ Սրբության և միաժամանակ հայտնում եմ մեր խորին շնորհակալությունները, որ բարեհաճեցիք այցելել մեր այս համեստ գաղութը, բերելով Ձեր օրհնությունները իջման Ս.

Սեղանից, և ողջունները մեր հայրենիքի եղբայրներից և բույրերից:

Մեր սրտերը լցված են հպարտությամբ և ուրախությամբ, որ այսօր ունենք մեր մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Սա բացառիկ մի եղելություն է, որ մեր պատմության մեջ գրվելու է ոսկե տառերով:

Վեհափա՛ն Տեր, մեր այս հինավուրց և պատմական գաղութը թեև հեռու է Մայր Հայրենիքից, սակայն միշտ ունեցել է և կունենա ջերմ սեր և հարգանք դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որ դարեր շարունակ եղել է մեր Սրբություն Սրբոցը, մեր լուսատու փարոսը և մեր հավատի ու հույսի կենտրոնը:

Մոտ անցյալում մեր գաղութի անդամներից մի քանիսը այցելել են Ս. Էջմիածին և տեսել նրա ներկա փառքը, և այս՝ շնորհիվ Ձերդ Վեհափառության ութամյա անխոնջ և շինարար գործունեության: Ձերդ Սրբությունը բարձրացրեց հայ ազգի և Եկեղեցու պատիվը, քանի կառուցեցիք այն, ինչ որ հին էր, այն, ինչ որ անշուք էր, և միացրիք այն, որ բաժանված էր:

Վեհափա՛ն Տեր, հիմա, մոտ ինը օր է՝ որ գտնվում եք մեր մեջ և այս ժամանակամիջոցում ոգևորեցիք և մխիթարեցիք մեզ Ձեր անուշ քարոզներով: Շուտով պիտի թողնեք մեր այս գաղութը: Մեզ միայն մնում է պա-

հել Ձեր հայրապետական խրատները և հրահանգները, այսպիսով անմոռանալի դարձնելով Ձերդ Ս. Օծուխյան այցելությունը այս գաղութին:

Վերջացնելով խոսքը, հանուն Կալկաթայի հայ համայնքի, մաղթում եմ Ձերդ Ս. Օծուխյան քաջառողջություն, արևշատություն, Ձեր գործերին հաջողություն և Ս. էջմիածնին անսասանություն:

Կալկաթայի Հայ տիկնանց բարեգործական միության կողմից տիկին Մարթա Կարապետյանը իր ողջունի շերտ խոսքում ասում է.

«Վեհափա՛ն Տեր, բոլորիս համար փառավոր և երջանկություն մի այս պահին, սրտի անհուն ցնծություն մը է, որ ողջունում եմք Ձերդ Ս. Օծուխյան ժամանակը Հնդկաստան, որն անշնչելի կերպով պիտի դրոշմվի ամեն մի հնդկահայի սրտում և Հնդկաստանի հայոց պատմության էջերում:

Հայրենիքից հեռու, օտար փոքրիկ սփռված, հպարտության մը և անսահման կարոտով է, որ ամեն մի հայ իր անքերը հառած ունի դեպի Ս. էջմիածին, մեր հավատի օրրանը, մեր հույսի ջահը և այդ հավատն ու հույսը մարմնացնող Ամենայն Հայոց Հայրապետը:

Թող ամենակարող Աստված արևշատություն պարգևի Հայոց Հոր և հավերժ անսասան պահի Ս. էջմիածնի Մայր Աթոռը, խորհրդանշանը աշխարհասփյուռ հայերի միության և բարախուն սիրտը մեր աննման հայրենիքի»:

Հնդունելության ժամանակ կարդացվում է նաև Ինդոնեզիայի հայ համայնքի անունից գրված հետևյալ ողջունի սրտառու խոսքը.

«Վեհափա՛ն Հայր.

Իբր մեր Եկեղեցու հարազատ և խոնարհ ծառա, հաճույքն ունեմ թարգմանը հանդիսանալու մեր կենտրոնական պատվարժան վարչության, և Ինդոնեզիայի մեր բարեպաշտ ու հարգելի հայ համայնքի կողմից, բարի գալստյան ողջուններով խոնարհվել Ձերդ Վեհափառության առաջ, մաղթելով Ձեզ արևշատություն, ուժ և եռանդ՝ Ձեր պատասխանատու, շինարար և ազգօգուտ գործում և ազգիս թագ ու պարծանք Մայր Աթոռ Ս. էջմիածնին՝ անշարժություն և անսասանություն:

Պատմության մեջ առաջին անգամն է, որ մեր վեհափառ հայրապետներից մեկն այցելում է մեր քաղաքում: Անուամենայնիվ պարտք ենք համարում, անկեղծորեն շեշտել, որ Կալկաթայի մեր քույրերի և եղբայրների ուրախությունը մե՛ր ուրախությունն է, և ահա՛ այս զգացումներով էլ այսօր հոգով ու մտքով մասնակից ենք նրանց այդ մեծ ուրախությանն ու բախտավորու-

թյանը: Մենք շատ գոհ և ուրախ կզգանք, ստանալով Ձերդ Վեհափառության օրհնությունները»:

Պր. Մկրտում Հարությունյանը կարդում է իր հետևյալ բանաստեղծությունը, գրված Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության առթիվ.

«Բ Ա Ղ Ձ Ա Ն Ք

Ա՛խ, ինչո՞ւ ես շնչեցի
Արարատ սարի դաշտերում,
Ուր հովասուն հովիտների
Ձուլալ ջրերն են կարկաշում:

Ա՛խ, ինչո՞ւ ես շնչեցի
Կենսատու օդը Մասիսի,
Ում հանձնված է Հայաստանի
Վեհ պաշտոնը պահապանի:

Ես արբեցնող հոտը շառի
Մաղիկներից այն գույնզգույն,
Որ բուրում են Արարատի
Հովիտներում մեր գեղազույն:

Ավա՛ղ, ինչո՞ւ չսեցի
Քաղցրահնչուն, վեհ ողջանջներ,
Որ գալիս են սուրբ վանքերի
Ձանգակներից այն սրբաբեր:

Ես կուզեի անձամբ տեսնել
Վանքերը մեր հին հայկական,
Ես կուզեի աղոթք անել
Տաճարներում մեր սրբազան:


Ա՛խ, ինչո՞ւ ես ծունր չեմ դրել
Առջևն Իջման Սուրբ Սեղանի,
Ա՛խ, ինչո՞ւ ես լույսն չեմ տեսել
Լուսավորչի վառ կանթեղի:

Թե որ կյանքում ես չտեսնեմ
Սուրբ երկիրը մեր Հայաստան,
Իմ դիակը օծված կուզեմ
Հայկյան հողով սուրբ, անպայման:

Դադաղիս մեջ դրեք տանեմ
Մի բուռ սուրբ հող էջմիածնից,
Տոչոր հոգիս հագեցնեմ
Իմ կյանքի մյուս փոքրից»:

Կալկաթայի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Պողոս Բախանյան իր փուլթում ասում է.

«Վեհափա՛ն Տեր,
Հրաժեշտի վերջին խոսքը, Ձեր ողջերթի առթիվ, սրված է ինձ, իբր հոգևոր հովիվ գաղութիս:



Վերախառն Հայրապետը Կալկաթայի հայրը Մարդասիրական ճեմարանի հոգաբարձության հետ

Հնդկաստանի հայ գաղութը և Կալկաթայի հայութիւնը Ձեր օրհնարքի այցելութիւնը անհուն հրճվանք, խանդավառութիւն և հոգեկան մեծ միխթարութիւն ստացավ, մեծից մինչև փոքրը, որովհետև արժանացանք Ձերը Սրբութեան օրհնութիւններին:

Մենք, մեր սիրելի ժողովրդի հետ միասին, զանազան առիթներով վայելեցինք Ձեր ներկայութիւնը մեր մեջ, ապրեցինք և ներշնչվեցինք Ձեր սրանելի, հարազատ և հոգեբուխ խոսքերով:

Մեր խնդակցութիւնը և ղգացած մեծ հաճույքը բազմապատկեց, երբ Ձերդ Ս. Օծութեան հետ միասին, մենք առիթը ունեցանք ուղջունելու նաև Երուսաղեմի պատրիարք սրբազանին:

Մենք խանդավառվեցինք Ձերդ Ս. Օծութեան, սրբազան պատրիարքի և Ձեր շքախմբի այցելութիւնը և ապրեցինք անմոռանալի և երանելի օրեր:

Հավատացած եղբք, որ մենք պիտի աշխատենք արդարացնել մեր վրա դրված հույսերը, հովվելու մեր համայնքին քրիստոնեական ճշմարիտ հավատով, Ձերդ Ս. Օծութեան հովանու և օրհնութեան ներքո:

Հանդեսի գեղարվեստական բաժնին իրենց շնորհալի մասնակցութիւնն են բերում Տ. Արսեն վարդապետը՝ «Այ վարդ», տիկին Վիլիեն Կուզելյանը՝ «Ո՛հ, ինչ անուշ» և «Արդոք գիտե՞ս դու» մեներգերով: Տիկին Ալիս Կարապետյանը նվագում է երկու կտոր Ա. Խաչատրյանի «Փայանն» բալետից և արժանանում բուռն ծափերի:

Թամազա սրբազան պատրիարք հայրը, ընդհանուր խանդավառութեան մեջ, բաժակ է բարձրացնում Վեհափառ Հայրապետի կենաց:

Նորին ամենապատվութիւնը երկարորեն կանգ է առնում Վեհափառ Հայրապետի գահակալութեան 8 տարիների գործունեութեան վրա, նորին Ս. Օծութեանը ներկայացնելով որպէս Հայ Եկեղեցու զոհաբերվող, ազնվագույն և հավատավոր կաթողիկոսներից մեկին, որն իր կենդանութեան իսկ նվաճել է անմահութեան դափնեպսակը:

Սրբազան պատրիարք հայրը եղրակացնում է իր բաժակաճառը շեշտելով.

«Եթե թույլ տաք ինձի ըսելու, որ նորին Ս. Օծութեան հանդերձներն ալ լուսաշող են բոլոր անոնց համար, որոնք կզգան իր դերը, բոլոր անոնց համար, որոնք գիտեն, թե ինքը ի՞նչ կընեն այս Եկեղեցիի և հայ ժողովուրդի համար, եթե ըսեմ, թե իր պատմուճանը գեղեցիկ է և այդ պատմուճանի ծալքերն, այդ պատմուճանի զրացքներն կշողան ու կճառագայթեն մեր Եկեղեցիին և մեր ժողովուրդին պայծառ երազները, և եթե ըսեմ, թե ինք

և ունի բուռ մը զորութիւն, որովհետև ինչ որ կընան ընել, այդ բոլորը կընեն հանուն մեր Եկեղեցիին և հանուն մեր ժողովուրդի գոյատևան և հավերժացման, իրոք, ճշմարտութիւնը ըսած կըլլամ»:


Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակը առաջարկում է խմել Հնդկաստանի կառավարութեան, հնդիկ ժողովրդի կենացը, մաղթելով, որ ազատագրված Հնդկաստանն ու հրեդիկ ժողովուրդը ապրեն խաղաղութեան և ապահովութեան մեջ:

Այնուհետև նորին Ս. Օծութիւնը, բաժակ բարձրացնելով Եղիշե սրբազան պատրիարքի կենաց, շարունակում է իր խոսքը.

«Սիրելի՛ սեղանակիցներ.

Մենք Մեր Բանապահորդութեան վերջին կայանում ենք գտնվում: Մի քանի օրից բաժանվելու ենք ձեզանց և Դեհլիի վրայով վերադառնալու ենք տուն: Մեր տունը, դուր գիտե՛ք, Ս. Էջմիածինն է: Անշուշտ, այս երկու և կես ամիսների ընթացում, ուր որ Մենք գնացինք և ինչեք որ պատահեցին այդ առիթներով, ուրախ պատահաբներ իմարկե՛ք, դրանց բոլորի մասին խոսել կլինեն շատ երկար: Այս բոլոր նկարագրութիւնները դուք երեւի կհարողանաք կարգալ մտ ապագային մեր ամագում, որտեղ կարձանագրվեն այս բոլորը: Մենք կուզենք այս պահին մի խոսք ևս ասել. ուզում ենք հիշել և ընդգծել այն դերը, որը կատարեց նորին Ամենապատվութիւն Տ. Եղիշե Պատրիարքը, Մեր այս Բանապահորդութեան ընթացին ընդհանրապես, սկսած բնականաբար Ս. Երուսաղեմից: Պետ է Մենք անկեղծորեն ասենք ձեզ, թե այս ամբողջ Բանապահորդութեան հեղինակը Եղիշե պատրիարքն է, որովհետև նրա երթարկան և սիրալիբ հրավերն էր Մեզի ուղղված, որ զՄեզ ամբողջ Երուսաղեմ, որտեղ մնացինք ավելի քան 20 օր: Եվ այդ օրերը եղան բախտառո՞շ՝ մեր Եկեղեցու և ժողովրդի ներկա կյանքի համար:

Հատկապես երկու հանգամանք ուզում ենք ձեր ուշադրութեան հանձնել: Առաջինն այն է, թե Ս. Երուսաղեմում Մեր այս այցելութիւնը առիթ ընծայեց Մեզ հաշտութեան կնքելու Կիլիկյան Աթոռի հետ, և Մենք շատ երջանիկ եղանք, երբ նորին Կաթողիկոս ընդունեց Մեր հրավերը, եկավ Երուսաղեմ և մենք եղբայրութեան սիրտ ողջագաւառումով, վերջ տվեցինք այն ըզբախտ ազնապէս, որ ծայր էր ավել յաթր տարիներ առաջ, և որի հետևանքները Մենք տեսնում և զգում էինք, թե հետզհետե դառնում են վտանգավոր մեր բոլորի համար, առհասարակ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համար: Այս վտանգի առաջքը առնելու պարտականութիւնը ամենից առաջ Մերն էր: Ս. Էջմիածինը ամենայն հայց սուրբ և աստ-



Վերահիտ Հայրապետը Կալկաթայի հայրց Դպրոցի օրինորդաց վարժարանի աշակերտուհիների և մանկապարտեզի սանիկների հետ

վածային կենտրոնն է մեր Եկեղեցու: Հենց այս հանգամանքը Մեր ուսերին պարտակա- նություն էր դնում վերջ տալ այս տագնապին: Մենք այս հաշտությունը վաղուց էինք հե- տապնդում: Վերջին տարիներին մի քանի փորձեր կատարվել էին Մեր կողմից: Այս ան- գամ, Մեր իրձը իրականացավ և վերականգ- նելից Հայ Եկեղեցու միությունը:

Սիրելի՛ սեղանակիցներ, եկեղեցական և ազգային մի մեծ գործ ևս, որ նույնպես հա- շտությանը պսակվեց, ծրուսադեմի Ս. Հա- ռություն Տաճարի վերանորոգության հարցն է: Այս մեծ գործի կենտրոնում կանգնած է Նորին Սրբազնություն Նղիշե պատրիարքը իր հզոր կամով, իր պայծառ իմացականու- րյամբ և աշխատանքի իր անսպառ կորովով, և, թույլ տվեք ավելացնել՝ իր անմրցելի ի- մաստությունը: Եվ քանի խոսքը եկավ հատ- կանշելու Նորին Սրբազնության անձնավո- ռությունը, կուզենայինք ավելացնել հիմնա- կան մի գիծ ևս, որ տիրական է Նղիշե պատ- ռիարքի անձնավորության մեջ: 'Իս նրա հայի ամուս և պառաժայ ոգին է: Նղիշե պատրիարքը ամեն բանից վեր, իր ամբողջ էությունը, հարազատ ու վավերական հայ մարդ է, ևս Աղթամարի չափ հայ է:

Մտտենում է այն պահը, որ մեզ բաժանելու է: Մենք ուղեորվելու ենք դեպի Մայր Աթոռ, իսկ Ձերդ Ամենապատվությունը՝ դեպի Երու- սաղեմ: Այս հուզիչ պահին, թույլ տվեք, սի- բելի՛ սրբազան եղբայր, մի անգամ ևս Մեր գոհունակությունը հայտնելու այն բուրբի համար, որ 'Իս իրագործեցիք Մեր ամբողջ այս ճանապարհորդության ընթացքին: Շնոր- հակալություն Ձեզ:

Մենք պետք է Մեր անկեղծ գոհունակու- րյունը հայտնենք և շնորհակալությունը նաև այն սիրալիք ընդունելության համար, որ դուք կազմակերպեցիք, սիրելի՛ հեղինակայեր, Մեր այս հովվապետական այցելության առ- թիվ:

Մենք տեսնում ենք և զգում այն հավա- տարմությունը և սերը անսահման, որ հայ ժողովուրդն ընդհանրապես ունի դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, թե՛ Հայաստանից ներս, և թե՛ Հայաստանից դուրս: Սա մի մեծ երե- վույթ է մեր Եկեղեցու և մեր ազգի ներկայի և ապագայի համար: Սա նշանակում է, թե հայ ժողովուրդը հոգով առողջ է և իր պատմու- րյան և իր նախնիների ոգով է ապրում, հա- կառակ այլևայլ երբեմն մեզ տկարացնող ու շփոթեցնող պայմանների: Արտասահմանում ամեն տեղ այդ նույն վերաբերմունքը տե- սանք մեր հավատացյալ ժողովրդի ծոցում: Այդպես եմ նաև դուք, սիրելի՛ հեղինակայեր, դուք ժողագործներ եմ մեծ և փառավոր շու- ղայիցիների, որոնք այս հեռավոր ափերին,

հարյուրավոր տարիներ շարունակ, նույն հոգով են ապրել: Նույնն են նաև մեր հոգի- ները:

Մենք նշմարիտ գոհունակությամբ լսեցինք մեր բուրբի կողմից արտասանված խոսքերը, խոսքերը պր. Պետրոս Ալեքսյանի և արժանա- պատիվ Տ. Պողոսի, որոնք արտահայտու- րյուններն էին մեր բուրբի:

Այժմ բաժանման պահը մտտենում է և Մենք գուցե այլևս նման սեղանների շուրջ միասին լինելու առիթը չունենանք:

Բայց Մենք մտածում ենք այսպես. Հայոց կաթոլիկոսը մի անգամ որտեղ որ ռաֆ է դնում, նույնիսկ էթե Նա մարմնապես հեռա- նա այդտեղից, Նրանից մի բան պետք է մնա այդ տեղում, այդ հողի վրա: 'Իս ոգեկան մի գորություն է, որ գալիս է Ս. Էջմիածնի ասա- վածային խորհրդից և Ամենայն Հայոց Հայ- րապետության անմահ գաղափարից:

Մնացե՛ք խաղաղությամբ, Տերն ընդ ձեզ: Ամենա՛:

Հրատեղիտի այս հուզիչ ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահ- պանիչ»-ով, գիրքերվա ժամը 12.30-ին:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեկտեմբերի 12—14, հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Կալկաթայի, Մադ- րասի և Սաիդարաբադի եկեղեցական վարչու- թյունների, Հայկական ընկերակցության, Հայ ակումբի վարչության անդամներին առան- ձին-առանձին, և խոսել տեղական բնութի ազգային-եկեղեցական հարցերի շուրջ:


Նույն օրերին, իր ազատ ժամերին, Նորին Ս. Օծուխյունն այցելում է շքախմբի իր ան- դամների հետ, Կալկաթայի տեսարժան վայ- րերը, հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ մատու- ող՝ 'Ինգրայի հայոց գերեզմանատանը, կա- ոուցված 1910 թվականին:

ԹԵՅԱՍԵՂԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Դեկտեմբերի 13-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 6-ին, Հայկական ընկերակցությունը, իր ակումբի գեղեցիկ այգում, Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարքի պատ- վին կազմակերպում է թեյասեղան:

Հնդկաստանի այս Հայկական ընկերակ- ցությունը, որն այժմ ունի 82 անդամ, կազմը- վել է 1854 թվականին, նպատակ ունենալով ամբողջ Հնդկաստանում ազգային-եկեղեցա- կան շահերի պաշտպանությունը: Հայկական ընկերակցությունը վերակազմվել է 1958 թվականին և նրա ծրագիր-կանոնագիրն ար- ձանագրված է ու ճանաչված հնդկի կառա- վարության կողմից: Ընկերակցությունը մաս-



Վեհախառ Հայրապետը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի ուսանողության հետ

նաճյուղեր ունի Բոմբեյում, Մադրասում և Դելհիում:

Մադրասի հայոց եկեղեցին և կալվածները, որոնք ավելի քան կես դար մնացել էին օտար փաստաբանների ձեռքում և անխնա շահագործվում էին, անցան Հայկական ընկերակցության հսկողության տակ, 1962 թվականի դեկտեմբերից, Մադրասի բարձրագույն ատյանի որոշմամբ:

Հայկական ընկերակցությունն ունի 9 հոգուց բաղկացած վարչություն:

Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր ժամանումը ակումբ ողջունվում է անդամների և հյուրերի ջերմ ծափերով:

Բացօդյա, կանաչազարդ այգում, սեղանների շուրջ տեղ են գրավել ավելի քան 100 հոգի, անդամներ և հրավիրյալներ իրենց ընտանիքներով:

Ընդունելությունը բացված է հայտարարում Հայկական ընկերակցության ժրաշան քարտուղար պր. Կառո Մարտիր:

Պր. Ծալյի Մարտիրոսյանն իր գրավոր ուղերձում համառոտակի ներկայացնում է Հայկական ընկերակցության նպատակն ու գործունեությունը, խնդրելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Բոմբեյի հայոց եկեղեցական վարչության անդամ ղեկտ. Ա. Եղիազարյանը ընթերցում է այս առթիվ գրած իր բանաստեղծությունը.

«ՁՈՆ ԱՐԱՐԱՍՏԻՆ

Տարերբի դեմ պայքարեցիր փոթորկահույզ
քո անցյալով,
Դարերի հետ դու ապրեցիր Արարատյան
կանաչներում,
Դու ալեզարդ պահպանը Հայոց երկրի,
մեր երազի,
Հաստատ մնաց պատվանդանդ
օրհնությամբը աստվածային:
Գուրգուրանքով կը պահենք մենք անունը
քո համբուրելի,
Մեր սրբազան լեռ հայկական,
հաղորդություն հայ սրտերի:
Պանդուխտ հայը քո տեսիլքի ներշնչումով,
վսեմագույն,
Անպարտ է միշտ այս աշխարհի շարքերի դեմ
անագորույն:

Քո անունը հավերժացնող պանդուխտ հայերը
Բոմբեյի,
Տարիների իրենց արդար աշխատանքի
պտուղներով,
Կոթողեցին աշտարակի նման շենքը
հիշատակիդ,
Քո անունով, քո խորհրդով, հայ մնալու
սուրբ խոստումով:

Ընդունելության վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և գնահատելով Հայկական ընկերակցության նպատակն ու գործունեությունը, օրհնում է բոլոր անդամներին, մաղթելով հաջողություն նրանց ազգօգուտ ձեռնարկներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Դեկտեմբերի 13-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 7.30-ին, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը, շքախմբի ընկերակցությամբ, այցելում են Կալկաթայի հայոց ակումբը:

85 տարի է ինչ գոյություն ունի հայոց ակումբը Կալկաթայում: Ակումբի նպատակն է հայ ոգին, հայ մշակույթի սերը, Հայ Եկեղեցու ոգին և ազգային ավանդությունները վառ պահել Կալկաթայի հայ համայնքի մեջ: Ակումբը ունի 90 երկսեռ անդամ:

Հայոց ակումբը ժամադրավայրն է նաև Մայր Հայրենիքից և Սփյուռքից Կալկաթա այցելող մտավորականների, արվեստագետների, գիտնականների հետ հանդիպման:

Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր սիրելի ներկայությունը, հանուն ակումբի վարչության և անդամների, ողջունում է նախագահ պր. Պետրոս Ալեքսյանը:

Վեհափառ Հայրապետը ողջունում է հայ մշակույթին նվիրված այս ակումբի գործունեությունը, կանգ առնելով մեր վերածնված Մայր Հայրենիքում ծաղկող սքանչելի մշակույթի վրա, հատկապես գրականության, նկարչության և երաժշտության բնագավառներում: Նորին Ս. Օծուխյունը կոչ է անում բոլորին՝ սիրով ու ջերմությամբ հաղորդակից լինել Մայր Հայրենիքի մշակույթի արժեքներին:

Ջերմ հյուրասիրությունից և մտերմիկ զրույցից հետո, Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հրաժեշտ է առնում ակումբի անդամներից, լավագույն տավորություններով:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐՋԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Դեկտեմբերի 13-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամների ընկերակցությամբ, այցելում է Կալկաթայի հայոց մարզական ակումբը, ուր բացօդյա, կանաչազարդ դաշտում, վրանների տակ և սեղանների շուրջ հավաքված, Կալկաթայի

րկսեռ հայ երիտասարդությունը ջերմորեն է
համակրում հարգարժան հյուրերին:

Հանուն մարդական ակումբի երիտասարդ
անդամների, Վեհափառ Հայրապետին և սըր-
ազան պատրիարք հոր շնորհաբեր ներկա-
ությունը ողջունում է մարգիկ Վարուժան
Քարաբյուրյանը:

Պր. Մարգար Մարգարյանը, հանուն Մար-
դական ակումբի վարչության, ողջունի իր
անդամներին և անդրադառնում է նաև ակումբի
սպասարաններին և գործունեության, հայ մար-
դիկներին ձեռք բերած հաջողություններին
Վարչության մարդական կյանքում:

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք է
առնում Վեհափառ Հայրապետը և ռատոլո-
գիայի առողջ մարմնի մեջ» թեմայի շուրջ գե-
ղեցիկ ճառով վեր է հանում սպորտի դերը
մարմնի առողջ դաստիարակության գոր-
ծում:

Վեհափառ Հայրապետի ելույթը հաճախ
ընդհատվում էր բուն ծափերով, երբ նորին
Ս. Օծությունը խոսում էր Հայաստանում
սպորտի նկատմամբ մեր երիտասարդության
ունեցած ջերմ հետաքրքրության և հայրենի
կառավարության ցույց տված հոգածության
մասին դեպի սպորտը:

Խանդավառ մթնոլորտում հյուրասիրվելուց
հետո, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է
առնում Հայ մարդական ակումբից, սրտագին
տպավորություններով:

**ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԹԵՑԱՍԵՂԱՆԸ**

Դեկտեմբերի 14-ին, շաբաթ, երեկոյան
ժամը 8-ին, Կալկաթայի հայոց եկեղեցական
վարչությունը Վեհափառ Հայրապետի պատ-
վին կազմակերպում է ընդունելությունը Նա-
զարեթի եկեղեցու ընդունարանում:

Որոշյալ պահին ժամանում է Վեհափառ
Հայրապետը, ընկերակցությամբ Տ. Կոմի-
տաս սրբազանի, Տ. Դավիթ և Տ. Արսեն վար-
դապետներին և պր. Ա. Հատիտյանին:

Ընդունելության ժամանակ, հանուն եկե-
ղեցական վարչության, Վեհափառ Հայրապե-
տի օրհնաբեր ներկայությունը ողջունում է
նախագահ պր. Դիմիտրիոսը:

Հյուրասիրվելուց հետո, խոսք է առնում
Վեհափառ Հայրապետը և իր գոհունակու-
թյունն է հայտնում Կալկաթայի հայոց ազ-
գային-եկեղեցական կյանքի օրինակելի այս
կազմակերպվածության, եկեղեցական վար-
չության և նրա աշխատանքների, Մայր
Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ ցույց տրված
որդիական և ջերմ հարգանքի համար և ապա
ավելի քան կես ժամ տևող իր ճառի մեջ անդ-
րադառնում է Մայր Աթոռում կատարվող շի-
նարարական, մշակութային, թեմական գոր-

ծունեության վրա, խրախուսիչ տեղեկու-
թյուններ հաղորդելով նաև Մայր Հայրենիքի
նվաճումների մասին:

Իր ելույթի վերջում, Վեհափառ Հայրապե-
տը օրհնում է Կալկաթայի եկեղեցական
վարչության անդամներին և նորանոր հաջո-
ղություններ է ցանկանում նրանց:

**ՊԱՏՐԻԱՐԶԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ
ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ**

Դեկտեմբերի 15-ին, կիրակի, Կալկաթայի
հայոց Նազարեթի եկեղեցում, առավոտ-
յան ժամը 10-ին, հանդիսավոր սուրբ պա-
տարագ է մատուցում ամենապատիվ Տ. Նդի-
շե սրբազան պատրիարքը:

Ս. Սեղանին սպասավորում են Տ. Դավիթ
և Տ. Արսեն վարդապետները, Տ. Պողոս և Տ.
Մաշտոց քահանա հայրերը:

Ժամը 10.30-ին ժամանում է Վեհափառ
Հայրապետը և առաջնորդվում եկեղեցի:
«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատա-
րագից սրբազան պատրիարքը «Հաւատք քո
կեցուցին դեզ» ընթացումով:

Նորին ամենապատիվությունը հրաժեշտի
իր քարոզում շեշտում է ընդհանրապես
մարդկային կյանքում հավատի անհրաժեշ-
տությունը և ի մասնավորի ծանրանում է
Հնդկաց աշխարհի այս հեռավոր ասիայի վրա
մեր ժողովրդի կատարած եկեղեցաշեն, մշա-
կութային գործունեության վրա՝ որպես կեն-
դանի արտահայտությունը հայի անմեռ հա-
վատի և կենսունակության:

Այնուհետև քարոզիչ սրբազանը վեր է հա-
նում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի
Հնդկաստան կատարած պատմական այցե-
լուծության ազգային-եկեղեցական նշանակու-
թյունը, որպես խթան այդ հավատի էլ՝ ավելի
արժարժման և տևականության:

Քարոզի վերջում սրբազան պատրիարք
հայրը օրհնում է ժողովրդին, եկեղեցական
վարչության և ընդունելության հանձնախմբի
անդամներին՝ Վեհափառ Հայրապետի և իր
հանդեպ ցույց տրված ջերմ հոգատարության
և սրտագին ընդունելության համար:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ
Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը
առաջնորդվում են եկեղեցու ընդունարանը,
որտեղ շատեր աջահամբույրով բարի ճանա-
պարհ են մաղթում Վեհափառ Հայրապետին
և սրբազան պատրիարք հորը:

Ժամը 3-ին, Գրանդ հոթել հյուրանոցում,
տրվում է ողջերթի ճաշկերույթ, ավելի քան
100 հոգու մասնակցությամբ:

Սրբազան պատրիարք հայրը բաժակ է
բարձրացնում բոլոր ներկաների անունից
Վեհափառ Հայրապետի կենաց, բարի ճանա-
պարհ մաղթելով նրան դեպի Մայր Աթոռ:

Վեհափառ Հայրապետը բաժակ է առաջարկում Հնդկաց կառավարության և ժողովրդի կենաց:

Սրբազան պատրիարք հոր կենաց բաժակ է բարձրացնում «էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, դեպի Երուսաղեմ ողջերթի բարեմադթություններով:

Վրաստանի հայոց առաջնորդ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, ողջունելով բոլոր ներկաներին հանուն Վրաստանի հայության, շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար:

Հրաժեշտի այս վերջին սեղանին ջերմ ելույթներ են ունենում, երախտագիտական խորունկ զգացումներով, Տ. Դավիթ վարդապետը, պարոնայք Պետրոս Ալեքսյանը, Հայկ Նահարյանը և Ա. Կյուզելյանը:

Վերջին անգամ խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, Իր շնորհակալությունն է հայտնում և հայրապետական ջերմ օրհնություններն է բաշխում Հնդկաստանի հայության սրտագին, բացառիկ ընդունելության և հյուրասիրության համար և կոչ է անում բոլորին՝ ուխտի գալ Մայր Աթոռ Ս. էջմիածին և մեր վերածնված Հայրենիքը՝ Սովետական Հաստան:

Արցունք կար բոլորի աչքերում, ուրախության, հպարտության, բաժանման արցունք:

Վերջին ըոպեններն են: Կոմիտաս սրբազանի կատարմամբ, «Տէր, կեցո Դու զհայս» մաղթերգը հնչում է սրահում, վեհ ու տիրական:

Բոլոր ներկաները, աջահամբույրով ու սրտագին բարեմադթություններով, բարի ճանապարհ են մաղթում Վեհափառ Հայրապետին, սրբազան պատրիարք հոր և շքախմբի անդամներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՐԸ ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՌՆՈՒՄ ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Դեկտեմբերի 15-ին, կիրակի, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը Կալկաթայի Դամ-դամ օդանավակայանից մեկնում է Դելհի, էյր Ինդիա ընկերության ինքնաթիռով:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում են Կալկաթայի հայ համայնքը, եկեղեցական վարչության և ընդունելության հանձնախմբի անդամները, բոլոր հայ կազմակերպությունների անդամները, Մարդասիրական ճեմարանի և Դավթյան աղջկանց վարժարանի ուսուցչական կազմը և ուսանողությունը, բույր եկեղեցու հոգևորականներ, տեղական իշխանության ներկայացուցիչներ և թղթակիցներ:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում են նաև Կալկաթայում սովետական ընդհանուր հյուպատոս պր. Վոյնովը և հյուպատոսարանի անձնակազմի անդամները:

Ժամը 6.30-ին օդանավակայան են ժամանում Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հայրը և շքախմբի անդամները: Նույն գիշեր, ժամը 10-ին, դեպի Բեյրութ է մեկնում Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք հայրը:

Հրաժեշտի վերջին ըոպեններն են:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է դեպի ինքնաթիռ, ներկաների ծափահարությունների և բարեմադթությունների ներքո, օրհնելով բոլորին:

Մարդասիրական ճեմարանի ուսանողները հուզումով երգում են.

Ձերկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հոր,
Տեր, անսասան պահիր դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:

Սրտառուչ և անմոռանալի է Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր ողջագուրումը ինքնաթիռի մեկնելուց քիչ առաջ:

Ժամը 7-ին, ինքնաթիռը բարձրանում է երկինք, ուղղություն վերցնելով դեպի Դելհի: Վեհափառ Հայրապետին մինչև Դելհի ընկերակցում են, բացի շքախմբի մնալուն անդամներից, ընդունելության հանձնաժողովի անդամներ պարոնայք Կարո Մարտիրը, Նևտոն Բարսեղյանը և Արամայիս Աղամյանը:

Գիշերվա ժամը 10.30-ին, նույն հանդիսությունում, Կալկաթայի հայ գաղութը ճանապարհում է պատրիարք սրբազան հորը, որը Բեյրութ է մեկնում B. O. A. C. ընկերության ինքնաթիռով:

Անցան արագ, երազի նման, բայց անմոռաց, բովանդակալից, Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր Հնդկաստան ուղևորության օրերը:

Պատմական այս այցելության հիշատակն ու խորհուրդը վառ կմնան ինչպես հանդիսությանց ներկա յուրաքանչյուր հայ մարդու մտքում, այնպես էլ Հնդկաստանի հայության նորագույն պատմության էջերում:

Բարի ճանապարհ սիրելի Վեհափառ Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին:

Բարի ճանապարհ նաև սիրելի սրբազան պատրիարք հոր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԵԼՀԻՈՒՄ

Դեկտեմբերի 15-ին, կիրակի, գիշերվա ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Դելհի և առաջնորդվում Աշոկա հյուրանոցը:

Դելհիի Փալամ օդանավակայանում Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում են Հնդկաստանի կենտրոնական կառավարության պարենավորման մինիստր պր. Ա. Մ. Քոմասը, արտաքին գործերի մինիստրության լիազոր ներկայացուցիչ պր. Լալը, սովետական դեսպանատան առաջին քարտուղար պր. Քոչարյանը, դիվանագիտական մարմնի ներկայացուցիչներ և թղթակիցներ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ԼԱՅՐԱՊԵՏԻ

Դեկտեմբերի 16-ին, երկուշաբթի, հետմիջօրեի ժամը 2.30-ին, Հնդկաստանում կիրանանի դեսպան պր. Մուհամեդ Հաֆեզը, Դելհիի լիբանանյան դեսպանատանը, Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպում է ընդունելություն, որն անցնում է ջերմ, մտերիմ մթնոլորտում:

Ճաշկերույթին ներկա էին Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները և հայրապետական ընդունելության հանձնախմբի անդամները պր. Կարո Մարտինը, Նևտոն Բարսեղյանը և Արամայիս Ադամյանը:

Ընդունելության ժամանակ Հայոց Վեհափառ Հայրապետի և պր. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Նորին Ս. Օծուխյունը հրաժեշտ է առնում շնորհակալություն հայտնելով պր. դեսպանին սիրալիք ընդունելության և հյուրասիրության համար, օրհնելով կրանանի հյուրընկալ հողը, հայրենասեր ազնիվ ժողովրդին և պր. դեսպանին ու նրա հյուրասեր ընտանիքին:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԿԻՆՈԺԱՊԱՎԵՆԻ ՑՈՒՑԱԳՐՈՒՄ

Դեկտեմբերի 16-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը, երեկոյան ժամը 6.30-ին, Դելհիի սովետական դեսպանատան մշակութային սրահում, դասախոսություն է կարդում «Մեր եկեղեցական կյանքը Հայաստանում և Սփյուռքում» թեմայի շուրջ, որը լրսվում է հետաքրքրությամբ:

Դասախոսությանը ներկա են լինում, բացի քրիստոնեական քույր եկեղեցիների պետերից, հնդիկ մտավորականներ, նաև Հնդկաստանի կենտրոնական կառավարության գիտական և մշակութային գործերի և լուսավորության մինիստր, հայտնի գիտնական պրոֆ. -դոկտ. Հումայուն Քարիրը և տիկինը, կառավարության պարենավորման մինիստր Ա. Մ. Քոմասը, խորհրդարանի նախագահ Հուբիմ Սինգը, Դելհիի պետական համա-

լսարանի ուսուցիչ, Հնդկաստանի ավագ դատավոր պր. Փ. Մինհան, խորհրդարանի անդամ և անվանի պատմաբան դոկտ. Դարա Ջանդը և ուրիշներ:

Հանդիսության բացումը կատարում է սովետական դեսպանատան պատասխանատու քարտուղար Միխայել Քոչարյանը, որը բարի գալուստ է մաղթում Հայոց Վեհափառ Հայրապետին և ծանոթացնում բոլոր ներկաներին հետ:

Նորին Ս. Օծուխյան շահեկան դասախոսությունից հետո, ցուցադրվում է «Էջմիածին» կինոժապավենը, որը դիտվում է շատ մեծ հետաքրքրությամբ:

ՄԵԿՆՈՒՄ ԴԵՊԻ ՄՈՍԿՎԱ

Դեկտեմբերի 17-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը, «ՏՈՒ—114» սովետական ինքնաթիռով մեկնում է Մոսկվա, իր շքախմբի հետ:

Դելհիի Փալամ օդանավակայանում Հայոց Վեհափառ Հայրապետին ճանապարհում են Հնդկաստանի կենտրոնական կառավարության պարենավորման մինիստր պր. Մ. Քոմասը և հարգելի տիկինը, արտաքին գործերի մինիստրության ներկայացուցիչ պր. Լալը, Դելհիում սովետական դեսպանատան առաջին քարտուղար Մ. Քոչարյանն իր աշխատակիցներով, քույր Եկեղեցու պետեր, Հընդկաստանի հայերի հայրապետական ընդունելության հանձնաժողովի անդամներ և Մալաբար Եկեղեցու բազմաթիվ հավատացյալներ ու թղթակիցներ:

Նորին Ս. Օծուխյունը ինքնաթիռ բարձրանալուց առաջ, օրհնում է Հնդկաստանի հյուրընկալ հողը, հնդիկ բարեխնամ կառավարության անդամներին և հնդիկ ազնիվ ժողովրդին, սրտագին շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և բարձր ուշադրության համար:

Հայոց Վեհափառ Հայրապետը, Հնդկաց աշխարհից հրաժեշտ առնելուց առաջ, ողջունի և շնորհակալության հետևյալ հեռագրերն է հղում.

«Հնդկաստանի Հանրապետության Նախագահ Նորին Վսեմություն դոկտ. Ռադհակիշնային

Թողնում եմ Հնդկաստանը ամենաուրախ տպավորություններով և հայտնում Մեր ջերմ, սրտագին բարեմաղթությունները Ձեզ ու Ձեր ժողովրդին և աղոթում Հնդկաստանի բարօրության և բարգավաճման համար:

Մեր օրհնությունների հետ, Մեր անկեղծ երախտագիտությունն ու շնորհակալությունն ենք հայտնում այն բոլոր ընդունելությանը

և ուշադրության համար, որոնք եղան Ձեր և Ձեր իշխանությունների կողմից, Մեր Հրեղ-կաստանում գտնված օրերին:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

17 դեկտեմբերի 1963 թ.

Դ Ե Լ Հ Ի »:

«Նորին Գերազանցություն պրեմիեր-մինիստր Ջավահարլալ Ներուին

Թողնում ենք Հնդկաստանը անմոռանալի հուշերով և ցանկանում ենք Ձերդ Վսեմու-թյան հայտնել Մեր ամենաանկեղծ շնորհա-կալությունը Մեր օրհնությանց հետ այն բո-լոր ընդունելությանց համար, որոնք եղան Ձեր և Ձեր իշխանությունների կողմից, Ձեր հյուրընկալ և սքանչելի երկիրը Մեր այ-ցելության ժամանակ:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

17 դեկտեմբերի 1963 թ.

Դ Ե Լ Հ Ի »:

**Վ Ե Լ Ա Փ Ա Ռ Ի Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ը
Ժ Ա Մ Ա Ն ՈՒ Մ Է Մ Ո Ս Կ Վ Ա**

Դեկտեմբերի 17-ին, երեքշաբթի, յոթժամ-յա հանգիստ ու ապահով թռիչքից հետո, ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանում է Մոսկվայի միջազ-գային Երեմեմտև օդանավակայանը:

Վեհափառ Հայրապետին դիմավորում են, Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ Տ. Պարզև եպիսկոպոս Գևորգյանի գլխավորությամբ, Տ. Նաչատուր ավագ քահանա Հարությունյա-նը, Ս. Հարությունյան եկեղեցու եկեղեցական խորհրդի անդամներ և հավատացյալներ:

Օդանավակայանում Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում է նաև, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիի անունից, Տ. Բիմեն միտրոպոլիտը:

Հանուն ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի, Ամենայն Հայոց Վե-հափառ Հայրապետին ողջունում են խորհրդի անդամներ Ռժանովը և Սոլովյովը:

Վեհափառ Հայրապետին դիմավորում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կարլեն Դալլաբյանը:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով առաջնորդվում է Լենինգրադ-սկայա հյուրանոցը, ուր մնում է մինչև Մայր Աթոռ վերադարձը, դեկտեմբերի 26-ը:

**Ը Ն Դ ՈՒ Ն Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Պ Ա Տ Ի Վ
Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց Վ Ե Հ Ա Փ Ա Ռ
Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ի**

Դեկտեմբերի 19-ին, հինգշաբթի, առա-վոտյան ժամը 12-ին, ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտա-մունքների գործերի խորհրդի նախագահ Ա. Պուզինը բարի գալստյան ընդունելություն է կազմակերպում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատվին, արտասահմանից Մայր Աթոռ վերադարձի ճանապարհի վրա:

Ընդունելությանը, որն անցնում է ջերմ մթնոլորտում, ներկա է լինում նաև Հայկա-կան ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կարլեն Դալլաբյանը:

**Ճ Ա Շ Կ Ե Ր ՈՒ Թ Ի Պ Ա Տ Ի Վ
Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ի Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ի**

Դեկտեմբերի 20-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 5-ին, Լենինգրադսկայա հյուրանոցում, Մոսկվայի հայոց հոգևոր հովիվությունը և ե-կեղեցական վարչությունը, ի պատիվ Վեհա-փառ Հայրապետի, կազմակերպում են ճաշ-կերույթ:

Ընդունելության ներկա են լինում ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախա-գահ Ա. Պուզինը, տեղակալ Ռյազանցովը, խորհրդականներ Սոլովյովը և Ռժանովը:

Ընդունելության ներկա է լինում նաև Հայ-կական ՍՍՌ Մինիստրների սովետին առըն-թեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախա-գահ Կարլեն Դալլաբյանը:


Ճաշկերույթի ժամանակ, որն անցնում է ջերմ և խանդավառ մթնոլորտում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, պր. Ա. Պու-զինը և պր. Կ. Դալլաբյանը ողջունին և բարի գալստյան ճառեր են փոխանակում:

**Ա Յ Յ Ե Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Մ Ո Ս Կ Վ Ա Յ Ի Ե Վ Հ Ա Մ Ա Յ Ն
Ռ ՈՒ Ս Ա Ս Ա Ն Ի Պ Ա Տ Ր Ի Ա Ր Զ Ն ՈՐ Ի Ն
Ս Ր Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ա Լ Ե Ք Ս Ի Ն**

Դեկտեմբերի 21-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, այցելում է Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրի-արք Նորին Սրբություն Ալեքսիին, Մոսկվայի ռուսաց եկեղեցու Պատրիարքարանում:

Սրտագին մթնոլորտում երկու եկեղեցիներ-րի հոգևոր Պետերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 22-ին, Լենին-գրադի Նիկոդիմ միտրոպոլիտը, հանուն Ալեքսի Պատրիարքի, փոխադարձ այցելու-



Կալկաթայի հալոց Մարդասիրական ճեմարանի նոր շենքի մակետը

թյուն է տալիս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Լենինգրադական հյուրանոցում:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Դեկտեմբերի 22-ին, կիրակի, առավոտյան ժամը 11-ին, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում, պատարագում է հոգեշնորհ Ս. Արսեն վարդապետ Բերբերյանը:

«Հայր մեր»-ից առաջ խոսք է անում Ս. Պարզե եպիսկոպոսը և ջերմորեն ողջունում Վեհափառ Հայրապետի վերադարձը:

Այս քարոզում է Վեհափառ Հայրապետը, նախ Սփյուռքի հայության եղբայրական ողջույնները հաղորդելով բոլոր ներկաներին, ապա խոսելով արտասահմանում կատարած իր հովվապետական այցելության ազգային-եկեղեցական և հայրենասիրական նշանակության մասին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ

Դեկտեմբերի 26-ին հինգշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, շուրջ երեք ամսվա բացակայությունից հետո, ողջամբ վերադառնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, իր շքախմբի հետ:

Երևանի օդանավակայանում նորին Ս. Օծուկյանը ջերմորեն դիմավորում են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը:

նր, ներքին թեմերի առաջնորդները և թեմական խորհուրդների անդամները, բահանայից դասը և հավատացյալների հոծ բազմություն:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Ողջույնի, բարի գալստյան խոսքերից և աջահամբուլրից հետո, Վեհափառ Հայրապետը, օրհնելով բոլոր ներկաներին, առաջնորդվում է Մայր Աթոռ:

Տոնականորեն զարդարվել է Մայր Աթոռը: Ամպհոյանու տակ, եկեղեցական թափորով, նորին Ս. Օծուկյանն առաջնորդվում է Մայր Տաճար, ուր Ս. Սահակ աբեպիսկոպոսը, հանուն միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և բոլոր ներկաների, սրտագին բարի գալուստ է մաղթում:

Վեհափառ Հայրապետն իր պատասխան խոսքում ողջունում է բոլորին և անդրադառնում արտասահմանում կատարած իր այցելության և ուղևորության արդյունքներին, հաղորդելով նաև Սփյուռքի հայության ողջույնները Մայր Աթոռի միաբանության և Մայր Հայրենիքի հայ ժողովրդին:

Վերջում, Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում սրտագին և ջերմ այս ընդունելության համար և օրհնում ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը, Մայր Աթոռն ու միաբանությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան:

Նորին Ս. Օծուխյան «Պահպանիչ»-ով վերջ է գտնում օրվա հանդիսությունը:
 Բարի գալուստ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետի Հնդկաստան կատարած հովվապետական այցելության առթիվ, Հնդկաստանի կենտրոնական կառավարության պարենավորման մինիստր պր. Ա. Մ. Քոմար, Կալկաթայի հայոց եկեղեցական վարչությանն ուղղած իր դեկտեմբեր 26 թվակիր նամակում, գրում է.

«Նորին Ս. Օծուխյուն վաղգեն Ա-ի այցելությունը մեզ պատճառեց մեծագույն հաճույքը՝ ողջունելու նրան Դելհիում:

Մենք շատ հաճելի հիշատակներ ենք պահում Նորին Ս. Օծուխյան և նրա շքախմբի այցելությունից:

Ես մասնավորապես շատ երախտապարտ եմ Նորին Ս. Օծուխյանը, իմ տանը և իմ ընտանիքին տված նրա շնորհաբեր այցելության և օրհնությունների համար:

Նորին Սրբությունը խորունկ և մնայուն տպավորություն է թողել բոլոր նրանց վրա, որոնց նա հանդիպելու առիթն է ունեցել, մասնավանդ Քերալայում»:

Բովսարեստից Քրիստի Օդաբաշյանը, Վեհափառ Հայրապետի շորորդ ուղևորության առթիվ գրի է առել և Նորին Ս. Օծուխյանն է ձոնել հետևյալ բանաստեղծությունը.

«Հ Ա Վ Ե Ր Ժ Ա Կ Ա Ն

Արևներն հսկա
 Այս տիեզերքին
 Հավերժ կը բռնկին,
 Որ Լույսը մնա:

Այգերուն ընծա
 Կը ձոնե կայտառ
 Մոխակն իր քնար,
 Որ Երգը մնա:

Ինչպե՞ս կը խայտա
 Բուրաստաններուն
 Վարդը երփներփյան,
 Որ Գույճը մնա:

Ու կը ցուանա
 Շուրջը՝ ցնծագին,
 Ժպիտը կյանքին,
 Որ Սերը մնա:

Փառք տուր, որ շողա
 Լույսը սուրբ մտքին,
 Ծիգը բազուկին,
 Որ Գործն ալ մնա»:

ՀԱՅԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Ե. ԶՈՉԻՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Դեկտեմբերի 30-ին, երկուշաբթի, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանն ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Սեփանյանը:

Ջրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբյանը:

Ջրույցի ժամանակ, Վեհափառ Հայրապետը Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Ա. Քոչինյանին է հաղորդում Սփյուռքի հայրենակարոտ հայ ժողովրդի ողջուններն ու բարեմաղթությունները:

